

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Մինչև XVII դարը չի հանդիպում Դերսիմ անունը: Թուրքական տիրապետությունից հետո է, որ Մանանադիք, Քարիա և նույնիսկ Զրուան տեղանունների փոխարեն հանդես է դալիս Դերսիմը, որի մասին ժողովրդի մեջ պահպանվել էր պատմական հիմք ունեցող ավանդություն:

1604 թ. մի կողմից Շահ-Աբասն էր ամալացնում Արևելյան Հայաստանի շեն ու բարդավաճ ավաններն ու գյուղերը, իր հետ Պարսկաստան տանելով հայ բնակչությանը, մյուս կողմից Սինան փառայի դաշնակից ջալալիները ոչնչացնում էին Արևմտյան Հայաստանի մինչև Կարին հասնող տարածությունը: 1605 թ. դարնանը Կարինի, Խոջեկալի, Ակնա և Կամախի հայ բնակչությունը, սարսափահար՝ ջալալիների կոտորածներից և ավերակներից, լքում էր տուն-տեղ, ստացվածք և մերկ ու բոկոտն, անոթի ու ծարավ հեռանում իր ծննդավայրից և ապաստանում արևմուտյան իսահանգներում, օգնություն և բնակություն տեղ փնտրելով Պոլսո և Թրակիո շրջաններում:

Եվ ահա աղետի ու ողբերգության այդ թվականներին, հայրենիքից չհեռանալով հանդերձ, մյուս կողմից ջալալիների կողոպուտից և կոտորածներից զերծ մնալու համար, մի շարք շրջանների հայ բնակչությունը դիմում է կրոնափոխության: Այսպես, ասվում է, թե Քեշիշդաղի ստորոտից մինչև Սըրնգոր և Չարդախլիի ստորոտների հայ գյուղերը նախընտրում են կրոնափոխ լինել, բայց հայրենիքից չհեռանալ: Այդ գյուղերից են՝ Փշկըթաղ (Փրկաթաղ), Գալառիճ (Գալառիս), Քյարթաղ (Քարթաղ), Սըրնգոր, էսեսի, Սրբկաթաղ (Սրբաթաղ), Զորմես, Խախ, Սըլպուս (Սուրբ Լույս), Հանդեսի, Թիլ, Վարդան-շահ, Խաշլի, Մելիք-թաղ, Խորան-թաղ, Վերի-թաղ (ավեր), Վարի թաղ (ավեր), Թլխաս, Նորգեղ, Քյոշիկներ, Մեքեդիկներ, Կապրիշի, Վասկարիլ, Համտեսի, Զորխաս և այլն<sup>1</sup>:

<sup>1</sup> Գալառիճի և Քյարթաղի միջև ձիմին (ձեմբիմ) անունով թրքական դուղն ունեւ երկու եկեղեցի, մեկը դուղի մեջ (ավերակ), մյուսը՝ դուղի ծայրին՝ ս. Գևորգ անունով: Ձիմինցիք Խըղր-էլիաս (սուրբ Գևորգ) էին անվանում այն և ուխտի էին դնում այնտեղ: Դա աչքի հիվանդության և ջերմի բուժիչ սուրբ էր համարվում:

Սրանք մահմեդականացած այն հայ գյուղերն են միայն, որոնք պահպանել էին իրենց հայկական տնտեսները և ունեին մեկ կամ մեկից ավելի եկեղեցի՝ կանգուն կամ ավերակ, իսկ մահմեդականացած մյուս հայ գյուղերը, որոնք օտար անուններ էին ընդունել, նկարագրել ենք տեղագրական և ազգագրական բաժնում: Կրոնափոխ լինելով հանդերձ, դրանց բնակիչները շայրեցին կամ չքանդեցին իրենց հիկեղեցիները, այլ լքեցին միայն, սակայն չմոռացան:

Ի՞նչ դաշտային շրջանների հայությունն անկատարիւր այդ կերպ դասավորվեց, ապա լեռնայինների՝ Պողրին, Մնձուրին, Ավղերտին և Ղաղանդաղին, Սուրբլույսին, Սիմին, Տուփկին, Մալին ու Տավրոսին ապավինածների հակատարիւր այլ կերպ տնօրինվեց: Այստեղ է, որ սկսվում է ավանդությունը:

Ասվում է, թե ջալալիների կատաղությունից զերծ մնալու համար լեռնաշխարհի հայությունը որպեսզի որոշի իր դիրքը, սպասում էր շրջանի առաջնորդ բանիմաց և բաջարթուն Տեր-Սիմոն քահանայի վերադարձին, որն այդ թվականներին լեռնաշխարհից դուրս մասնակցելիս է եղել մի կրոնական ժողովի:

Տեր-Սիմոնը և իրեն ուղեկցող պաշտոնակիցները կրոնական ժողովից վերադառնալիս վերահասու լինելով օրվա ողբերգական վիճակին և որոշելով ամեն գնով և անվտանգ լեռնաշխարհ հասնել, առանց տատամսելու և ժամանակ կորցնելու որոշում են փոխել իրենց լեռնականի տարազն ու գլուխներին կապել մի-մի կանաչ փուշի և ճամփի ընթացքին իրենց ներկայացնել որպես ալեի քրդերի կրոնապետներ:

Անվտանգ հասնելով լեռնաշխարհ, Տեր-Սիմոնը ժողովի է հրավիրում իր թեմի կրոնական և քաղաքացիական ղեկավարներին և պարզելով օրվա դժնդակ կացությունը, առաջարկում է կրոնափոխություն, բայց փոխանակ թրքանալու և կամ իսլամական կրոնն ընդունելու, նախընտրում են ընդունել լեռնաշխարհի իրենց դրացի քուրդ ալեկինների կրոնը:

Ժողովը միաձայնությամբ ընդունում է իր ա-

ևս չնորդի թեկադրանքները և որոշում հետևել նրա ցուցումներին:

Իներ՝ Տեր-Սիմոնը, ընդունում է Սեիդ-Ալի անունը և դառնում Քուրեշանների օջախի փիրը, բայց շատ շանցած հայ և քուրդ կրոնապետների հորդորմամբ կոչվում է փիրև-փիրան (կաթողիկոս):

Այս ավանդության, ավելի ձիշտ՝ պատմական իրադարձության մասին տեղում կաղմված ժողովի ատենադրությունը, իր բոլոր մանրամասնություններով արձանագրված մագաղաթի թերթերի վրա, որբությանը պահվում է փիրև-փիրանի ժառանգորդների մոտ: Այն անձնանմանի է և բացի փիրև-փիրանի ավագ արու ժառանգորդից, ոչ ոք իրավունք չունի ձեռք տալ դրան: Ժառանգորդ փիրը երգումով ուխտել է հավատարմությանը կոտարել իր հորից կամ մեծ հորից ժառանգած այս մագաղաթի վերաբերյալ բոլոր ծիսակատարությունները և նրա բովանդակությունը ուրիշներից խիստ գաղտնի պահելու վերաբերյալ բոլոր պատվիրանները:

Այսպես ուրեմն, լեոնաշխարհի հայությունը ընդունելով ալեկությունը, մնացել է անվտանգ և որպեսզի հավերժացնի իր առաջնորդի անունը, Բարձր Հայքի ամենաբարձր լեոնաշխարհը անվանել է Տերսիմոն, որը ժամանակի ընթացքում աղավաղվելով և կրճատվելով, ստացել է Տերսիմ (Դերսիմ) ձևը:

\* \* \*

Դաշտակ քրդական գյուղի բնակչությունը պատկանում էր Աղուշանների օջախին, որի փիրը Սեիդ-Ճաֆերն էր:

Շենում, Արտաբերդում, նույնիսկ Մամեգիում (Մամիկ իշխանի գյուղը) շատ էին խոսում Դաշտակի բնակչության և ի մասնավորի Սեիդ-Ճաֆերի բացառիկ խելքի և վարչական կարողության մասին, ասում էին, թե հաղվադեպ բացառությանը նա գրել և կարդալ գիտի, քրդերենից բացի, խոսում է հայերեն և թուրքերեն, չկա գիրք, որի լեզվից նա չհասկանա և այլն:

Այս ամենը վաղուց էի լսել, ուստի շատ էի փափաղում ծանոթանալ նրա հետ: Ու առիթը ներկայացավ: Օճախլամի Սեիդը ընդունեց մեզ օթախում, ուր կատարվեց «մապը խերտի»-ով ուսհամբույրը, ապա տեղի ունեցավ ծանոթացումը:

Ապա նա կանչեց անային և հայտնեց հետոսով լինելս, կարկադրեց, որ տանեն ու լողացնեն ինձ:

Կարծես հինգ տարեկան երեխա լինեի, որ կանայք տաշտի մեջ լողացնեին ինձ: Մեծ դժվարությամբ աղատվեցի այդ փորձանքից:

Հյուրընկալվեցի շուրջ մեկ ամիս:

Հաճախ զրուցում էի նրա հետ:

— Փիրո, ասացին, թե զու կարդալ-գրել զիտես, ի՞նչ լեզվով ես կարդում:

— Հայերեն և քրդերեն:

— Ինչպե՞ս թե քրդերեն, չէ որ քրդերեն տառեր չկան:

— Հայերեն տառերը լրիվ բավարարում են քրդերեն լեզվի ամենախորթին բառերն անգամ ճշգրիտ կերպով արտահայտելուն:

— Հայերեն խոսելը հասկանալի է, բայց գրելը չգիտեի:

— Ինձ բերեցին ձեր պատրաստած հայերեն տառերով քրդերեն քերականը և սովորեցրին ինչպես հայերեն կարդալը, այնպես էլ հայերեն տառերով քրդերեն գրելը, որը մի շարք պարագաներում շատ նպաստեց գործերի վարմանը:

— Քանի որ դու, որպես կրոնապետ, օգտակար ես համարում հայերեն տառերով քրդերենի ուսուցումը, ապա ինչո՞ւ թույլ տվիր, որ քրդերն այրեն Դերսիմում վերջերս բացված վարժարանները:

— Քրդերը մի ասի, այլ՝ չները:

— Ինչպես թե:

— Շատ պարզ: Դրամի, տիտղոսի, փառքի համար թուրքերին ծախված քրդերը ոչ թե շուն, այլ ամենաստոր դավաճաններ են:

— Ինչո՞ւ չեք պատժում այդպիսիներին:

— Կոնականներին թուրք բանակն է կանգնած, իսկ մեզ համար առաջիմ ձեռնտու չեն միջաշիրթային կռիվները, թուրքը առիթ է սպասում:

— Ծի՞շտ է, որ ձեր հովված ժողովրդի մեծ մասը նախկին հայեր են:

— Չեմ ուզում պատասխանել այդ հարցումիդ:

— Խնդրում եմ, փիրո, շատ կարևոր է ինձ համար, խոստանում եմ բացարձակ լռություն պահել այդ մասին: Երգվում եմ Տեվրեշ-Կուլապի ու Տեվրեշ-Ճեմալի օջախների անունով:

— Թեև այդպես չէ, բայց մի պահ ընդունենք, թե ձիշտ է, հայերը ի՞նչ շահ կամ ակնկալություն կարող են ունենալ այդ բոլորից:

— Մեր ակնկալությունը այն է, որ եթե իրապես Դերսիմի քրդերի մի մասը հայեր են, որ պարագաների բերումով ժամանակին քրդացել են, ապա, ուրեմն, ինչո՞ւ եք թույլ տալիս, որ թալանեն, կեղեքեն ու ջարդեն հայերին:

— Նախ՝ այդ հարցումը պետք է տայիր այն

աշիրերի աղաներին, որ ծախված են թուրքերին, որոնք իրավունք և իշխանություն ունեն թուրք կառավարության կողմից՝ թալանել և կողոպտել հայերին, կրակի տալ այն վարժարանները, որոնք կարող էին ծնունդ տալ հայ և քուրդ ազատագրական շարժմանը և ոչ թե ինձ կամ Սեիդ-Ռեզային, քանի որ մեր իշխանության տակ ապրող հայերը մեր աշիրեթների կողմից ոչ մի հալածանքի չեն ենթարկվում, իսկ նրանք, ովքեր թուրք կառավարության թուլությունից հարստահարում են հայերին, որքան հայերի, նույնքան և քրդերի թշնամիներն են:

— Արդյոք կրոնական գծով չի՞ կարելի ազդել ինձ ոչ ծախված աղաների, գոնե բուն ժողովրդի վրա, որովհետև այդ թալաններն ու կեղեքումները աղաների թուլությունից քուրդ ժողովուրդին է կատարում:

— Որինակ ի՞նչ ձևով և ի՞նչ անվան տակ քարոզենք ժողովրդին, թե հայերին մի վնասեք, երբ այդ կողոպուտներից աղաների հետ օգտվում են նաև իրենք՝ կողոպտողները:

— Զի՞ կարելի դադարաբար հայտնել նրանց, թե իրենց նախահայրերը հայեր են եղել և հետևաբար՝ արյունակիցներ:

— Դուք, որ Նուրիկայում բավական մեծ թվով խելահաս մարդիկ ունեք, ինչո՞ւ այդ նույն խորհուրդը չեք տալիս Ճիմինի, Փրկչաթաղի, Գալառիսի, Քարթաղի, Խորանթաղի այն թուրքերին, որոնք նախկին հայեր են, մանավանդ որ իրենք էլ դիտակցում են այդ, բայց և այնպես ավելի անխելոս են հայերի նկատմամբ, քան քրդերը: Նույնիսկ թրքացած այդ հայերից շատերը դեռ պահում են իրենց տոհմանունները՝ Քեչիշ-օղլու, Մեռեկ-օղլու, Թորոս-օղլու, էզսան-օղլու և այլն, և պահանջում են, որ այն, ինչ դուք ձեռք բերի տակ եղածներին չեք անում, մենք՝ քրդերս անենք:

— Որովհետև այդ գյուղերի հայերը թրքացած, իսլամությունը ընդունած ազգությաններ են, մինչդեռ քրդերը իսլամական կրոնքին ենթակա չեն:

— Եթե իսլամացած են, ինչո՞ւ չեն քանդում Ճիմինի և Գալառիսի եկեղեցիները և ինքր-էլիասի անվան տակ պահում են իրենց նախնիների սրբատեղիները, տոնում են վարդավառ, ջուր սրսկում միմյանց վրա և այլն: Եթե նույնիսկ մի պահ ընդունենք, թե ճիշտ են ձեր ենթադրությունները, ինչո՞ւ չեք ուղղում հասկանալ, թե եթե իրապես մեր նախնիները պարագաների հարկադրանքով քրդացել են և ենթարկվել ալեկների կրոնական ազդեցությանը և որպես քուրդ պահում են իրենց ոչ միայն գոյությունը, այլև անկախությունը,

նր, ապա, ուրեմն, չաղաքական ի՞նչ փոփոխություններ և կամ ի՞նչ տարբերություններ կան նրանց քրդանալու թվականի և այսօրվա միշև:

— Զրույցի շարունակությունից ղգացի, որ Սեիդ-Ճաֆերը դողում է հուզմունքից, ուստի փոխելու համար խոսակցության նյութը, հարցրի.

— Գիտես, փիրո, որ մի շարք տեղեր հայերեն գրքեր կան թաքցրած և ասում են, թե այդ գրքերը իրենց նախնիների գրքերն են, այսինքն՝ քրդերեն տառերով և քրդերեն լեզվով դրված մագաղաթներ, և թույլ չեն տալիս, որ տեսնենք ու կարդանք:

— Այո, տեղյակ եմ, և դրանք բոլորն էլ մեր գրքերն են, ինչո՞ւ եք հետաքրքրվում այդ գրքերով կամ մագաղաթներով, ինչո՞ւ եք կասկած ներշնչում մեր ժողովրդին ձեր այդ պրպտամանքով: Եթե չեմ սխալվում, Կադնուտի քարայրներից մեկում տեսել եմ մի դրասիահաստ, սակայն թույլ չեն տվել, որ ձեռք տաս դրքերին, այլ զոհացնելու համար հետաքրքրությունդ, հակառակ ավանդական կարգապահության, ցույց են տվել քարայրի տեղը և մուտքի դռները միայն: Դա մեծ սխալ էր թե թո՛ւ և թե նրանց կողմից, ովքեր համարձակվել են դրժել իրենց խոստումը:

— Ինչո՞ւ եք այդքան խստություն անում մի գիրք կամ թուղթ տեսնելու համար:

— Մեր նախնիքը շատ խելացի են եղել, երբ մտածել են կրոնի անունով կորստից փրկել գերքերն ու թղթերը, երդումով գաղտնի պահել դրանց գոյությունը, այլապես կարող էին խոսք հասկացնել ռամիկին, որ շայրեր և շոշնալացներ դրանք: Աստծո, Հազրեթի-խըդդի, Հազրեթի-Ալլիի, Իմամ Հյուսեյնի, Խըտր-էլիասի անուններով և նրանցից պատժելու երկյուղով նախազգուշացրել ենք մեր ժողովրդին, ասելով, թե՝

1. Այդ գրքերը մերն են, մեր նախնիներից ժառանգություն մնացած, ուստի սրբությունը պահպանվելու են, որովհետև այդ գրքերը գտնվում են մեր սրբերի, փրկերի, օջախների պաշտպանության տակ և ձեռք տվողները կպատժվեն տեղն ու տեղը:

2. Մեր գրքերը, բացի օջախի փրկից, ռեյսի-րից, սեիտից, ոչ ոք իրավունք չունի պահելու իր մոտ, այլապես կայծակնահար կլինի այն մարդը, ով կրոնապետից թաքցնում է դրանք:

3. Բացի կրոնապետների անդրանիկ որդիներից, ոչ ոք իրավունք չունի տեղեկանալու գրքերի գոյության մասին:

4. Բացարձակապես արգելվում է մեր պապական սովորությունների տեղը, թաքստոցը ցույց տալ օտարականներին, ի մասնավորի թուրքերին,

նույնիսկ մեզ բարեկամ հայերին, հակառակ դեպքում, բացի սրբերի պատուհասից, այս պայմանը դրժողը ամենադաժան կերպով պատժվում է աշիրեթի կողմից և նդովվում օջախից:

5. Ոչ մի դիրք, ոչ մի թուղթ, ուր որ էլ դառնվի այն, ինչ գումար էլ որ վճարվի դրան, չի կարելի վաճառել: Երգմնազանցները պատժվում են մահովամբ: Այդ թղթերը պահվում են դադունի, մինչև որ Հազրեթի-Ալին, Իմամ Հյուսեինը կամ Հազրեթի-Խըրը հայտնեն մեր վերե-փիրանին, որ բաց անեն զրբերը և աստծո շնորհիվ կարդան դրանք: Այդ ներշնչումը տեղի կունենա այն օրը, երբ մենք կալատվենք թուրքի բռնակալութունից և կունենանք մեր անկախ երկիրը:

Ինչպես տեսնում եք, դիտել տված Սեիդ-Ճաֆերը, գարեթի ընթացքում պահվել ու պահպանվել է այդ ավանդությունը, հորից կտակվելով ավագ որդուն և այդպես շարունակ: Փոքր շեղում, անտիգի մի հետաքրքրություն կարող է աղետաբեր լինել բոլորի համար: Ումն են այդ գրքերը, ինչ լեզվով են գրված, ես չգիտեմ և լավ է, որ դուք էլ չգիտեմք, մինչև որ ժամանակը գա և հայտնությունը տեղի ունենա, մինչև որ աստծո հրաշալիքով զորութեամբ մեր ժողովրդի առաջնորդներից մեկը այդ գրքերի լեզվով կարդալ իմանան, այսինքն՝ բրդերեն լեզվով, ինչպես որ խոսում են, այնպես էլ կարդան: Ահա թե ինչու, մինչև սպասված օրվա գալը ոչ ոք, ոչ ես, ոչ դու և ոչ էլ մի երրորդը, իրավունք չունի ձեռք տալու կամ նույնիսկ հետաքրքրվելու այդ բոլորով: Կարծում եմ, այս հարցի շուրջն խոսելն այլևս ավելորդ է:

— Ըի հարցում ևս և վերջ:

— Ասա տեսնեմ, նորից ինչ հավկիթ ես ածելու:

— Ասում են, թե Տեր-Սիմոն անունով հայերի փիրը 1604—1606 թվականներին, ջալալիների արշավանքի ժամանակ, կոտորածից փրկվելու համար իր թալպները (ծուխ), քրդացել է և ճամաթի որոշումը մի մագաղաթի վրա գրած պահ է տվել իր անդրանիկ որդուն և երդում առել նրանից, որ ոչ ոքի չհայտնի այդ գրության բովանդակությունը, մինչև որ, ինչպես դու ասացիր, փիրե-փիրանի տեսիլում շարտոնվի իրեն կարդալ այդ գրությունը:

— Քանի որ որևէ ձևով տեղեկացել ես այդ մանրամասնությանը և ծանոթ ես պայմաններին, այլևս ինչու ես հարց տալիս: Ես տեղեկություն չունեմ, չեմ տեսել, չգիտեմ, զուցե և լսել եմ, ինչու ևս ստիպում ինձ, որ խոստմնադրուժ լինեմ: Երբ նման որևէ հարց որևէ մեկի սեփականու-

թյունն և՛ դարձնում, նախ և առաջ երգվեցնում են:

Այստեղ էլ վերջ դրվեց մեր խոսակցությանը:

\* \* \*

Միրազներ, Միրազենց, Միրազյաններ, Աշիրեթ-Միրազի և նույնիսկ կրճատված՝ Միրոններ տոհմանունը վաղուց ծանոթ էր ոչ միայն Դերսիմի շրջանին, այլև նրա սահմաններից դուրս Կարնո, Դերջանի, Բաբերդի (Բայրուտի), Երզնկայի, Խարբերդի, նույնիսկ Մալաթիո, Սեբաստիո և Տիգրանակերտի շրջանների բնակչությանը: Շատ էր խոսվում իրենց ազգային դիմադիր՝ տոհմային ավանդույթները, նահապետական սովորույթները պահպանելու, տեղ-տեղ հայախոս, տեղ-տեղ քրդախոս այս տոհմի մասին:

Միրազյանների անվան շուրջը պատմված քաջագործությունների, մարտերում ցուցաբերած անձնազոհության հասնող խիզախությունների, շարք պատժելու, բարին պաշտպանելու, դավաճաններին բնավ չխնայելու, պատվի պաշտպանության համար իրենց կյանքը զոհելու պատրաստակամության և այլ պատմությունների շարանը այնքան երկար էր, որ լսողը այդ բոլորը կարող էր վերագրել առասպելի, սակայն դրանք ունեին իրական հիմք:

Իսկպես գոյություն ունե՞ր Միրազյան տոհմ:

Այո, Դերսիմի զանազան շրջաններում ապրում էին հայեր, որոնք Միրազյան էին կոչվում:

Որ Միրազյան ազգանվամբ (տոհմանվամբ) մարդիկ կային իրարից անջատ, իրարից անտեղյակ մի շարք գյուղերում, դա փաստ էր:

Մի շարք ճանապարհորդներ իրենց ուղեգրություններում անցողակի խոսել են Միրազյանների մասին, երբեմն հայ մամուլում հարևանցիորեն ակնարկներ են արված հերոսական այդ տոհմի գոյության մասին: Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Խորհրդային Հայաստանում ապրում են Միրազյան և կամ Միրազյաններ, բայց երբ հետաքրքրվում ես մեկի կամ մյուսի տոհմային ծագման և կամ առհասարակ Միրազյանների ընդհանուր թվի, տեղագրության, կենցաղի մասին, հիմնավոր պատասխան տալ չեն կարողանում:

Ամեն մեկը նրանցից, որ դուրս է եկել իր բնակած գյուղի սահմաններից, իր հետ տարել է իր գյուղի կամ իր պապի մասին գիտեցածները և ամուր կառել իր տոհմանունին, առանց լրիվ գաղափար ունենալու նույն շրջանում ապրող իր

ստոհմակիցների բնակավայրի, տեղագրության և թվական տվյալների մասին:

«Ո՞վ է Միրազյանների նախահայրը» հարցումին պատասխանում են. «Եմ պապուս պապուն մեծ սլասլը՝ Միրազը»: «Ո՞վ է ձեր տոհմի պետը, տոհմը»: «Եմ պապը»:

Եվ սա ոչ միայն Դերսիմում, այլև արտասահմանում գտնվող մի շարք Միրազյանների տված կամ տալիք պատասխանն էր:

Տոհմ՝ առանց տոհմապետի, աշիր՝ առանց աշիրապետի և սակայն ով էր կառավարում այս տոհմը, առաջնորդում նրան մարտերում, ուղղություն և ընթացք տալիս նրա գոյությունը և կենցաղային պահանջներին:

Որ Միրազյաններ կային, դա անժխտելի էր, որ այդ տոհմանվան տակ ապրողների թիվը, ըստ տեղական տվյալների, հասնում էր ավելի քան ութ հազարի, դա ևս անվիճելի էր, որ քաջ կռվողներ էին և վայելում էին մի շարք աշիրեթների վստահությունը, դա նույնպես անհերքելի էր: Իսկ թե ամենուր և հատկապես Դերսիմում ցիրուցան եղած և մինչև մեր օրերը իր գոյությունը պահած այս քաջամարտիկ տոհմը ինչպես է կարողացել պահպանել իր դիմագիծը, դժվար է ասել:

Ամեն մի գյուղ, ուր առանձին կամ քրդերի հետ ապրում էին Միրազյանները, ինքն իր մեջ փնտրում և գտնում էր իր առաջնորդին: Նույն գյուղի Միրազենց պապը և ամեն գյուղ կամ շրջան կարծում էր, թե ինքն է բուն միրազը և հետևաբար՝ տոհմի մեծը:

Ամեն ոք, քուրդ թե հայ, վկայում էր, որ Միրազները շատ հին են, այնքան հին, որքան Դերսիմն ու դերսիմցիք: Բայց թե ով է եղել Միրազը, հայտնի չէր: Ըստ տեղացիների ըմբռնման, ամեն մեկ կռվող և քաջ հայ միրազ էր: Միրազ էր նա, որ իր պատիվը, իր հայրենիքը պաշտպանելու համար թուր և հրացան էր օգտագործում, ուր թուրը կտրուկ և զնդակը դիպուկ էր: Միրազը երկայնաբազուկ Տեր-Օհանն էր:

Գոյություն ունեցող Միրազների տոհմը իրար կապող միակ ուժը և գերբնական զորությունը տոհմանունն էր, այսինքն՝ հայ միրազը, իսկ եթե նա հրաժարվել էր հայությունից, իրավունք չունեիր կրելու այդ տոհմանունը: Այսպես, Սեիդ-Մունզուրը, որ նախկին միրազ էր, իսկ հետո՝ ավելիների կրոնապետը, խոսակցության միջոցին խուսափում էր օգտագործել իր տոհմանունը:

Դերսիմի զանազան շրջաններում ապրող ցան ու ցիր Միրազներից շատերը գրեթե անտեղյակ էին մեկը մյուսի գոյությունը: Ամեն շրջանում

ապրող Միրազները ինքնուրույն էին գործում իրենց գյուղում կամ ավանում և սակայն կռիվների մամանակ, երբ սարից-սար թնդում էր հավարի ահազանգը ու երբ հաղորդվում էր Միրազների դեմ կռվի դուրս եկող աշիրեթի անունը և կռվի վայրը, Դերսիմի չորս ծայրերից հայտնվում էին խմբերը և հարվածում թշնամուն: Օգնության հասնող խմբերը Միրազների կռվողներն էին: Հարցը տարբերվում էր, երբ կռվի էին դուրս գալիս ընդհանուր թշնամու՝ թուրքի դեմ: Այդ դեպքում ամեն շրջան կռվի էր դուրս դալիս իր բնակավայրի աշիրեթի հետ ոչ թե որպես Միրազ, այլ որպես աշիրեթի հավաքական մեկ մասնիկը:

Թե առանց ներքին կազմակերպության այս տոհմի ցիրուցան զավակները ինչպես էին կարողացել պահպանել իրենց գոյությունը, կարելի է բնորոշել հետևյալ կերպ.

1. Տոհմի միավորման շաղկապը տոհմանունն էր: «Ես հայ միրազ եմ» — սա ցեղային ինքնագիտակցության գերագույն խորհրդանիշն էր:

2. Բոլոր Միրազների բնակած գյուղերը գտնվում էին անմատչելի սարալանջերում և բնական ամրոցներում:

3. Տոհմային ավանդական կտակի գոյությունը անխուսափելի էր, որովհետև բոլորի մտածողության, ըմբռնումների, հայրենասիրության և զենքի պաշտամունքի համոզումները միևնույնն էին:

4. Բոլոր Միրազների համար օջախի պաշտամունքը, պատվի պաշտպանության համար զոհաբերվելու գիտակցությունը, տված խոսքը հարգելու, հայրենադավին չխնայելու, իր օջախի պաշտպանությանը դիմող թշնամուն ներելու, կանանց և երեխաներին ձեռք չտալու անգիր օրենքները սերբազան էին նկատվում:

Տեր-Օվան գյուղը եթե Միրազյանների տոհմի ծագման վայրն էլ չէ, ապա հաստատ է մի բան, որ այն բազմամարդ հայկական մի մեծ ավան է եղել: Գյուղի հյուսիս-արևելյան ձորամիջում կային մի մեծ վանքի փլատակներ: Շրջանը կառավարվում էր Քուրեշան և Ալան աշիրեթների կողմից: Գյուղի քուրդ բնակիչները երբեք չէին ուրանում իրենց ծագումը և Աղուջանների օջախի փիրը՝ Տեվրեշ-Կուլապիի թոռ Սեիդ-Ալին հպարտությամբ պատմում էր իրենց օջախի փիրի՝ Տեր-Օվանի մասին, որը որպես վանահայր բնակվելիս է եղել Տիրամոր վանքում:

Սեիդ-Ալին չէր թաքցնում իր նախնիներից

<sup>1</sup> Այս առթիվ հանգամանորեն տե՛ս նաև՝ Անդրանիկ, Տերսիմ, Թիֆլիս, 1900.

մնացած հմախիւնների, այսամալուրքների, զանազան մաղաղաթյա ձևաղորների գոյությունը, որոնք որպէս սուրբ զրօքի համալուրք և ջերմեռանդութեամբ պահվում էին վանքի փլատակներին մոտիկ անմատչելի մի քարայրում:

Իմ այն հարցումին, թե կարելի չէ արդոք աչքեանցընել այդ ձեռագրերը, նա պատասխանեց.

— Ոչ, պէզոք (որդի), այդ ձեռագրերը և գրքերը իմ պապի՝ Տեվրեշ-Վուլապի կողմից պահված են այդ քարայրում, ոչ իմ հայրը և ոչ էլ ես իրավունք չենք ունեցել ձեռք զարնելու այդ սրբություններին, ինչպես հայրս՝ Սեիդ-Տեմենը (Տեւ-Մանվել), նույնպես և ես ավանդապահներն ենք այն կտակի, որ ժառանգել ենք մեր պապերից և ավանդաբար հաղորդելու ենք մեր ժառանգներին: Այդ կտակով մեր վրա պարտականութիւն է դրված ձեռք չտալ ավանդներին, ոչ ոքի ցույց չտալ պահեստի տեղը, բացի օջախի անդրանիկ արուից:

— Չեք կարծեր, որ պահված կամ թաղված այդ գրքերը ենթակա են փշանալու:

— Ամեն մի դիրք առանձին փաթաթված է սեկի մեջ, իսկ այդ սեկապատ ծրարները տեղավորված են այծի կաշուց պատրաստված տիկերի մեջ և դարսված կաղնի փայտից շինված սնդուկում:

— Ճիշտ է, որ ժամանակին Տեւ-Օվանից գաղթող հայերից ոմանք վերադարձել են իրենց ծննդավայրը, բայց դուք կամ ձեր հովված ժողովուրդը մերժել եք բնակութեան իրավունք տալ եկվորներին և վերադարձնել իրենց հողերը, որի պատճառով ասում են, թե վեճեր, նույնիսկ մարտեր են տեղի ունեցել ձեր և նախկին բնիկների միջև:

— Այդ բոլորը ճիշտ է, իմ հայրը՝ Սեիդ-Տեմենը և տեղացի ժողովուրդը՝ հայ թե քուրդ, հավաքաբար մերժել են եկվորների պահանջը և վտարել մեր սահմաններից, որովհետեւ ավանդաբար հաղորդված է մեզ, որ օջախից հեռացողը, վտանգի պահին իր պապենական տունը անպաշտպան ձգողը և փախչողը ինքնաբերաբար զրկվում է համայնքի բոլոր իրավունքներից: Ինչո՞ւ լքեցին ու հեռացան, երբ համայնքը վտանգի տակ էր: Հեռացողները մեզ համար համագոյուղացիներ չեն, այլ նոր եկվորներ կամ օտարներ:

— Ինչպես պարզվում է, դուք որպէս օջախի մեծ ու ավանդութունների գործադիր առաջնորդ, ձեր սեփականութիւնն եք նկատում այն բոլորը, ինչ նախնիներից ժառանգել եք՝ հող, արոտատեղի, բնակարան, անտառ, նույնիսկ գրքերը և թույլ չեք տալիս, որ նախկինում հեռացածները ստա-

նան իրենց լաժիկները: Այսպէս՝ այս գոյուղից հեռացողները հայեր են և գուք իրավունք չեք տալիս վերադառնալ ուղող հայերին, որ գոնե տեր դառնան իրենց նախնիներից մնացած գրքերին, որոնք հայերեն են գրված և պատկանում են հայ մնացած համայնքին:

— Ինչպես ասացի, այդ բոլորն իր ծննդավայրից չհեռացող ժողովուրդի սեփականութիւնն է, իսկ գրքերը օջախի պահպանութեանը հանձնված ավանդներ են, որոնք տեղից-տեղ ձեռքից-ձեռք չեն փոխանցվում, այլ մնում են այնտեղ, ուր եղել են, և պաշտպանվում են այն մարդկանց կողմից, որ նույն օջախի ժառանգորդներն են: Այստեղ դեր չի խաղում, թե ով ինչպես է կոչվում: Օրինակ, իմ լուսահոգի հորը քրդերս կոչում ենք Սեիդ-Տեմեն, հայերը՝ Տեւ-Մանվել, դրանով իրականում ոչինչ չի փոխվում, փաստն այն է, որ օջախի տերը Սեիդ-Տեմենն է, իսկ ես նրա ժառանգորդ Սեիդ-Ալին եմ: Դուք՝ հայերդ շարունակեց Սեիդ-Ալին, ձեր կրոնավորներին տերտեր եք ասում, մենք՝ ալեկներս՝ տեսե՛ք: Ո՞րն է տարբերությունը, տերտեր է կոչվում օջախի տերը՝ համայնքը կառավարողը, թե՞ տեսե՛ք: Կարևորն այն է, որ ես և իմ թաղայնները (ծուխ, համայնք) մեր օջախներից չենք հեռացել:

\* \* \*

1912-ին հյուր էի Աղուջանների օջախի կրոնապետ Սեիդ-Ճաֆերի մոտ, ուր հավաքված էին չորս օջախների կրոնապետները (փրերը): Խորհրդակցութիւնը դիմել էր ընդհանուր կրոնապետի՝ փրե-փրանի՝ միջնորդութեանը, հաշտեցնելու համար Հայտարանցիների, Մամգանցիների, Հասանանցիների և Սիսանանցիների աշիրեթներին, որոնք մի որոշ ժամանակից ի վեր թշնամացել էին իրար հետ, և որոնց աշիրեթամիջյան կոիվները բացասաբար էին անդրադառնում Գերսիմի ընդհանուր պաշտպանութեան գործի վրա:

Փրե-փրանը, որի աթոռանիստ գոյուղը Սաղանն էր (Սաղման, Սողման), ճշտելուց հետո ժողովի օրն ու թվականը, փրերին հրավիրել էր Կըղլէիլիոն (Կարմիր եկեղեցի, կոչվում էր նաև Կարմիր ավետարանի եկեղեցի), Սուրբ լույս լե-

<sup>1</sup> Փրե նշանակում է մեծ, բարձր, փրե-փրան՝ ամենամեծ, ամենաբարձր, կրոնապետների իշխող հոգևորականը (կաթողիկոս), որի վճիռը պարտադիր էր ամբողջ համայնքին՝ թաղայններին (ծուխ-ծխական, հովութեան ենթակա ժողովուրդ):

սան ստորոտը, Հալվորիի ս. Կարապետ վանքի մոտերը ժողովի:

Սեիա-ճաֆերի կարպաղությամբ, ես էլ որպես հյուր և ունկնդիր, ներկա եղա այդ ժողովին (նախապես առնված էր փիրե-փիրանի հավանությունը): Փիրե-փիրանը ժողովը բացված հայտարարեց և հրավիրեց ներկաներին երգվելու, որ ժողովի որոշումները գաղտնի պահվեն և կես առ կես գործադրվեն:

Երգումի բանաձևը հետևյալն էր՝ կերպնունք Հաղրեթի-Ալիի, էմմերի Հաղրեթի-հրգրի (ս. Սարգիս) և սուրբ Հրաշագործի անունով, որ չորսի ժողովի գաղտնիքները ոչ ոքի չպիտի հաղորդվեն և որոշումները պիտի գործադրվեն ճշտությամբ:

Ինձ համար շատ հետաքրքիրը երգումի այս բանաձևի մեջ գործածված սուրբ Հրաշագործ խոսքն էր: Ես մի շարք ժողովների (ճեմաթ) եմ ներկա գտնվել և լսել եմ երգման արարողություններ, օրինակ՝ ՁՅա, փիրե մըն տեվրեշ Կուլապի, յա փիրե մըն տեվրեշ Ճեմալ և կամ՝ ՁՊուե հեքդի», սակայն առաջին անգամն էր, որ լսում էի Հրաշագործի անունը երգման արարողության մեջ:

Երբ չորս մեծերի ժողովը վերջացավ ու ամեն մեկը վերադարձավ իր օջախը, ես էլ ընկերացա իմ տան տիրոջը՝ Սեիդ-ճաֆերին: Տուն՝ որ հասանք, հարցրի.

— Փիրո, ինձ համար պարզ չէ այն պարագան, թե ինչու փիրե-փիրանը երգումի բանաձևին կցեց նաև սուրբ Հրաշագործ անունը (Հաղրեթի-Մյուլպարեթ), նախ՝ որն է այդ սուրբը, որն ինձ անծանոթ է և երկրորդը՝ այդ նոր սուրբը ի՞նչ գործ ունի երգման ձևի բանաձևի հետ:

Կրոնապետը մի պահ մտածելուց հետո պատասխանեց.

— Պղզո, դու, որ ծանոթ ես մեր օրենքներին և կրոնական բոլոր մանրամասնություններին, ինչպե՞ս չգիտես, որ ականարկված սուրբ Հրաշագործը սուրբ Կարապետն է Հալվորին է (իբրև թե քրդացրեց): Փիրե-փիրանը այդ անունը տվեց երկու գլխավոր պատճառով, առաջինը, որ ժողովը տեղի ունեցավ Հրաշագործի սահմաններում, երկրորդ, որ այս սուրբը մերն է:

— Ինչպե՞ս թե ձերն է այդ սուրբը, — հարցրի զարմացած, — չէ որ նա մեր վանքն է, խաչով ու խաչվառով մեր եկեղեցին, նոր դարերից ի վեր մեր կրոնավորները պաշտոնավարում են, աղոթում ու պատարագում, որտեղից-որտեղ մեր սուրբ Կարապետը ձերն է և նկատում:

— Դու դեռ ջահել ես, քո խելքը չի հասնում,

չեմ զարմանում, թե ինչու չգիտես այս մանրամասնությունը, քանի որ այդ բոլորը կրոնական և ազգային գաղտնիք են, և մենք դրանք չենք հաղորդում ոչ ոքի: Դու պետք է իմանաս, որ Մյուլպարեթին (երեւելի, շնորհալի, հրաշագործ)<sup>1</sup> մեր նախահոր մասունքը ձեր կրոնապետները յուրացրել և ժամանակից ի վեր պահում էին ձեր սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքում: Մի օր մերոնք գողացան և բերին Սաղան, բայց Հալվորիի ձեր տե տեն դիմեց ինձ ու սուրբ Կարապետի անունից պահանջեց մասունքը, և որովհետև մենք ոչինչ չենք կարող մերժել այդ անունով կատարված դիմումին, ստիպված մասունքը վերադարձրինք, սլայման դնելով, որ այն շվերադարձվի սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքը, այլ պահվի մեր վանքի մեջ: Եվ որպեսզի քեզ համար պարզ լինի այս բոլորը, շարունակեց Սեիդ-ճաֆերը, պատմեմ մի հրաշագործ իրականություն: Մի անգամ լուսահոգի պապս՝ մեծ Սեիդ-ճաֆերը, իր հետևորդներով օգնության էր գնում զալմաների (թուրքերի) դեմ կռվող իր թալպաներին (ծխեր): Գիշերանց, երբ անցնում էր Հալվորիի վանքի տակից, տեսնում է, որ վանքի դիմացի մորին (անտառը) լույս է ընկած ու վառվում է, իսկ ինքը՝ մյուլպարեթը, հրեղեն թևերով բող ձիու վրա հեծած, մզրախը ձեռին, սուրալով անցնում է իր վերեւից: Պապիս լեզուն պապանձվում է, հետևորդները վախից ուշաթափվում են, մինչև որ Տուժիկ-պապան սարսռում է, թնդանոթներ արձակում: Առավոտյան պարզվում է, որ մյուլպարեթը շարդել է թրքական զորքը և վերադարձել, իսկ Տուժիկը նրան դիմավորում է իր ելտրմաներով (կայծակ) և թոփերով: Ահա թե ինչու նա մեր սուրբն է և մենք երգվում ենք նրա անունով:

Սեիդ-ճաֆերի պատմածի առնչությամբ ուշագրավ է վանքի վանահոր պատմածը նույն երեւոյթի մասին, որը և ներկայացնում եմ ստորև:

— Մի անգամ, — սկսեց պատմել վանահայրը, — Երզնկայի առաջնորդությունից մի նամակ եմ ստանում, որի մեջ հայտնում էին. «Տեր-հայր, մի կարդ քյուրտ ավազակներ գիշեր ժամանակ հարձակվել են մեր ս. Լուսավորչա վանքին վրա և կողոպտել նրա բոլոր արգն ու զարդը, որոնց

<sup>1</sup> Քրդերը մյուլպարեթ էին կոչում իրենց այն բոլոր սրբերին, որոնք հզոր ու անպարտելի էին համարվում:

<sup>2</sup> Ըստ տեղեկությունների, Հալվորիի ս. Կարապետ վանքը մինչև 1938 թ. մնում էր կանգուն և այնտեղ բնակվում էր Աղուշանների օջախի կրոնապետ Սեիդ-ճաֆեր մեծի թոռը՝ Սեիդ-ճաֆերը իր եղբոր զավակներով, որոնք վանքն առել էին իրենց պաշտպանության տակ:

րենյ աղղային ծաղումը և կոչվում են Միրազներ։  
Պերսիմում Միրազներ շատ կան, որոնց մեծա-  
մասնությունը խոսում է հայերեն։

— Իսկ դուք ինչու չեք պահել ձեր ազգությունը։

— Մեծ Անայի օջախը վառ պահելու համար  
մեր պապերը այդպես են հարմար տեսել։ Քար-  
տակի մեր գյուղի կործանումից և Զիարեթի քա-  
լափոր ուխտատեղին քարերով ծածկվելուց հե-  
տո Անայ-փիլը ողջ մնացած իր հարազատների  
հետ ապաստանել է Տուժիկ-պապայի անմատչե-  
լի ծերայերում, ապա վերադարձել և հիմենել է ա-  
ռաջին մկրտն, ուր և վառել է առաջին օջախը և  
իր անդրանիկ որդուն է հանձնել այդ օջախի  
պաշտպանությունը, որից և սերվել է մեր տոհմը։

— Ո՞վ է քանդել այդ մեծ զիարը։

— Ձեր նախնիքը։

— Ի՞նչ պատճառով։

— Կռապաշտությունը կործանելու և քրիս-  
տոնեությունը տարածելու։ Այդ զիարի տեղը  
(ինչպես տեսաք) բարձրացել են քարե բլուրներ,  
սրովհետև զիար քանդողները այդ տեղը նրճա-  
նեթնամ են կոչել և խորհուրդ տվել, որ ամեն  
մեկ անցնող մի քար նետի այդտեղ, ուր թաղված  
է Անայի զիարը և դարեր շարունակ նետված քա-  
րերից գոյացել են քարփանքները և այն մեծ բլու-  
րը։

— Այժմ էլ ե՞ք ուխտի գնում այդ զիարին։

— Զիարի տեղը անհայտ է, բայց կաթնաղ-  
բյուրը մնում է անվթար, ուր գնում ենք ուխտի և  
մատաղ մորթում մեր մեծ մոր հիշատակին։

— Իսկ ձեր հորեղբորորդի Միրազները։

— Կաթնաղբյուրը բոլորի կողմից պաշտվում  
է, ոչ մեկ խտրություն հայի և քրդի միջև, բոլորս  
միասին գնում ենք ուխտի, ինչպես և ուրիշ շա-  
տերը, որ գալիս են մեր վանքը՝ հրաշագործ սուրբ  
Կարապետին այցելության։

\* \* \*

Դերսիմի հյուսիսային ինքնապաշտպանության  
բնական գոտին կազմող Մնձուրի և Մեռճանի լեռ-  
նաշղթաների տասից ավելի գագաթները մշտն-  
ջենապես ձյունածածկ էին։ Դարերի ընթացքում  
կուտակված ձյան հաստ խավերը շրջապատի ա-  
պառաժների երանգն էին ստացել, դարձել կղմին-  
դրագույն։

Ձյունն իր մեջ սնուցանում էր սպիտակ ձյու-  
նաորդեր, որոնք ծնունդ էին առնում ամռան տա-  
քերին և անհետանում աշնան ցրտերին։ Տեղացի-

ների համոզումով այս ձյունաորդերը ձյունաոգի-  
ներ էին։

Մնձուրի և Մեռճանի լեռնագագաթների բարձ-  
րությունը հաշվվում էր 3100—3600 մետրի միջև։  
Այս լեռները արևելքից արևմուտք՝ Բինգյուլից  
Ակն, տեղ-տեղ կորանում, փոքր-ինչ խորանում  
և անդնդախոր կիրճեր էին կազմում, տեղ-տեղ էլ  
անցք տալիս վարար գետակների հոսանքին։  
Դրանց աջ կողմը փոխած էր Երզնկայի հովիտը՝  
հանդիպակաց լեռներով, իսկ ձախ կողմը՝ Դեր-  
սիմը իր անհամար լեռնագագաթներով, կիրճե-  
րով, անդնդախոր ձորերով և անտառածածկ սա-  
րերով։

Ահա այս երկու լեռներն էին, որ իրենց ան-  
սպառ ջրամբարներով ծնունդ էին տալիս երկու  
նշանավոր գետերի, որոնք, բացի ամռան երկու  
ամսից, տարվա մյուս ամիսներին անանցանելի  
էին։ Հատկանշականն այն է, որ եթե դերսիմի-  
ները հպարտանում էին իրենց պարզևատուր այս  
գետերով, ապա նույնքան ուրախանում էին դեպի  
Երզնկա նայող աշափնյա լեռնաբնակ և դաշտա-  
բնակ գյուղերի բնակիչները, որովհետև ջրառատ  
սույն ջրամբարները համահավասար ջուր էին  
մատակարարում թե սրանց, թե նրանց։

Այդ լեռների ստորոտից բխած ակերի ջրերը  
դեպի հյուսիս՝ Եփրատ, դեպի հարավ՝ Արածանի  
գետերն էին թափվում, այնպես որ Դերսիմի սահ-  
մաններից ներս թե դուրս այս գետակները պահ-  
պանում էին իրենց պատմական անունները՝  
Մնձուրի ակնաղբյուրներ և Մեռճանի ջուր։

Մնձուրի ակնաղբյուրները սկիզբ էին առնում  
Զերանիկ գյուղի հյուսիսային և Զիարեթի հարա-  
վային սարալանջերից։

Առաջին և ամենամեծ ակնաղբյուրը ժայթքում  
էր ոչ այնքան մեծ միակտուր գրանիտե մի ապա-  
ռաժի կրճից, որի ցայտումը այնքան ուժեղ էր,  
որ ջուրը դուրս էր գալիս կաթի գույնով և մի քա-  
նի ռուպե տեղում թյամբ մնում կաթնանման մի  
հեղուկ, ապա օդի ազդեցությամբ հանդարտում ու  
վճիտանում էր։

Առաջին աղբյուրի ջրին շատ մոտիկ, հնադար-  
յան քարափոր մի մեծ ավազանի խորքից էլ ա-  
վելի մեծ մի ակնաղբյուր էր դուրս պոռթկում և  
լճանում քարափոր ավազանի մեջ, հորձանք տա-  
լով զարնվում ավազանի պատերին, ապա դուրս  
թափվելով միանում առաջին ակնաղբյուրի ջրին  
ու կազմում արագավազ մի ջուր։

Այս երկու աղբյուրից երկու, հինգ և տասը  
մետր իրարից հեռու, միշտ ժայռերի միջից լույս  
աշխարհ էին գալիս քառասունից ավելի մեծ ու

փոքր ակնադրյուններ, որոնք ևս միախառնվելով առաջին երկուքին, շատ կարճ շրջագծի մեջ և շատ կարճ միջոցում կազմում էին սրընթաց մի գետակ, որը աղմկահույզ անցնում էր Զերանիկ և Բլուր գյուղերի մեջտեղից և թեքվելով նախ դեպի սրեմուտք, ապա՝ հարավ, ճամփա էր բացում դեպի Արածանի:

Կարելի է ասել, թե նույն լեռների դեպի Երզնկայի հովիտը նայող լանջերից դուրս ժայթքող ակնադրյունների կազմությունն էլ գրեթե համապատասխանում էր վերը նկարագրածին, միայն այն տարբերությամբ, որ այստեղ չկային քարե ավազան և կամ քով-քովի դուրս ժայթքող ակեր, իսկ ջրերը փոխանակ Արածանիի, խառնվում էին Ռփրատին:

Դերսիմի բոլոր համայնքների համար այս ակնադրյունների պաշտամունքը ջրի պաշտամունքի ամենացայտուն մի պատկերն էր տալիս, որը գալիս էր հնագույն դարերից և անվթար պահպանվում մինչև այդ օրերը:

Ըստ տեղական սովորության, ակնադրյունների վրա իրար հանդիպած թշնամիները զենքը վար էին դնում, մոտենում կաթնադրյունին, լվացվում և բռնվ ջուր խմելուց հետո, մոտենում միմյանց, նախ աջ ուսհամբույրով ողջունում մեկմեկու, ապա գրկախառնվում ու արտասվում: Այս արարողությունը տեղի էր ունենում գրեթե անխոս, ինքնաբերական, սրտառու ջերմեռանդությամբ և խորը համոզումով, թե Անահիտն է թելադրել իրենց իր կաթնադրյուններում հանդիպել իրար: Խմելով նախամոր ստինքների կաթից, թշնամությունը մոռացվում էր, շարիքը վերանում, մեղքերից մաքրվում, հաշտվում և եղբայրանում էին՝ կաթնեղբայր դառնում:

«Մեր պապերի ավանդական հավատալիքների համաձայն, Մնձուրի ակնադրյունները բխում են մեր մեծ նախամայր աստվածուհի Անահիտի կրծքերից: Հավատում են, թե Անահիտի ծծերից բխող այդ կաթնադրյունների ջրերը մեր մեծ մոր ստինքների կաթն է, և այդ է պատճառը, որ աշիրեթների մեջ տեղի ունեցած բոլոր թշնամությունները, մարտերի հետևանքով ծագած վեճերը և տարիներ շարունակվող ոխն ու ատելությունը եղբայրական հաշտարար լուծում են գտնում կաթնադրյուններին ուխտագնացությամբ և Անահիտի կաթից (ջրից) խմելու արարողությամբ», — հավաստում է նաև քուրդ գրող Ն. Դերսիմին<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն Դերսիմի, Դերսիմը Քրդստանի պատմության մեջ, Ռեյութ, 1952, էջ 10 (թուրքերեն):

Ըստ մի այլ ավանդության, որը շատ էր ընդհանրացած, Մնձուր լեռան ամենաբարձր, միշտ ձյունածածկ գագաթը Անահիտի կերպարն էր, որը հսկում էր Դերսիմին: Այն նայում էր արևելքից արևմուտք և ձախ ծծից բխեցնում դեպի Արածանի հոսող Դերսիմի կաթնադրյունը, իսկ աջ ծծից՝ դեպի Եվրատ հոսող Երզնկայի կաթնադրյունը: Անահիտն իր զուգ ստինքների սրբազան կաթով հավասարապես օծում և մաքրագործում էր երկու քույր գետերի հորդահոս ջրերը: Ոմանք էլ Եփրատն ու Արածանին նկատում էին Անահիտի աջ ու ձախ բազուկները, որը գուրգուրոտ մոր նման Դերսիմն առած իր թևերի մեջ, պաշտպանում էր այն թուրք բռնակալության դեմ:

Ավանդությունը Մնձուր գյուղի հովիվներից Մունգուրի (Մնձուր) անվան հետ էր կապում Զերանիկ գյուղի հյուսիսային կողմից ծագում առնող Մնձուրի ակնադրյունների հրաշագործությունը: Թեև տեղացիների մեջ զանազան փոփոխակներով էր պատմվում դա, բայց բոլոր պատմածների գլխավոր հերոսները մնում էին իշխան և նախարար Զեմշիգը և հովիվ Մունգուրը<sup>2</sup>: Որոշ պատմվածքների մեջ հիշվում էր Բոզ-ձիավորի անունը, ուրիշ տեղ՝ Հազրեթի-Խըրդի մասնակցությունը:

Մնձուր լեռան Անահիտի կաթնադրյունների ներգործած պաշտամունքի ազդեցությունը վաղուց ի վեր արթնացրել էին իմ մեջ թուրքին թըշնամի, հային բարեկամ և սակայն աղքիկ վախճընելու առիթով իրար թշնամացած երկու զորավոր՝ Տեմենյան (Տեր-Մանվելյան) և Մթինների (Մամգուն) աշիրեթները իրար հետ հաշտեցնելու միտքը:


Այս երկու աշիրեթների թշնամությունը քաջալերվում էր թուրք կառավարությանը ծախված Զարսանչակի բեկերից և Շահ Հյուսեին-բեկ Բ-ի թոռներից, որոնք գործում էին թուրք իշխանության ցուցմունքներով:

Հաշտեցումը հնարավոր էր միայն Հազրեթի-Խըրդի միջամտությամբ:

Երկուստեք մեծ հեղինակություն վայելող Սեիդ-Ռզային հայտնեցի, որ երազումս հաշտեցման պարտականությունը Հազրեթի-Խըրդը դրել է իր վրա՝ Անահիտի կաթնադրյուններին ուխտի գնալու միջոցով:

— Դա երազ չէ, դա տեսիլ, հայտնություն է, դա արդարադատ աստծո գործն է, այժմ վստահ եմ, որ գործը դուրս կգա: Դու հայ ես և հյուր մեր

<sup>2</sup> Տե՛ս նշված աշխ., էջ 9:



Նկ. 29. Աղբյուրների ցայտումը հանգիստացած ժայռերի կրճաթից՝ գետի մեջ:

շրջանում, նրանք կհավատան քո խոսքերին, տե-  
րը քեզ օգնական, միայն պետք է շատ զգուշ  
վարվել: Ասա տեսնեմ, ինչ ես մտածել այդ առ-  
թիվ:

— Անցյալները, երբ հյուր էի Հասան աղային,  
խոսակցության ընթացքին, առանց խոսք բանալու  
եբազիս կամ առհասարակ Տեմենան աշիրեթի  
մասին, ասացի, որ այսքան ժամանակ գտնվում  
եմ իրենց շրջանում, բայց առիթ չեմ ունեցել ուխ-  
տի գնալու Անահիտի կաթնաղբյուրներին, խնդրե-  
ցի որ ինձ տանի այդ սրբազան վայրերը տեսնե-  
լու: Անահիտը եթե ձեր մեծ մայրն է, ապա և  
մեր էլ պաշտած կուռքն է եղել, ասացի:

— Շատ լավ, որդի, խոստացել էի քեզ իմ թո-  
ռան՝ Հյուսեինի քվրայությունը: Այդ պարագա-  
յին ավելի լավ կլինի, որ թոռանս թլպատման  
հանդեսը կատարենք Մնձուրի Անահիտի կաթնաղ-  
բյուրներում, վարդապետ (վարդավառ),— ասաց  
նա:

— Իսկ Տեմենան աշիրեթը ինչ միջոցներով  
կարող ես բերել տալ, որ չկասկածեն,— հետա-  
քրրքրվեց Սեիդ-Ռզան:

— Այդ ևս մտածել եմ: Մեր տունը քվրայու-  
թյան (կնքահայրություն) կարգով կապված է

Ապասանցիների աշիրեթի հետ: Ես նրանց մոտ  
էլ եղել եմ ու Հասան աղայի հետ որոշել ենք ուխ-  
տագնացության օրը՝ նույնպես վարդապետին:

Լսելով այս մանրամասնությունները, Սեիդ-  
Ռզան գրկեց, համբուրեց և օրհնեց ինձ:

— Իմ տերը՝ Տեմեն-Կուլապին քեզ օգնական,  
մորդ ծծերի կաթը, կաթը Անահիտի թող հալալ  
լինի քեզ,— ասաց նա:

Նախամտածված հաշտության ծրագիրը կա-  
տարվեց հաջողությամբ: Վելի աղան, ըստ իր  
խոստման, ուխտի բերեց Տիապ աղային: Նրանց  
աշիրեթների աչքի ընկնող մարդիկ երբ կաթնաղ-  
բյուր հասան, մենք արդեն տեղավորվել էինք  
հնադարյան ավազանի մոտի ծաղկամարգ կանա-  
չի վրա: Ռեյսերենց Սեիդ-Ռզան ուրիշ մի քանի  
սեիդների և փիրերի հետ դիրք էին գրավել առա-  
ջին կաթնաղբյուրի մոտ և դիտում էին խումբ-  
խումբ նոր ժամանող ուխտավորների մոտենալը,  
որոնց մեջ տեսան Տիապ և Վելի աղաների ժամա-

նումը և խմբով ընդառաջեցին նրանց:  
Միմյանց ողջունելուց հետո աշիրապետները  
մոտեցան Սեիդ-Ռզային, նախ փեշը համբուրե-  
ցին, ապա ուսհամբյուրով ողջադուրվեցին:

Մինչ այդ, ես ողջունեցի Վելի աղային:

Պատասխանելով ողջունիս, գրկեց ինձ ու համբուրեց:

Մինչ այդ էլ Հասան աղան իր հետևորդներով ոտքի էր ելել: Երկու ոխերիմ թշնամիների ակնարկները առան իրար և սարսուռ անցավ սրբաներից, նախ՝ դաժան դեմք ստացան, ապա քարացան կանգնած տեղերում:

— Յա վայրիմն Տեվրեշ-Կուլապի,— աղոթելով Սեիդ-Ռզան մոտեցավ Տիապ աղային:

Ես կանգնեցի Հասան և Վելի աղաների միջև, հանկարծ երկու կողմից երկու թշնամիները պոկվեցին տեղերից և առանց որևէ բառ արտասանելու ողջագուրվեցին:

Մնձուրի լեռները թնդացին հրացանի որոտից: Տուփիկ-պապան արձագանքում էր դժուր-զուռնայի սրտառու և հոգեհույզ երգերի ելեջները: Մի ուրիշ տեղ ձիարշավ էր, նշանաձգություն: Մի տեղ էլ սրինգներից միալար հնչող լա-լա-լա-ն էր գեղգեղում, ուրիշ տեղ ջիրիդ էին խաղում: Ցնծություն մեջ էին բոլորը՝ բարեկամ թե թշնամի, հայ թե քուրդ, բոլոր-բոլոր ուխտավորները:

— Տե՛ր Օհան, տե՛ր Հոհան, փրե՛ք Միբագան: Հայտնվեց երկայնաբազուկ Տեր-Օհանը՝ արծաթե թասը ձեռին: Նա մոտեցավ թշնամի պետերին, նախ՝ հայերեն պահպանիչ ասաց, ապա՝ քրդերեն: «Ել՛ք Անայե-փիլի» ասելով, Անահիտի կաթնաղբյուրի ջրից նախ սրսկեց հակառակորդների վրա, ապա խրոխտ ձայնով հայտարարեց.

— Սերե Գանիա Անահիտի տըշմեն պենա տոսթ: Տըշմեն չինու Վենկե Անահիտի, պըրա է թո, պըրա է թո վենկ քենո, կոնե պըրայան-շըթե Անահիտի փաք քենու: [Անահիտի աղբյուրի վրա թշնամին բարեկամ է դառնում: Թշնամի չկա: Անահիտի ձայնը քո եղբայրը, քո եղբայրը կկանչե: Անահիտի կաթը եղբայրների թափված արյունը մաքրում է]:

Թշնամիները մոտեցան Տեր-Օհանին, կարգով համբուրեցին ուսը և նրա առաջնորդությամբ մոտեցան առաջին կաթնաղբյուրին, բուռ-բուռ խմեցին, ապա խմեցրին իրար ու կրկին ողջագուրվեցին:

Տուփիկ-պապան հսկում էր հեռվից, Մնձուրի գազաթներում ձյան հաստ շերտերը փայլելով էին արևի ճառագայթների տակ, իսկ ժողովուրդը խայտում էր:

Նախապես կարգադրված էր, որ հաշտության այս արարողության ներկա գտնվի Միբագների տոհմապետ Երկայնաբազուկ Տեր-Օհանը: Սեիդ-Ռզան կողմերի հանդեպ չեզոքություն էր պահում: Տեր-Օհանը կատարեց իր պարտականությունը և

հաշտված թշնամիներին առաջնորդեց Սեիդ-Ռզայի մոտ:

Ըստ ընդունված կարգի, հաշտվող թշնամիներին ուր ուր առաջ էր տեղ հասել, նկատվում էր տանուտերը և իր մոտ էր հրավիրում ուշ եկող թշնամուն, որն այլևս մաքրադործվում էր թշնամությունից և եղբայրական ձեռք երկարում իր նախկին հակառակորդին:

— Հյուրը աստծունն է, աղաներ, այսօր օջախը Մամգունների և օջախը Տեմենանների՝ մեկ է: Իմ տիրոջ՝ Տեվրեշ-Կուլապի շունչը, Անահիտի ձայնը (հրամանի իմաստով) հոգուս վրա, աչքերիս վրա է: Եղբայրս՝ Տիապ, իմ հոգևոր հայր Սեիդ-Ռզա, Մամգունների հոգևոր հայր Օհան-տետե, կնքահայրս իմ անունից և աշիրեթիս անունից ձեզ ճաշի է հրավիրում: [Հյուր-կնքահայրը ես էի և իր անունից ճաշի հրավիրելու պատիվը ինձ էր վերապահում]:

Հյուրերին հրավիրեցին մասնակցել սեղանին: Դա սեղան չէր, այլ համաժողովրդական խրախճանք: Հինգ տեղ օջախ վառած սաճե հաց էին թխում, մի տեղ՝ օրման-քեպապի, խորովում էին փայտե ցցերի վրա անցրած շիշեկը, մի ուրիշ տեղ սաճ-դավուրմասին կճկճում էր օջախի վրա, մի տեղ էլ շոպան-քեպապին խորովում էր անթեղ կրակի տակ ծածկված մորթի մեջ:

Նորից փառաբանվեց Անահիտի կաթնաղբյուրների սրբությունը, նորից վերակոչվեց մեր նախնիների անցյալ հզորությունը, նորից օրհնվեցին սրի և զենքի շնորհիվ Դերսիմի անկախությունը պահպանող քաջերի հիշատակը և Դերսիմը հովանավորող սրբերի անունները:

Մնձուրը թնդում էր հրաձգության որոտից, մատաղները քըլթըրլթում էին բացօթյա օջախների վրա: Խորովածների, մատաղների, թխվող սաճե հացերի հոտն ու բույրը միախառնված սրինգների գեղգեղանքին, վարդավառի ուխտագրեցությանը տալիս էին նավասարդյան խաղերի տոնական երևույթ: Տոն հաղթանակի և հզորության, տոն անցյալի փառքի վերակոչման:

Այդ տարվա վարդավառի ուխտագնացության խանդավառությունը, որ այնքան հարազատորեն դիմավորվեց ներկաների կողմից, իր մեջ խտացելով էր կրոնականից ավելի քաղաքական բնույթ՝ երկու լավագույն աշիրեթների հաշտությունը:

Մնձուրի Անահիտի կաթնաղբյուրը կատարած էր իր դերը, ավանդությունը օգնեց կրոնական վարագույրի տակ սքողելու քաղաքական նպատակը:

Աղջիկներին խումբը երգում էր.

Տոյէ Տուժիկ, տըշման թըրքան [թրքաց դուշ-  
ման լեռ է Տուժիկ]  
Քոյէ Մունզուր, քոյէ փիլան, [Հզոքութեան  
սուրն է Մնձուր]  
Շըթէ Անա, շըթէ մա-ա [Կաթն Անահտա կաթ  
մայրական]  
Քամ օ պուրէ պէնա պըրա: [Ով որ խմե հղ-  
բայր կլլա):

Մի ուրիշ խումբ.

Մընձրա լեռը րարձր սար ա,  
Չինր պիսիցը անհալ ա,  
Ջուրն աղըրըին հալալ կաթ ա,  
Ընտուց խմողն անմահ ա:

Ունյաբերնց Սեիդ-Ռզան, Միրազեհնց Տեք-Օհա-  
նր և միջնորդ Վեիի աղան հուզումով ունկնդրում  
էին հայ և քուրդ ժողովրդի երգերը և ուրախանում  
չեւոր բերված հաջողությամբ:

Դա 1913 թ. հուլիսյան պատմական մի օր էր:

\* \* \*

Թաքսինների քրդախոս հայերը դեմ էին աշիրե-  
թամիշյան մարտերին, նրանք դինյալ չեզոքու-  
թյուն էին պահպանում նույնիսկ երբ իրենց աշի-  
րեթը կոչվում էր ուրիշ աշիրեթի դեմ: Այս պարա-  
զան հայտնի էր բոլորին և նրանք գովում ու հար-  
դում էին հայերին: Պարագան տարբերվում էր,  
երբ աշիրեթը կոչվում էր արտաքին թշնամու դեմ,  
ասում էր Լաճն Հեսն Թորոմանի Զեյնալ աղան,  
որը ութսուն տարեկանի մոտ սպիտակամորուս,  
լայնաթիկունք, բարձրահասակ, կայտառ և աշ-  
խույժ մի ծերունի էր, և ավելացնում.

— Մենք շատ գոհ ենք մեր դրացիներից և  
հպարտ նրանց սխրագործություններով: Ոչ ոքի  
չեն զիջում առաջնությունը, երբ կոչվում ենք թուր-  
քերի դեմ, մարտերին մասնակցում են ոչ միայն  
զենք կրող տղամարդիկ, այլև կանայք ու երեխա-  
ները:

Զեյնալ աղան խանդավառությամբ էր խոսում  
«ձիրանե հերմենիների» (դրացի հայերի) հանդը-  
նության, հավատարմության և անվեհերության  
մասին:

— Զեզոքության դեպքում ձեր դեմ կովող թըշ-  
նամի աշիրեթը փոխվրեժի չի դիմում թեև չեզոք,  
բայց նույն աշիրեթին պատկանող հայերի նկատ-  
մամբ, քանի որ, ըստ աշիրեթապետական ավան-  
դական օրենքների, աշիրեթի բոլոր անդամները  
հավասարապես բարեկամ կամ թշնամի են նկատ-  
վում մյուս աշիրեթի կողմից և հակառակը: Աշի-  
րեթամիշյան կոնվենիում հայերի չեզոքությունը

հավասարապես հարգվում է թե մեր աշիրեթի  
անդամների և թե հակառակորդի կողմից, որով-  
հետև նրանք ցանկանում են, որ վեճ ու կոնվ տե-  
գի չունենա համացեղակիցների միջև, և դա  
հայտնի է բոլորին: Նույն ըմբռնումներով և նույն  
ձեռքով վարվում են նաև աշիրե Միրազանների  
անդամները:

— Իսկ եթե պատահի, որ ձեր աշիրեթի ան-  
դամ որևէ հայի շարիք հասցվի, ինչ դիրք կբռնի  
աշիրեթը, քանի որ չեզոքությունը փոխադարձ է և  
վնասվողը չեզոք հայն է:

— Նման պարագաներում ամբողջ աշիրեթը  
ուրթի է կանգնում անիրավվածին պաշտպանելու  
համար, որովհետև հայերի պահած չեզոքությունը  
ընդհանուրի օգտին է, իսկ վնասված հային  
պաշտպանելը աշիրեթի պարտականությունն է:

Արտաքին աշխարհից մեկուսացված լեռնաշ-  
խարհի այս ժողովուրդը, նույնիսկ լեզուն կուրցը-  
նելուց հետո էլ, զարմանալիորեն պահպանում էր  
իր ազգային դիտակցությունը և ծայրահեղորեն  
անխնա էր իր ազգային և կրոնական զգացումնե-  
րը վիրավորողների նկատմամբ: Պահպանելով  
հայ լինելու դիտակցությունը, խուսափում էին  
խառնամուսնությունից: Հայերը և քրդերը ազգա-  
յին և կրոնական հավատալիքի և ավանդական ըն-  
տանիքի սրբությունը անվթար պահելու համար  
չէին ամուսնանում միմյանց հետ: Թեև քրդերին  
օբիեկանապես արտոնված էր ամուսնանալ հայ  
աղջիկների հետ, սակայն հայ աղջիկը, բացի բըռ-  
նությունից, դեպքերից, կամավորապես չէր ամուս-  
նանում քրդի հետ:

\* \* \*

Խոզաթի կուսակալության Բուր գյուղում իրա-  
կանում ոչ մի իշխանություն չկար: Ինչպես ինք-  
նանկախ շրջանի բոլոր գյուղերը, այս գավառակն  
էլ կառավարվում էր ինքնուրույն կերպով: Թուրք  
կառավարության քաղաքական նպատակն էր եղել  
գավառապետի կոչումով և ամսականներ վճարե-  
լու շլացումով կաշառել Քեմալան և Սեիդան աշի-  
րեթների առաջնորդներին և նրանց միջոցով թա-  
փանցել Դերսիմի սահմաններից ներս, սակայն  
նման բոլոր փորձերը մնացել էին անհետևանք:  
Ճիշտ է, քուրդ գավառապետը կապ էր պահում  
թուրք իշխանության հետ, բայց զինվոր չէր տա-  
լիս, հարկ ու տուրք չէր վճարում, անվանապես  
կրում էր գավառապետի պաշտոնը, բայց թույլ չէր  
տալիս, որ թուրք զինվորը, պաշտոնյան և կամ

ժանդարմը մուտք գործեին իր սահմաններից ներս:

Թուրք կառավարությունը գիտակցում էր իր անգործությունը և առերևութաբար լուր, որպեսզի անվանական բարեկամությունը շեշտված թշնամության չվերածվեր, որովհետև այս գյուղի աշխարհագրական դիրքը և ի մասնավորի կամրջի պաշտպանության հարցը մեծ նշանակություն ունենր Կամախի (Անի ամրոց) ամրության համար:

Կամախը գտնվում էր վերը հիշված երկու աշիրեթների անմիջական սպառնալիքի տակ: Մնձուրի երեք գագաթները Կամախը բաժանում էին Դերսիմից և այդ գագաթների հսկողությունը գրեթե մինչև Եփրատ դեռի ձախափնյա շրջանը գտնվում էր այդ աշիրեթների անմիջական տնօրինության տակ: Այդ էր պատճառը, որ թուրք կառավարությունը գիտակցաբար աչք էր փակում այն բոլոր ասպատակությունների նկատմամբ, որ կատարվում էին դեպի Կամախի և Երզնկայի շրջակա լեռնային գյուղերը: Նման արշավանքների ժամանակ զսպիչ ուժեր չէին ուղարկվում ասպատակների դեմ, այլ բավարարվում էին խոզաթի իշխանությունը տեղեկացնելով կատարված կողոպուտների մասին և հրահանգ տալով հետապնդել և պատժել պատասխանատուներին: Խոզաթի իր կարգին լուր էր ուղարկում Բլուրի կառավարչին, թե Երզնկայից կամ Կամախից տեղեկացնում են մի շարք գյուղերում կատարված թալանի մասին և խնդրում են գտնել ու պատժել պատասխանատուներին:

Նման տեղեկություններ ստանալու ժամանակ Բլուրում տեղի էր ունենում կողոպուտի բաժանումը, և կառավարիչը խոսքն ուղղելով թալանի մասնակիցներին, հարցնում էր.

— Ձեզնից որեւէ մեկը մասնակցել է նման կողոպուտի:

— Սուտ է, աղա, զրպարտություն, դա լուրնեցիների կամ հայտարանցիների գործը կլինի, մեր աշիրեթները ե՞րբ են թալանով զբաղվել,—ասում ու ծիծաղում էին:

— Լուր կուղարկեմ խոզաթ, որ շուտով պատասխանատուները կպատժվեն:

Նվ այդպես հանգիստ սրտով ավարը բաժանելուց հետո կազմում էին երկրորդ և երրորդ արշավների ծրագիր-հատակագիծը:

Դերսիմի սահմաններից դուրս, Կամախի, Ակնա և նույնիսկ Երզնկայի շրջանի լեռնային գյուղերից շատերը, զերծ մնալու համար դերսիմցիների արշավանքից, փոխանակ դիմելու կառավարության պաշտպանությանը, դիմում էին այսինչ

կամ անինչ աշիրեթապետի հովանավորությանը և տարեկան որոշ նվերներ ուղարկելով աղաներին, խանումներին և կամ նրանց տան անդամներին, որպես առաքեւ, ֆիւրաւներ և կամ հարկատուներ, զերծ էին մնում ասպատակությունից:

Կողոպուտների զոհ էին դառնում ինքնապաշտպանությունից զուրկ անզեն և անպաշտպան հայ ու թուրք գյուղերը: Այդ էր պատճառը, որ ամեն գյուղ ուներ իր աղան կամ բեկը, որ կողոպուտ, բայց և համայնքը պաշտպանում էր արտաքին թշնամուց, և կամ Դերսիմում պաշտպան մի աշիրեթի մի սեիգ, մի քիվրա էր ընտրում, որոնք խնայում էին առավելապես բարեկամացած հայերին: Այս վերջին պաշտպանության ձևը ավելի ձեռնտու էր, քան գյուղի մեջ թուրք աղայից և բեկից կողոպուտվելը:

Բլուրը որպես սահմանամերձ դեպի Եփրատ նայող լեռնապարին և որպես անառիկ շրջան մեծ ազդեցություն էր ձեռք բերել ինչպես շրջակա գյուղերի, նույնպես և մի շարք աշիրեթների սահմաններում: Ինչպես Տեմենան աշիրեթը արևելյան Դերսիմում Սանասարի (Սանսա) կիրճի դռների պահակն էր նկատվում, այնպես էլ Բլուրին վիճակվել էր կամուրջի և Կամախի կիրճի պաշտպանության իրավունքը:

Առանց այս աշիրեթների դիտության և հավանության դեպի արևմուտք ոչ մի արշավանք չէր կարելի կատարել:

\* \* \*

Շեն և Հագս գյուղերի միջև ընկած տարածությունում գտնվում էին հարյուր մեծ ու փոքր եկեղեցիների փլատակներ, որոնք հավանաբար մտել են հինավուրց Եկեղյաց գավառի մեջ, որը համընկնում է Երզնկայի շրջանին:

Իրար վրա կուտակված սրբատաշ քարեր, այստեղ ու այնտեղ ընկած խոյակներ, ոչ մի տող գրավոր արձանագրություն, ոչ մի կտոր մագաղաթ, բացի ժողովրդի մեջ պահպանված հակասական ավանդություններից և առասպելներից:

Մի կողմը կործանված Հագսն էր, որ մինչև Շեն երկարող տարածության վրա, որպես պատմական կոթողներ անցյալի հզորության, թողել էր եկեղեցիների ավերակները, մյուս կողմը՝ այն մանրանկար Հագսը, որը կործանված ավանի բնիկներն էին հիմնել խոթաց-ձորի արևելյան ափին:

Հին Հագսը կործանվել էր Շենի հետ միաժամանակ, ավանդական պատմությունը միևնույն

էր, վկայութիւնները պերճախոս, միայն բնակչութիւնը հետագայում անվանափոխված: Խուժաց-  
ձորից մինչև Տուժիկ-պապայի փեշերը ապրում  
էին ավելի քան 120 հազար բնիկներ՝ Հայտարան-  
ցի, Խոանցի, Ժիպրանցի, Ալանցի, Միրազցի,  
Ապասանցի և այլ աշիրեթների անվան տակ, բո-  
լորն էլ ալեխներ: Խուժաց-ձորի ամրութիւններին  
իշխում էին Տեմենան, Հայտարան, Քալան և Յու-  
սուֆան աշիրեթապետները և սակայն չկային  
Հագսից մինչև Շեն հարյուրից ավելի եկեղեցիներ  
կառուցող Խուժաց-ձորին իշխող նախկին տերերի  
անունները:

Թեև կործանված, բայց մինչև այսօր իրենց  
գոյութիւնը պահպանող անխոս այս կոթողները  
ասում էին, թե ժամանակին հարյուրից ավելի ե-  
կեղեցիներ կառուցող մի ժողովուրդ ապրել և աի-  
րապեակ է Խուժաց-ձորի անմատչելի և անառիկ  
բնական ամրոցներին: Թեև ջնջվել էին այդ կո-  
թողները կառուցողների հայկական անունները,  
բայց զգացվում էր նրանց ներկայութիւնը, տես-  
նւթում և շողափվում նրանց ձեռակերտը՝ վեմ  
բար, կործանված տաճար, գեղակերտ խաչքար,  
որոնք կան ու կմնան որպես անխորտակելի կեն-  
դանի վկաներ անցյալի պատմութեան:

Կառուցողները չկային, գուցե և կային տար-  
բեր անունների տակ, բայց վերապրողները ան-  
վթար պահել էին անցյալի ժառանգութիւնը:  
Ժիշտ է, բնակչութիւն չէին հաստատել Շենից  
մինչև Հագս կործանված սրբատեղիների ավերակ-  
ների վրա, չէին վերականգնել հները և կառուցել  
նոր եկեղեցիներ, բայց և այնպես ձեռք չէին տվել  
խաչքարերին, չէին օգտագործել դրանք իրենց  
կարիքների համար, չէին անհետացրել կոթողնե-  
րը, այլ լքել ու հեռացել էին, հավանաբար խու-  
սափելու համար բնական այն պատուհասից, որը,  
ըստ ավանդութեան, կործանել էր այդ ավանները:

Կործանված պատմական Հագսը գտնվում էր  
Շենի արևելքում, Ղըզըլ-քիլիսի արևմուտքում՝  
Խուժաց-ձորի արևմտյան ափին, Սիմ և Սուրբ-  
լույս լեռների անմիջական պաշտպանութեան  
տակ:

Տիրողները, ջնջելու համար պատմական անց-  
յալի հետքերը, թեև հնարավորութիւն չեն ունեցել  
բոլորովին անհետացնելու կենդանի վկաներին,  
բայց անվանափոխել են տեղանունները, Սուրբ-  
լույս լեռը՝ Սիլպուս, Կարմիր եկեղեցին՝ Ղըզըլքի-  
լիս, Հագսը՝ էքըզ վերանվանելով:

Հատկանշական մի երևույթ՝ Հագսից հյուսիս-  
արևելք, Խուժաց-ձորի խորքը տանող ճանապար-  
հին, երեք լեռնագագաթների իրար միացնող խո-

ռոշավոր մի հարթութեան վրա հեռվից նկատվում  
էին իրար վրա դարսված ժայռաշերտեր: Դրանք  
կանգուն կամ տապալված տապանաքարեր, խաչ-  
քարեր և վեմ քարեր էին: Բազմաթիվ ու բազմա-  
տեսակ էին քարակերտ այդ կոթողները, մեկը  
մյուսից գեղակերտ, մինն ավելի լայն ու հաստ,  
մյուսը ավելի բարձր ու նեղ, մեկը փորագրված և  
ծաղկազարդված խաւ քարի սրտին, մյուսը դուրս  
ցցված քարի ընդերքից՝ ձեռակերտ ու նախշուն:  
Շատերը տապալված էին, մեծամասնութիւնը  
մինչև կեսը թաղված հողի, ավազի և խճաքարի  
մեջ, կային, որ թեքված և թիկն էին տված իրար:

Ըստ տեղական ավանդութեան, Խաչաց-ձոր  
էր կոչվում այս վայրը, որ լեռնային տեղաշարժի  
հետեանքով փոխել էր իր տեղն ու դիրքը և դար-  
ձել մի անմատչելի թաքստոց:

Նրեք ուղղութեամբ դեպի լեռնածերպերը խո-  
րացող խաչքարերի բանակը գնալով ավելի և ա-  
վելի էր թաղվում հողի մեջ և անհետանում սարե-  
րից պոկված ժայռակույտերի տակ:

Հետաքրքրական այն էր, որ փլատակներ,  
կառուցների ավերակներ չկային, և ուշադիր դի-  
տողը կարող էր եզրակացնել, որ արևելյան սա-  
րալանջին, դեպի ձորամեջ երկարող խաչքարերի  
հավաքականութիւնը տեղական չէր, որովհետև  
ավելի շատ էր տակնուվրա եղած և ավելի շատ  
իրար վրա դարսված, քան հյուսիսից դեպի վար  
գահավիժած խաչքարերը: Այս բոլորից պարզ էր,  
որ տեղաշարժածները եկել էին հյուսիսից ու ա-  
րևելքից և միացել արևմտյան բնիկներին, կազ-  
մելով եռանկյուն մի խառնարան: Ինչպես երևում  
էր կանգուն մնացած տապանաքարերից և խաչ-  
քարերից, այստեղ տեղաշարժը ավելի մեղմ էր  
եղել, քան հյուսիսում ու արևելքում, որովհետև  
արևմուտքում կանգուն էին մնացել տապանաքա-  
րերի վրա ամրացված մեծ խաչքարեր: Տապանա-  
քարերի քանդակների մեծամասնութիւնը պատ-  
կերում էր կենդանիներ: Մի տեղ էլ մի հեծյալ  
հետապնդում էր քարայծին: Կային անվթար մնա-  
ցած բարձրագիւր շիրիմներ, որոնց մեկ կողմը  
եթե թաղված էր հողի մեջ, մյուս կողմի վրա հըս-  
տակ երևում էին գուսանի գործիքներ, գինու կամ  
ջրի փարշ, թասածե բաժակներ: Կային արևի սկա-  
վառակի նմանվող և աստղեր խորհրդանշող այն-  
պիսի քանդակներ, որ հիացում էին պատճառում  
դիտողին: Ամեն մի քանդակ, ամեն մի նկար ներ-  
կայացնում էր առանձնահատուկ արվեստի նմուշ:  
Քանդակներում գերակշռում էին կաքավի, աղավ-  
նու, խոյերի, եղնիկների, ձիու, քարայծի, եղջե-  
րու, որսորդի, ձկնորսի պատկերները՝ առնված

ծաղկազարդ շրջանակների մեջ: Մեծ վարպետության մեր ժողովրդաված խաչքարերը՝ կլոր շրջագծեր, համաչափ անկյուններ, իրար ագուցված փորագրություններ, մեկը մյուսին լրացնող նախշուն ծաղիկներ:

Մի պատվանդանի վրա հպարտությամբ կանգնած էր միակտուր ապառաժե մի խաչքար, որի բարձրությունը երկուսուկես փայտաշափ էր (գավազան—94 սմ.), լայնքը՝ մեկ փայտաշափ և երեք մատ, իսկ հաստությունը՝ կես փայտաշափ: Դարերի խորքից մեզ նայող գեղակերտ այդ կոթողը ծաղկազարդված էր այնպիսի նուրբ գծերով և այնքան գեղեցիկ դարձնարձիկներով, որ մարդ կարծում էր, թե աշխատանքը կատարված է ոչ թե մոխրագույն միակտուր քարի վրա, այլ նկարված է թղթի կամ աշխատված է ձեռագործ կտորի վրա: Այդ կոթողի կենտրոնում, երեք համաչափ շրջանակների մեջ, իրար ագուցված երկու թռչունների պատկերը կազմված էր ծաղկագիր երկու տառից՝ ՄԱ: Սիրամարգի կամ փայտյանի կերպար ներկայացնող այս երկու տառերը այնքան խորը և նուրբ էին փորագրված, որ կարծես երկու թռչուն բնական այս գեղատեսիլ անդորրության մեջ իրար վիզ պլված, կտուց-կտցի սիրաբանում են: Մ և Ա տառերը եթե վարպետի անվան և ազգանվան սկզբնատառերը չէին, ապա ներկայացնում էին այբբենական տառերի թվահամարը՝ Մ—200. Ա—1=201+551=752 թ.:

Մեկ ուրիշը մի փայտաշափ բարձրությամբ տապանաքար էր, երեք մասով թաղված հողի մեջ: Քարի միակտուր եզերքի շրջանակները ծաղկազարդված էին, շրջանակի կենտրոնում՝ վահան, նետ և աղեղ, խրոխտ կեցվածքով որսորդը աչք ձեռքով ցույց էր տալիս սրընթաց փախչող քարայծին: Թվագրված էր՝ ՄԿԴ=264+551=815 թ.:

Կար մի խաչքար ևս, թեքված մի ուրիշի վրա, մոխրագույն քարից, առաջին խաչքարի գծագիր ծաղիկներից տարբեր գծիկներով, ավելի նուրբ և գեղակերտ: Բարձրությունը՝ երկուսուկես փայտաշափ և չորս մատ, լայնքը՝ մեկ փայտաշափ և մեկ թիզ, հաստությունը՝ կես փայտաշափից վեց մատ ավելի: Թվագրված՝ ՇԻԲ=522+551=1073 թ.:

Մարդիկ չէին բնակվում այդ վայրերում, օձերի բուն, գազանների թաքստոց ավերակները լքված էին բոլորից, ոչ ոք չէր փորձել բնակություն հաստատել լայնատարած այս ավերակների շրջակայքում, նույնիսկ նույն անունը կրող գյուղը, որ Սին, Սեն կամ Շեն էին կոչում (նայած տեղական արտասանությանը), հեռացել էր իր նախաանվանակցի շրջակայքից և բույն դրել Մալի դեպի

հարավ նայող բարձունքին ու պատսպարվել անտառի խորությունների մեջ:

Եվ այս բոլորը գտնվում էր Դերսիմի վարչական կենտրոնի՝ Խոզաթի (Խոզան) սահմաններում, Մալի անմիջական հսկողության տակ:

Խնչ էր ասում ավանդությունը:

Մամեգի կամ Մամիկ իշխանի տիրապետության ժամանակ Մեծկերտից և Խոզաթից ավելի մեծ և շեն վայր է եղել Գր. Խոսավորչի և Տրդատ Թագավորի կողմից հիմնված եկեղեցիների այս գավառը, որ կործանվել է աստծո պատուհաս երկրաշարժից:

Տուժիկ-սլասլայի և Մալի սրբերի (Դիրերի) միջև ահավոր կռիվ է տևել ունեցել մեծ մոր՝ Անահիտի տաճարները կործանողների և նրանց տեղը եկեղեցիների կառուցողների պատճառով: Դա եղել է այն ժամանակ, երբ Անահիտի տաճարները եկեղեցիների են վերածվել, նոր տաճարներ կառուցվել: Երկու սրբերի կռիվները տևել են հարյուրավոր տարիներ, բայց երկուսն էլ շատ զորավոր են եղել, մեկը՝ Տուժիկը, Անահիտի պաշտպանը, մյուսը՝ քրիստոնեության հովանավորողը:

Ժամանակի ընթացքում Տուժիկ-պապային օգնության են եկել Մունդուր-պապան (Մնձուր լեռ), Պաղը-պապան, իսկ Մալին՝ Սելը (Սիմ) և Սիլպուսը (Սուրբ-լույս): Ու այսպես արևելքն ու արևմուտքը իրար են զարնվել, պայքարը տևել է երկար, ի վերջո հաղթանակել է Տուժիկը և կործանել եկեղեցիների ավանը, ուր այլևս ոչ ոք չի համարձակվել բնակություն հաստատել:

Այսպես էր ասում ավանդությունը:

Եկեղեցականների մեջ վեճ է ծագել, բաժանվել են երկու խմբակցության, վեճերը խորացել, դավադրությունը ուժեղացել, քենն ու ոխը ատելություն է հասել, կրոնական մեծավորները հաշտության լեզու չեն գտել, այդ բոլորի մեծը՝ Մալը, բարկացել և կործանել է այն, ասում էր մի ուրիշ ավանդություն:

Թե ինչու Անահիտի պաշտպանությունը վերագրվում էր Տուժիկ-պապային և նրա դաշնակից Մնձուրին ու Պաղին, իսկ քրիստոնեության հովանավորությունը՝ Մալին և նրա զինակից Սելին և Սուրբ-լույսին, բացատրվում է նրանով, որ Անահիտի կաթնաղբյուրները գտնվում են Մնձուրի լեռներում, որը ամենամեծ սրբատեղին էր, իսկ Տուժիկը և Պաղը աշխարհագրորեն դրացի էին Մնձուրին: Իսկ Մալին վերագրված քրիստոնեության պաշտպանի դերին հիմք է ծառայել այն բանը, որ Դերսիմում գտնվող սրբատեղիների մե-

ծամասնութիւնը ընկնում էին Մալ, Սել և Սուրբ-լույս լեռների շրջակայքում:

Հալւոյրի հայտնի ս. Կարապետի վանքը գտնվում էր Մալի անմիջական շրջապատում, ավելի ճիշտ՝ Մալից կազմված մի քանի գագաթների միացման տեղում, իսկ հռչակված Կարմիր եկեղեցին (Ղըզըլքիլիս)՝ Սելի հովանավորութեան տակ, Իսկ դեպի արևելք՝ Քղիի (Խորձիան) կողմն ընկած Սուրբ-լույսը մի շարք սրբատեղիների և վանքերի (Աստվածածնա, ս. Նշանի, ս. Դավթի) կենտրոնն էր:

1888 թ. Տամատ Ֆերիդ փաշայի և Տելրիշ Մյուշլուր փաշայի կրած ամոթալի պարսութիւնից հետո սուլթան Համիդը նույն փաշաների խորհրդով որոշում է հրի ու սրի մատենել ապրտամր Դերսիմը: Այդ նպատակով մեծաքանակ քարյուղ է փոխադրվում երեք ուղղութեամբ՝ Խար-լիւղից-Խոզաթ, մինչև անտառապատ լեռները, Կամախից, Օվաճգի ուղղութեամբ, դեպի Տուփիկ-յապա, Նրդնկայից՝ Բոլոմորիի և Ղուղուլանի ուղղութեամբ դեպի Ղըզըլքիլիս գտնվող անտառները:

Սուլթան Համիդը մտադրվել էր քարյուղով վառել ինքնակախ Դերսիմի բոլոր անտառները, այնտեղ բնակվող ժողովրդի հետ միասին: Իրագործելու համար ճիշտապէս այդ որոշումը, նա լայն իրավասութիւններով պաշտոն է տալիս Տամատ Ֆերիդ փաշային և հրամայում է ոչ ոքի չխնայել: Ֆերիդ փաշան, վստահ իր հաղթանակին, կարգադրում է ամեն ինչ և անցնելով գործի, երեք ուղղութեամբ զինվորներ է կենտրոնացնում գրավված շրջաններում (Խոզաթ, Բոլոմորի և Օվաճգ), ապա քարյուղը մոտեցնել տալով անտառների մերձակայքին, հրամայում է քարյուղի թիթեղները թափել անտառի մեջ և կրակ տալ ամեն կողմից:

Ըստ Տիապ աղայի պատմածի, իրենք ամրացած են եղել Տուփիկի բարձրավանդակում, Ալանցիք, Միրագցիք Շեյխ Հասանան աշիրեթի հետ դիրք են գրավել Խութաց-ձորի ելքի և մուտքի թաքստոցներում, Խուրշիդան աշիրեթը ամրացել է Մալի անտառներում, երբ սկսել են անտառները վառվել:

Կրակոցներ չէին լսվում, թուրք զորքը դիրք էր գրավել հրդեհից հեռու գրավյալ շրջանների բարձունքներում՝ գնդակահարելու համար կրակից փախուստ տվողներին:

Կյանքի ու մահվան օրհասական այդ պայքարում օգնության հասան Տուփիկն ու Մնձուրը, Մալն ու Սելը, Պաղըն ու Սիլպուար: Արևելքից,

արևմուտքից, հյուսիսից ու հարավից մի ահլն-թարթում սանձազերծվեց այնպիսի մի ահալոր փոթորիկ, որ ամբողջ Դերսիմը իր վիթխարի լեռնաշխարհով սարսեց հիմքից: Տուփիկի գոռումնե-րին միաժամանակ պատասխանում էին Մնձուրն ու Պաղըն, Մալն ու Սելը, Տիգկինն ու Սիլպուար: Աշխարհի վերջն էր, երկինքը պատռվել և Դերսի-մի բոլոր ջրերը կարծես օդն էին բարձրացրել ու թափվում էին հրդեհված անտառներին: Անձրեին հաջորդեց կարկուտը, սառցի մեծ կտորներ էին թափվում ցած, հարվածում, սպանում: Մոտավորապես հինգ ժամ տևած փոթորիկը դադարեց, երկինքը պարզվեց, արեգակը լուսավորեց քիչ առաջվա խավարը, կարծես ոչինչ, ոչ մի փոթորիկ չէր եղել, անդորր և խաղաղ էր մեր լեռնաշխարհը:

Նրբ դուրս եկանք քարայրներից, լեռները թընդում էին ուրախութեան, երջանկութեան, բերկրալի հավարի հաղորդումից:

Մեր սրբազան լեռների ընդվզումը թուրքի դեմ փրկեց մեր ժողովրդին ահալոր խարույկից և անխնա պատժեց մեր կույս անտառները կրակի տվող զաւմներին:

Բացի Տիապ աղայից, ուրիշ շատ ու շատ աշիրեթապետներ զանազան ձևերով պատմում էին այդ աղետի մասին և ամեն մեկն իր տեսած կամ գիտցած ձևով էր բացատրում այն: Այսպես, օրինակ, Տեմենան աշիրեթի մեջ խոսվում էր ս. Սարգըսի հայտնութեան մասին, որը Մալի ամենաբարձր գագաթից գրոհել է թշնամու վրա և թուրք զինվորներին, ավելի ճիշտ անտառների հրձիգներին, ոչնչացրել իր բոլոր ձիու սմբակների տակ և դիակները նետել անձրեկից գոյացած հեղեղների մեջ:

Մի ուրիշ աշիրեթ վերագրում էր դա Անահիտի զորութեանը: Կային նաև, որ խոսում էին Տուփիկ-պապայի արձակած թնդանոթների մասին: Ուրիշները պատմում էին Հաղբթի-Խոզորի՝ էլիսաի (ս. Գեորգ) միջամտութեան մասին, որն իր փոթորիկներով և կայծակներով առաջինն է Սուրբ-լույսի գագաթներից պատասխանել Մալի փիրի օգնության կանչին:

Պատմում էին, թե Դերսիմի անտառներն այրելու փորձը շատ սուղի է նստել սուլթան Համիդին, նրա ուղարկած Տամատ Ֆերիդ փաշան հաղիվհազ կարողացել է մորթը ազատել և մի քանի թիկնապահների օգնութեամբ Նրդնկա ապաստանել, իսկ Դերսիմը հրո ճարակ դարձնելու համար ուղարկված բանակից (թիվը հայտնի չէ, ոմանք

10—15 հազար, ուրիշները՝ մինչև 50 հազար էին հաշվում) ոչ մի զինվոր չի աղատվել:

Լեռների տիրոջը վերագրված բնական աղետն այնքան անակնկալ և այնքան հանկարծակի էր վրա հասել, որ բանակը հնարավորություն չի ունեցել թաքստոցներ որոնելու, այնպես որ զինվորների մի մասը մնացել է փուլ եկած ծառերի տակ, ումանք կայծակնահար են եղել, ուրիշները ըշվել են հեղեղներից, իսկ ընդթյան աղետներից աղատվածներին ոչնչացրել են քրդերը: Քրդերի ձեռքն է ընկել մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք:

Բնական այս պատահարը առիթ է տվել Դերսիմի հայ ու քուրդ բնակչությանը ավելի մեծ ջերմեռանգությամբ հավատալու սրբազան լեռների հյուշագործությանը և նրանց վերագրելու թրք-րակոն բանակի բնաջնջվելը:

Տարակուսանքը, թե ինչպե՞ս կլինեն, որ Շենը կործանող Տուժիկը և Մալի դեմ պայքարող Մընձուրը (մեկը՝ կռապաշտության, մյուսը՝ քրիստոնեականության սլաշտպան) համագործակցաբար կըռվեն թուրքի դեմ, Տիապ աղան պարզաբանեց այսպես:

Անահիտի տաճարները քանդող Գր. Լուսավորչի մտրից չի անցել այրել տալ Դերսիմի անտառները և բնաջնջել ժողովրդին: Նա վերացրել է կռապաշտությունը և հաստատել քրիստոնեությունը, տաճարը մնում էր տաճար: Նույն տաճարը, որ երեկ Անահիտի անվան փառաբանությանն էր օգտագործվում, այսօր քրիստոնեության սրբատեղի էր: Իսկ Մնձուրը կամ Տուժիկը պաշտպանում են Անահիտին, որովհետև նա մեր անտն է (սուրբ մայրը), նա ապրում է Մնձուրի դագաթներում և իր կաթնաղբյուրներով ուժ ու կորով, սեր ու խաղաղություն է ներշնչում, իսկ Տուժիկը արիության, ազատության, քաջության և անխնայությանն է: Երբ հարցը վերաբերում է կռապաշտության և քրիստոնեության պայքարին, Մնձուրն ու Մալը կռվում են, դա ընտանեկան և երբին պայքար է, բայց երբ հարցը վերաբերում է ընդհանուր թշնամուն, այսինքն՝ թե կռապաշտության և թե քրիստոնեության ոխերիմ թշնամի մահմեդականության վարած բնաջնջող քաղաքականությանը, Մնձուրն ու Տուժիկը, Մալն ու Սելը, Պաղըն ու Սիլպուսը միանում և հավաքաբար կռվում են արտաքին թշնամու՝ թրքական բռնակալության դեմ:

\* \* \*

Պատահում էր, որ ինքը՝ մյուսվեզիրը՝ այսինքն՝ կապալառուն, ցանկություն էր հայտնում

այցելելու այդ տարվա համար իր սեփականությունը նկատվող գյուղը և մի քանի օր հյուր մնալու այնտեղ: Նման դեպքերում գյուղացիությունը և արսափի էր մատնվում, որովհետև հյուր գալու ցանկության տակ թաքնված էին այլ ցանկություններ, որոնք ընդհանուր սովորություն էին դարձել թրքաբնակ գյուղերի համար, այսինքն՝ թուրք բեկը երբ լուր էր ուղարկում, թե հյուր է գալու իրենց դուռը, թուրք գյուղացիությունը ինքնաբերաբար հասկանում էր, որ բեկը կամ լեկզադեն գալիս է քա՛ծ խաղցնելու:

Քա՛ծ խաղցնելու սովորությունը թուրքի ազգային առանձնահատկությունն էր: Խնջույք, կերուխում առանց քա՛ծի հաճույք չէր: Քա՛ծ, զալաքմա, Նտալիս, տոսք հոմանիշ բառեր էին բուրբ անվան հետ:

Քա՛ծը թեթևաբար, գծից դուրս ընկած, ճամփան շեղած, նրբամարմին, բարձրահասակ, գեղանի, լավ երգող և պարող երիտասարդ թրքուհի էր, որը վարձատրության փոխարեն երգում, պարում, պարտ էր խաղացնում (կյոպեկ) և ամեն տեսակ շվախություններով զվարճացնում հալըստության, անբարոյականության և զեխության մեջ հղիացած թուրք բեկերին և բեկզադեններին: Քա՛ծը ծախու ապրանք էր, որի վախճանը դանակի հարվածով կամ գնդակի միջոցով նույն խրախճանքի ժամանակ նույնիսկ մերկամարմին մահանալն էր: Թեև շատերը զոհ էին դնում քա՛ծ խաղացնելու, քա՛ծերը իրար ձեռքից հափշտակելու կոնվենիում, բայց և այնպես շարունակում էին հետևել իրենց պապերի օրինակին և գերազանցել նրանց: Քա՛ծ խաղացնելու ճազգային առաքինությունը թուրքերի նվիրական հաճույքն էր և այդ գործում զոհվող շենիդ (սրբացած հերոս) էր նկատվում: Այդ ուղղությամբ համբավ էին վայելում ի մասնավորի Քեշիզադի ստորոտում՝ Ճիմիկ, Բթաուհ (հայ և թուրք խառն) և Փրկչաթաղ (Փղկըթաղ) ապրող կալվածատերերը՝ Վալիթ և Իյրֆեթ բեկերը, նրանց զավակները և թոռները, որոնք ամենամեծ աշարճիներն (կապալառուներ) էին նկատվում Երզնկայից սկսյալ մինչև Դերսիմի գրավված շրջանները:

«Քա՛ծ խաղցնելը» և աշարճիությունը միմյանց հետ սերտ առնչություն ունեցող դժբախտ երեվույթներ էին, որի զոհը անպաշտպան գյուղացիությունն էր:

Ասվեց, որ եթե բեկը կամ բեկզադեն ցանկություն էր հայտնում այցելել կապալով վերցրած իր դուռը, գյուղացիությունը մատնվում էր սարսափի: Խոսքս հայ և քուրդ դուռերի մասին է,

թուրք գյուղացիին վարժված էր, նա ինքն էլ էր մասնակցում նման «սուրբազան» տոնակատարութիւններին: Եթե պատահէր, որ բեկը հյուր գնար դաշտային գյուղերի հայ գյուղացիութեանը, նրանք հետեւելով իրենց թուրք հարեանների օրինակին, վարձում էին թուրք ցնծուհիներ և դահաւընում բեկի կամ բեկզադեի քմահաճութեանը, մինչդեռ պարագան բոլորովին տարբեր էր լեռնաշխարհում ապրող հայերի և քրդերի նկատմամբ:

Ասվեց նույնպես, թե աշարճիները անձամբ չէին գնում կապալով վերցված գյուղերը, այլ վարձում էին շահաններ, իրենք բավականանում էին իրենց բնակավայրի մոտերքում գտնվող գյուղերի շահատակութեամբ: Բայց մի տարի Վայիթ բեկի տղայի՝ Հազմ բեկի խելքին փչել էր իր ընկերներով զվարճանալ լեռնային գյուղերից մեկում և վայելել լեռնական աղջիկների կամ հարսների վայրի գեղեցկութունը:

Այդ տարի Վայիթ բեկը 160 գյուղի աշարը վերցրել էր իր վրա՝ Պալապանի շրջանից մինչև Դերջան և Քղիի մոտերքը:

Հազմ բեկը լուր էր ուղարկել Պալապանի խնձորեկ գյուղի իր շահնային, թե չորս բեկզադե դալու ևն գյուղ զվարճանալու, ուստի շահնա Օսման աղայից խնդրել էր կազմակերպել այնպիսի խրախճանք, որ բեկը ամոթով չմնար ընկերների առաջ:

Օսման աղան, ծանոթ լեռնաշխարհի բնակիչների բնավորութեանը, ընտանեկան պատվի հանդեպ ունեցած բծախնդրութեանը, խորհուրդ էր տվել Հազմ բեկին զվարճանալ դաշտային գյուղերում, ուր ամեն հարմարութիւն կար բավարարելու իր բեկզադե ընկերներին, առարկելով, թե լեռնային այս գյուղում ոչ օղի կա, ոչ գինի, ոչ ինճեսազ կամ ուր:

Բեկը ընդվզել էր և նույն օրը դուռ ուղարկել չորս ջորի բեռնված խմիչք և զանազան աղանդերներ, լուր տալով միաժամանակ, թե իրենց հետ բերելու են նվազախումբ, մնացյալը Օսման աղան կազմակերպելու է տեղում, ապահովելով հայ և քուրդ կյուզբլեքից ընտրված մի խումբ քաթեր:

Օսման աղան մատնվել էր տագնապի՝ ո՛ր դիմեր, ո՛ւմ հաղորդեր չարաբաստիկ այս լուրը: Երկար տատանումներից հետո, դիմել էր Ղերկյոզից Ալիին և խնդրել նրա աջակցութիւնը:

— Մտածել եմ ղուճիներ ուղարկել Բթառիճ կամ Փրկչաթող և այնտեղից բերել տալ մի քանի թուրք քաթ, որոնց հագցնել կտանք հայ և քրդա-

կան տարազ և այս ձևով խնայած կլինենք ձեր նամուսը,—եզրակացրել էր Օսման աղան:

— Մեր նամուսը ասացիր: Այլևս ինչ նամուս է մնում մեզ, երբ քաթեր են մտնելու մեր տներից և երս, խոսելու և հարաբերվելու են մեր հարսների և աղջիկների հետ: Չէ, աղա, ավելի լավ է Հազմ բեկը մեր գեղը վառե, քան թե մեր նամուսը դադե,—պատասխանել էր Ղերկյոզից Ալին:

Երկար խնդրելուց և իրենց սպառնացող վրտանգը մատնանշելուց հետո Ալին ստիպված խոստանում է խորհրդակցել գյուղի մեծերի հետ և տալ վերջնական պատասխան:

Նա դիմել էր Հալճից Սեդոյին, Միլլեթ-բաշի հաշիկ աղային և այլոց, որոնք երկար-բարակ խորհելուց հետո համաձայնել էին ընդառաջել Օսման աղայի խնդրանքին և դահացում տալ Հալճում բեկի ցանկութեանը, պայմանով, որ խնջույքը տեղի ունենար ոչ թե գյուղում, այլ գյուղից դուրս, աչքից հեռու Պղտիկ մոռու պաղ աղբյուրներում, և հյուրերին սպասարկեն ոչ թե գյուղի տղաքը, որ քաղով և կալով էին զբաղված, այլ շահնայի ղուճիները:

Որոշում են վրաններ խփել անտառի խորքում, այնտեղ տեղավորել Օսման աղայի բերել տալիք քաթերը և ընդունել հյուրերին ու պատճառաբանելով կալ ու քաղի եռուն շրջան լինելը, առաջարկում են հայերի կողմից Հալճից Սեդոյին, քրդերի կողմից՝ Գազլից Թեմիրին, որպես տանուտերեր ընդունելու բեկզադեներին և հյուրասիրելու նրանց:

Յայլաններից բերել են տալիս տասից ավելի խորովածացուններ, լարում են երեք մեծ վրան, ստեղծում ամեն հարմարութիւն «պատվարժան» հյուրերին արժանավայել դիմավորելու համար:

Գալիս են չորս բեկզադեները հինգ նվազողների ընկերակցութեամբ: Բթառիճից խնձորեկ ճամփի տեղութիւնը չորս ժամ էր, հյուրերին դիմավորում են Կալաճու դուրանում և առաջնորդում ուղղակի անտառ, ուր խարուկների վրա խորովվելիս են լինում չեփիճներն ու շիշեկները, իսկ պաղ աղբյուրների ակերում սառչում են օղին ու գինին:

Բեկզադեները ուղղակի սքանչանում են ընդունելութիւնից և հիանում վրանների շրջապատի բնական գեղեցկութիւնից:

— Տեհեթ, տեհեթ,—բացականչում են բեկզադեները,—ճհենեթ պուրատա իմիշ, խապերմըս յոք (Սքանչելի է, սքանչելի, արքայութիւնը այստեղ է եղել, մենք լուր չունենք):

Սկսվում է կերուխումը: Լեռների գեղատեսիլ

լանակարը, անտառի ծով կանաչը, պաղ աղբյուրների գլզլան ձայնը և քածերի ներկայութունը խելքահան են անում հյուրերին, որոնք թաս-թասի ետեից պարպում են սառնորակ օդին և համտես անում օրման-քեպապին, շոպան-քեպապին, յալլաներից բերված թարմ մածունն ու սերը:

Ուղն ու քամանշան, կլարնետն ու դափը, ընկերակցությամբ քանոնի, արձագանք են տալիս Լրդիչների շաբլիններին ու գազելներին:

Օսման աղան հյուրերի կողմից շնորհակալություն է հայտնում խնձորեկցի հայերին ու քրդերին բեկղադեններին ցույց տված անսպասելի այո ճոխ հյուրասիրության համար:

Գլուխները տաքանում են, խանդավառությունը գնալով ավելանում է, յաշասուններն ու վաթսուսուները հաջորդում են իրար: Ընդհանուր խանդավառության և ինքնամոռացության այդ ոյահին հանկարծ անտառի խորքից լսվել են կրակոցներ և քրդերեն գոռում-գողումներ: Գազլից Թեմիրի և Հալսից Սեզոն դիմել են զենքի և կրակել՝ ի պաշտպանություն հյուրերի: Բեկղադենները ոտրոսափի մատնված թաքնվել են վրաններում և խնդրել Օսման աղային ղուժիներով պաշտպանել իրենց և թույլ չտալ յաբանի (վայրի) քրդերին՝ մոտենալու վրաններին:

Հրաձգությունը շարունակվել է երկու կողմից, ղուժիները դիմել են փախուստի, Թեմիրի և Սեզոյի ուղղմամբ բերք սպառվել է: Նրանք, հրացանները նետելով մի կողմ, պատյաններից մերկացրել են իրենց կեռ թրերը և կանգնելով վրանների առաջ, քաջալերել բեկղադեններին, որ չվախենան:

Մինչ այդ, անտառից դուրս են խոյացել մի տասնյակ հրացանակիրներ և զենքերն ուղղելով Թեմիրի և Սեզոյի կրծքերին, սպառնացել են կրակել և կոտորել բոլորին, եթե անձնատուր չլինեն:

Թեմիրն ու Սեզոն փորձել են սրերով հարձակվել, սակայն Օսման աղան միջամտել և թախանձել է անձնատուր լինել և պատճառ չլինել սրյունահեղության:

— Թող կողոպտեն, թալանեն մեզ, միայն խնայեն բեկղադենների կյանքը: Վար դրեք ձեր թրերը և միջամտեցեք այս ավազակներին,— պազատել է Օսման աղան, կանգնած Թեմիրի և Սեզոյի միջև, որոնք ստիպված տեղի են տվել և թրերը դրել պատյան:

Ավազակներից երկուսը Սեզոյին և Թեմիրին առաջարկել են հանձնել թրերը: Օսման աղայի խնդրանքով նրանք տեղի են տվել, հանձնել թրերը և անխոս կանգնել վրանի առջև:

Ավազակապետի կարգադրությամբ Թեմիրի և Սեզոյի թևերը կապում և առաջնորդում են անտառի խորքը: Մինչ այդ, շորս հրացանակիրների հսկողության տակ բերվել են իրար կապված հինգ ղուժիները, որոնք հրացանաձգության ժամանակ փախուստի էին դիմել, սակայն նկատվելով պահակներից, ձերբակալվել և կապված վիճակում առաջնորդվել էին պետի մոտ:

Թեմիրի և Սեզոյի ձերբակալումից հետո մտել են վրանը, ձեռք-ձեռքի իրար կապել շորս բեկղադեններին և տարել անտառի խորքը, ապա վերադառնալով Օսման աղայի մոտ, առանց կապկպելու, նրան առաջնորդել են պետի մոտ, որը առանց կարևորություն տալու Օսման աղայի աղաչանքներին՝ աղատ արձակելու ձերբակալվածներին, հայտարարել է:

— Մի վախենար, քեզ և քո ծառաներին չենք սպանի, բայց եթե շարունակես բարեխոսել այդ շների մասին, քեզ էլ, ծանոթներիդ էլ կախ կըտանք անտառի այս ծառերից, լավ է, որ լռես և լսես այն, ինչ ասելու եմ քեզ: Ապա հարցրել է Օսման աղային:

— Դու լսած ես տեմենանցիների աշիրեթապետ Պաքո աղայի անունը, ճանաչո՞ւմ ես նրան:

— Ինչպես չէ, հյուր եղած եմ իր խոնախում:

— Այս կովոդները Պաքո աղայի աշիրեթի զինակիրներն են, իսկ ես՝ նրա օգնականը, աղան հին հաշիվ ունի մաքրելիք Վայիթ բեկի հետ և պարտականություն դրած էր իմ վրա՝ հսկելու նրա տղուն՝ Հազիմի շարժումներին: Ինչպես տեսնում ես, պարտականությունս լավ կատարած եմ, այստեղից հեռանալուց երկու ժամ հետո ազատ կարձակվեն քո հինգ ղուժիները, և դու քո քերած քածերի հետ կգնաս Վայիթ բեկի մոտ ու կասես իրեն այն, ինչ տեսար: Չորս բեկղադեններից երեքի կյանքը վտանգի տակ չէ, Հազիմի մասին ինքը՝ Վայիթ բեկը թող բանակցի Պաքո աղայի հետ, նրանց հետ Պաքո աղայի մոտ տանելու ենք այն երկու քաջերին, որ կովեցին մեր դեմ: Աղան թող ինքը որոշի նրանց պատիժը: Առայժմ այսքանը, դուք մնացեք այստեղ, վրանների առաջ, խնայում եմ տարիքդ և չեմ կապել տալիս ձեռքերդ: Իմ հրացանակիրներից երկուսը մնալու են այստեղ և ուղիղ երկու ժամ հետո, երբ այլևս մթնելու է, աղատ են թողնելու ձեզ: Ահա իմ վերջին խոսքը,— ասում և երկու հրացանակիրներին հարկ եղած հրահանգները տալուց հետո, առանց որևէ թալանի, հեռանում է վրանի մոտից, իր հետ տանելով կապված վեց դերիներին:

Վայիթ և Իյրֆեթ բեկերը տեղեկանալով ահա-

վոր անդրի մասին և ծանոթ լինելով Պարո աղայի լինավորությանը, փոխանակ դիմելու Երզնկայի մյուս անարիժիտ և զինվորական ուժ պահանջելու, հաջորդ օրն իսկ դիմում են Ճիմինում ապրող բուրդ Սմկոյին և խնդրում գնալ Պաքո աղայի մոտ՝ իմանալու նրա պայմանները շորս բեկղադենների փրկագնի մասին:

Օսման աղայի միջնորդությամբ, Վայիթ և Իյրֆեթ բեկերը պարտականություն են դնում Սմկոյի վրա, որ խոսի աղայի հետ նաև այն երկու անմեղների մասին, որ կրակ են բացել և կռվել աղայի հրացանակիրների դեմ, պաշտպանելու համար բեկղադեններին:

Սմկոն կատարում է իր վրա դրված պարտականությունը և խոսում աղայի հետ, որը հազարական ոսկի փրկագին է պահանջում ամեն մի բեկղադենի համար և 500-ական ոսկի այն հայի և քրդի համար, որոնք համարձակվել էին զենք բարձրացնել իր մարդոց դեմ:

Հինգ հազար ոսկու փրկագինը վճարել են և վեց կալանավորներին ազատել գերությունից:

Լեռնցի ճեյրաճ քաժեր խաղացնելու Վայիթ բեկի տղայի՝ Հազիմ բեկի և իր ընկերների ցանկությունը վերջացել է ողբերգությամբ, որը պատճառ է եղել, որ լեռնային գյուղերի աշաբը տրվի հայերին և քրդերին և ոչ թե թուրքերին և կամ թուրք բեկերի կողմից աշարը առնվելուց հետո, չնչին վարձատրության փոխարեն, այն հանձնում էին հայ և քուրդ կապալառուներին:

Այս ձևով Պալապանի, Ղուզումանի, Քղիի և Դերյանի լեռնային շրջանների գյուղացիությունը զերծ մնաց թրքական ստորացուցիչ քաժ խաղացնելու արարողությունից:

Այս տարիների համար խիստ գաղտնի պահված և Դերսիմում Սենրգան աշիրեթապետին վերագրված այդ ասպատակությունը և բեկղադենների առևանգումը երկար տարիներ մնաց թուրք բեկերի հիշողության մեջ, որովհետև քրդերը ծաղրելու համար թուրքերին, առիթը ներկայանալուն պես դիտել էին տալիս նրանց.

— Ինչո՞ւ չեք գալիս մեր գեղերը քաժ խաղացնելու, ճեյրան հարսներ ունենք և աղջիկներ էլ,— և կամ՝

— Ձեր բեկերը ե՞րբ են գալու Խնձորեկ քաժ խաղացնելու:

Այս և նման դարձվածքները, առածի կարգ անցած, օգտագործվում էին լեռնաշխարհի հայերի ու քրդերի կողմից:

Եվ սակայն տեղին է այլևս չթաքցնել իրականությունը և ասել ճշմարտությունը, թե Օսման

աղան, Էրբ առաջին անգամ հայտնել էր բեկղադենների որոշումը Խնձորեկում քաժ խաղացնելու մասին, Ղերկյուղից Ալին լինե մերժել էր նվաստացուցիչ և անպատվաբեր այդ առաջարկությունը, բայց նկատի ունենալով, որ գուցե կրկնվեն նման երևույթները և ավելի վտանգավոր հետեւանքներ ունենան, խոստացել էր Օսման աղային խորհրդակցել գյուղի ավագների հետ:

Միլլեթ-պաշի Խաչիկ աղան, Հալճից Սեգոն և Գազից Թեմիրը փոխանակ ընդվզելու Օսման աղայի առաջարկության դեմ և նրան պատժելու մասին մտածելու (հետագայում Օսման աղան միշտ իր զարմանքն էր հայտնում, թե ինչպե՞ս Խնձորեկցիները չսպանեցին իրեն և ընդառաջեցին իր դիմումին), սիրով ընդունել են այն և Ալիի միջոցով հավանություն տվել:

Իրականում շորսերի այդ խորհրդակցությունում (հայ և քուրդ ազգային ազատագրական շարժման կոմիտեի անդամներ) որոշում են պատժել բեկղադենների լրբությունը և մեկընդմիշտ նրանց գլխից ջնջել լեռնաշխարհում քաժ խաղացնելու միտքը:

Կոմիտեն լսելով Ղերկյուղից Ալիի զեկուցումը, որոշում է լուր ուղարկել Մլբեթում (Մհրերդ) հաստատված կոմիտեի պատժիչ խմբի ղեկավարությանը, մյուս կողմից տեղյակ պահել Պաքո աղային՝ իր մոտ տարվելիք հասութաբեր գերիների մասին:

Անթերի կատարվեցին կոմիտեի ցուցումները: Ձերբակալվեցին կոմիտեի անդամները և շորս բեկղադենները, երկու ժամ հետո ազատ արձակվեցին Օսման աղան և նվագախմբի անդամները, որոնք Ղուճիների օգնությամբ նույն գիշերը քաժերին հասցրին Բթառիճ, իսկ գույժը հաղորդեցին Վայիթ և Իյրֆեթ բեկերին:

Վեց գերիները Եփրատը անցնելով, հասնում են Տեմենան աշիրեթի սահմանները և տարվում Պաքո աղայի մոտ: Աղան փոխանակ քրդերի վրա բարկանալու, նրանց ներկայությամբ կըշտամբանքի ծանր խոսքեր է ուղղում Սեգոյին և Թեմիրին:

Եվ դառնալով ծառաներին, հրամայում է բեկղադեններին բանտարկել բարեկամների քալայրում և հյուրասիրել նրանց որպես աշիրեթի օջախին ապավինած հյուրերի, իսկ Սեգոյին ու Թեմիրին բանտարկել թշնամիների քարայրում, առնել խիստ հսկողության տակ և թույլ չտալ քարայրից դուրս գալու, մինչև դատվեն աշիրեթի ավագների խորհրդի կողմից:

Բեկղադենները հսկողության տակ առաջնորդ-

վում են քարապար, նույն միջոցին Սեգոն, որ մինչ այդ լոռիթյամբ ունկնդրելիս է լինում աղայի անարգանքները, պոկվելով տեղից։

— Աստված վկա, Պաքո, դու ինձնից ավելի լավ խաղացիր դերդ և, օգտվելով առիթից, լավ խախտառակեցիր մեզ էդ շների առջև,—ասում է ու ողջագուրվում Պաքո աղայի հետ։

— Այս օրվան վաղն ալ կա, Սեգո, այնպես արեցի, որ շները փոխանակ ձեզ կասկածելու, ձեր մասին բարեխոսեն և դուք կամ գեղացիք չենթարկվեք Վայիթ և Իյրֆեթ բեկերի վրեժ-խուրդությանը,—պատասխանում է Պաքո աղան և հրամայում չոպան-քեպապիով պատվել իր աղիզ հյուրերին։

Վայիթ բեկի բանագնաց Սմկոն, որ Պաքո աղայի հավատարմատարն էր, իր բանակցությունները վարել է ոչ թե աղայի, այլ Սեգոյի և Թեմիրի հետ, որոնք որոշել են փրկանքը և բեկդադեններին ազատ արձակելու պայմանները։ Վերջին կատակերգությունը խաղացվել է փերկագինը ստացվելու և բեկդադեններին ազատ արձակելու ժամանակ։ Գերիները դեռ քարայրից դուրս չբերված, Սեգոյին և Թեմիրին բանտարկել են աղայի մոր հյուրանոցում, ու երբ բեկդադենները առաջնորդվել են աղայի մոտ, նա հայտնել է, թե բացի երկու գերուց, որոնք զենք են բարձրացրել իրենց կռիվողների վրա, դուք չորսդ էլ ազատ եք և այս գիշեր հրացանակիրների պաշտպանության տակ կուղարկվեք մինչև Վայիթ բեկի խանը, իսկ երկու գերիները՝ հայր և քուրդը՝ ըստ քրդական ավանդական սովորության, զնդակահարվելու են ճեմաաթի որոշումով։ Բեկդադենները Հազիմ բեկի գլխավորությամբ ծունկ են չոքել Պաքո աղայի առջև և խնդրել խնայելու անմեղ մարդկանց կյանքը, խոստանալով բացի բեկերի ուղարկած հինգ հարյուրական ոսկի փրկագնից, մի-մի հատ էլ արաբական ձի նվեր ուղարկել աղային, եթե այդ երկու անմեղներն ազատ արձակվեն։

Պաքո աղան հրամայել է «բանտից» դուրս բերել հային և քրդին, որոնք ներկայացել են ձեռնակապ և կանգնել աղայի առջև։

— Այս բեկերը խնդրում են ազատ արձակել ձեզ։ Թեև ձեր պատիժը գնդակահարությունն է, բայց ընդառաջելով չորս բեկերի թախանձանքին, ձեր երկուսի կյանքը խնայում եմ, պայմանով, որ հնգական զոչ (խոյ) մատաղ անեք Անահիտի կաթնաղբյուրներին՝ ձեր ազատված օրից ամենաուշը քառասուն օրվա ընթացքում։ Համաձայն ե՞ք այս որոշմանը։

— Համաձայն ենք և խոստանում ենք մեր պարսեր կատարել նշված ժամկետից էլ առաջ և ձեր նշանակած մատաղացուները բարձրացնել երեք անգամ օխտը զոչի,—ասում է Հալճից Սեգոն և նույնը հաստատում է Թեմիրը, ապա երկուսը միասին դառնալով բեկդադեններին, շնորհակալություն են հայտնել միջամտության համար։

Ու երբ երկու կալանավորների ձեռնակապերը արձակել են և հրավիրել նստելու, աղան կատակի ձևով ասել է.

— Նորեն աղջիկ խաղցնելու կուգա՞ք մեր կողմերը։

Նույն օրը աղատ արձակվել են վեց կալանավորները, չորսը՝ դեպի Վայիթ բեկի խանը, երկուսը՝ դեպի Խնձորեկ։ Այսպիսով, Սեգոն և Թեմիրը գրպանած փրկագնի կեսը՝ 2500 դեղին ոսկի, իրենց մարդոց պաշտպանության տակ վերադարձել են Խնձորեկ։

Վայիթ բեկի կարգադրությամբ այդ տարի տուրքերից զերծ են պահել Հալճից և Պագլից կալերը։

\* \* \*

Մի անգամ կարևոր գործով գիշերը, առանց գյուղերը մտնելու, զգուշությամբ պետք է անցնեի Ավզերտ լեռան կետուկը, ապա՝ Ծփրատ գետը։ Ինձ ընկերակցում էին լեռնային անցքերին քաջածանոթ հովիվ Մստոն և քաջակորով Ճանպեկ Ղեմոն։

Գիշերը բավական առաջացել էր, երբ շեղեցինք ճանապարհը դեպի Անահիտի գոմերը, ուր ապրում էր հինգ ընտանիքից բաղկացած հայկական մի փոքր համայնք՝ մեր առաջնորդ Մստոյի սրտակից բարեկամները։

Հանդիպակաց լեռնագագաթը դեռ չհասած, հանկարծ Մստոյի ձիւն կանգ առավ։ Նրա անխոս ոգորումները՝ ձիւն առաջ մղելու, իզուր անցան։ Մստոն շշնջաց։

— Գայլեր կան, պետք է զգուշանալ։

— Որտեղից իմացար,—հարցրի։

— Իմ ձին միայն գայլերի ներկայությունից է կանգ առնում,—պատասխանեց Մստոն։

Իջանք ձիերից ու կրակելու պատրաստ վիճակում շարժվեցինք առաջ։ Հազիվ հիսուն քայլ առաջացած, կանգ առանք մթության մեջ դժվար բնորոշվող մի զանգվածի առաջ, որը նոր խեղդված ոչխարի դի էր։ Դրան հաևեցին խեղդված մյուս ոչխարների դիերը։ Խեղդված ոչխարների

շղթան երկու մյուսի իր բաժանվում՝ մեկը թև-  
վում իր դևայի արևմուտք, մյուսը արևելք:

Մենք բաժանվեցինք երկու մասի և գնում  
էինք խեղդված ոչխարների դիրքի ուղղությամբ:  
Հեռվից, Ավդերաի կենտրոնական գագաթների  
կողմից, լսեցինք շների հալոց և հովիվների գո-  
ռոց:

Հակառակ աղմուկ չհարուցելու մեր կանխա-  
գուշությամբ, պարտավորվեցինք երեք անգամ  
կրակ բանալ: Դա բարեկամական հանդիպման և  
ուղղություն տալու ազդանշան էր, որին պատաս-  
խանեցին համապատասխան ձևով, ապա երկ-  
րորդ ազդանշանով, թե գալիս են:

Հովիվները մեզ հասնելուց հետո միայն տե-  
ղեկացան ահավոր եղելությանը:

Քանի որ շատ էինք շտապում, միայն վերա-  
դարձին կարողացանք մի օր հանգստանալ ապա-  
հով այս գոմերում:

Մեր առաջնորդ Մստոն, որ մեծ հեղինակու-  
թյուն էր վայելում Դերսիմի հովվական շրջա-  
նակներում, խոսքն ուղղելով ավագ հովվապետ  
Զեյնոյին (Զեյնալ), հարցրեց.

— Դու, որ փորձառու հովիվ ես, ինչպե՞ս  
խաղի եկար:

Տելե վերկը (քած գայլը) խաբեց ինձ: Նա ա-  
ռաջնորդում էր տասից ավելի գայլ:

— Հապա շեմ՞րը՝ Զամոն, Ղենդիլը, Իլտրեմը,  
Արաբը և մյուսները ինչպե՞ս թույլ տվեցին, որ  
գայլերը քեզ խաղի բերեն:

— Շները մեղք չունեն, հանցանքն իմս էր:  
Մենք դեռ չէինք քնել, երբ շները իմաց տվեցին,  
թե գայլեր են մոտենում ոչխարների աղլներին:  
Դուրս եկանք ստուգելու: Մինչ այդ, վելին ու Հա-  
մոն զրահում էին Արաբին ու Զամոյին: Գայլերը  
դեռ չէին երևում, և մենք մտածում էինք աղլնե-  
րից դուրս հանգիստ նրանց և փոխանակ մեզնից  
մեկ-երկուսը մնալու հոտի մոտ, բոլորս մեկեն  
(վեց հոգի, ութ շուն) դուրս նետվեցինք դեպի  
կապույտ քարերը, ուր առաջնորդում էին մեզ  
Ղենդիլն ու Իլտրեմը:

Առաջինը Հեյտոն նկատեց երկու գայլ, որ  
խույս էին տալիս Արաբի կրծքի հարվածներից և  
վնասատու փախչում դեպի ժայռերը, շները կը-  
րենկակոխ հալածում և մեկ-մեկ հարվածում էին  
դայլերին: Մինչ այդ, Զամոն կռվի էր բռնվել մի  
ուրիշ գայլի հետ, որին օգնության հասան երկ-  
րորդ, երրորդ գայլերը: Իլտրեմը օգնության հա-  
սավ Զամոյին այն ատեն, երբ Զամոն կրծքի  
պողպատե սրածայր շիշը մխած գայլի կողը,  
ռռնել էր կոկորդից, իսկ մյուս երկուսը հարձակ-

վել էին Զամոյի վրա: Իլտրեմի գրոհը, մեր րա-  
ջալերական կանչերը փախուստի մատնեցին եր-  
կու հարձակվողներին, որոնք պաշարվեցին  
մնացյալ շներից:

Երկու դայլ տապալված էին, մյուսներին հա-  
լածեցինք ու դրանք բաժանվեցին երկու մասի ու  
փախան իրար հակառակ ուղղությամբ: Նույնն  
արեցինք և մենք ու շատ հեռացանք մեր գոմե-  
րից:

Ու երբ այդպես հաղթական վերադառնում  
էինք դևայի դժները, լսեցինք ձեր տված ազդանշ-  
անը և ձեր շնորհիվ ծանոթացանք ահավոր եղե-  
լությանը, որին մինչ այդ անտեղյակ էինք: Նոր  
միայն գլխի ընկանք, որ «տելե վերկը» խաղի է  
բերել մեզ: Երբ մենք շներով հալածելիս ենք ե-  
ղել մյուս գայլերին, նա պահվել է մերձակա պու-  
րակներում և մեր հեռանալուց հետո իջել գոմե-  
րը, բաց արել աղլի դուռը և քշել ոչխարների հո-  
տը: Որպեսզի շփոթի մատնի մեզ, խեղդել է  
հատ-հատ ոչխարներ և գցել շղթայաձև՝ մեկը  
մյուսի ուղղությամբ, ապա դիմել է խորաման-  
կության՝ իբր թե ոչխարները քշվել են արևմուտք  
և արևելք, մինչդեռ իրականում տարվել են դեպի  
Ավզերտ (հյուսիս): Զեր ազդանշանով տեղեկա-  
նալով իրականությանը, կրկին հետապնդեցինք  
մնացյալ գայլերին, մի քանիսին, այդ թվում նաև  
«տելե վերկին», շները խեղդեցին: Պարզվեց, որ  
2170 կճղակավորից 95 կորուստ ենք ունեցել և  
դա՝ գայլերի խորամանկության հետևանքով:  
Տասնյակ տարիներ ի վեր նման դեպք չէր պա-  
տահել: Զմոռանանք ասել, սակայն, թե առաջին  
անգամն էր, որ մի գիշերում շները հինգ գայլ  
խեղդեցին, որոնցից մեկը՝ «տելե վերկ»:

Ոչխարների կորուստն այնքան ցավ չէր պատ-  
ճառել հովիվներին, որքան երկու շան վիրավոր-  
վելը, որոնք դարձան վրում էին երկու մասնագետ  
նեռաճնեռի (վիրաբույժ) կողմից և այդ կսկիծն  
էլ մասամբ տանելի էին նկատում, երբ մտաբե-  
րում էին, թե աղատվել են «տելե վերկի» սար-  
սափից, որը վերջին ամիսներին լեռնաշխարհում  
ավերներ էր գործում:

Այս դեպքից ութ օր անց հովիվ Մստոյի հետ  
գնում էինք Ղըզըլքիլիսե: Արահետը Խուլթաց-  
ձորի արևելյան կողմով անցնում էր Փախ գյու-  
ղից: Ժամանակը ուշ էր, իսկ գիշերով անտառա-  
ծածկ սարալանջն անցնելը՝ վտանգավոր, ուստի  
հյուր մնացինք Փախից հյուսիս-արևելք ընկած  
հովվական գոմերում:

Զրույցի ընթացքում պարզվեց, որ դրանից  
չորս օր առաջ գայլերի ուրիշ ոհմակ նույն խաղն

է խաղացել մեր հյուրընկալների գլխին: Սակայն այստեղ պրահալորված շներին մեկը փոխանակ մյուս շների ու նովիլների հետ միասին հարձակվելու ոռնոցով խուժած ոհմակի վրա, զարանակալել է հոտի մոտ ու երբ «տեղեկները», օգտվելով հոտի կարծեցյալ անպաշտպանությունից, փորձել է նույնպիսի կատակ անել, ինչպես եղել էր առաջին դեպքում, տեղն ու տեղը խեղդամահ է տրվել այդ շան կողմից:

Հովիվները հավատացած, թե աստծո մատը կա շան այս վարմունքում, որոշում են ս. Սարգրսին ուխտի գնալ և յոթ խոյ մատաղ անել այն լեռն արտունների տակ, ուր գտնվում էր սրբավայրը և Լիս-աղբիրը:

\* \* \*

Լեռնային Դերսիմում ձիերն ըստ իրենց գործնական հատկանիշների երեք տեսակ էին լինում՝ նոսր (բացառապես հեծնելու համար), փեղեկներ (քարավանների առաջատարներ) և բեռնակիր (բեռնակիր. թուրքերը բառն աղավաղելով, ասում էին «պերկիր», ինչպես կարավանը՝ «բեկրան»):

Թուրքերում հայերին արտոնված էր ձիաբուծությունը, նույնիսկ նոսր ունենալը, մինչդեռ, ըստ տեղական ավանդությունների, հայերի տիրապետության շրջանում Դերսիմը հանդիսացել է ձիաբուծական գլխավոր կենտրոն, ցեղային նոսրյանների և փերշենկների հայրենիքը: Քղիի Աստղաբերդում, Կարմիր բերդում, Օրորի շրջանում, Մալ լեռան լանջերին հաստատված Մամիկ իշխանի կավածներում և զանազան այլ վայրերում արածելիս են եղել ցեղական ձիերի բազմաթիվ երամակներ:

Հայերի քրդանալուց հետո ձիաբուծությունը դարձել է քրդացած հայերի, իսկ ավելի ուշ՝ չերքեզների սեփականությունը:

Նոսրյանները և փերշենկները իբր թե սերած էին հրեղեն ձիուց, վայելում էին երկու զորավոր սրբերի՝ Հաղրեթի-խրդրի և Հաղրեթի էլիասի հովանավորությունը և ժառանգել էին հրեղեն ձիու արիությունը, իմաստությունը, խիզախությունը, վտանգը նախազգալու հատկությունը և տիրոջ հանդեպ հավատարիմ մնալու իմացական կարողությունը:

Նոսրյանը համարվում էր տիրոջը հավատարիմ, վտանգը նախազգալու հատկություն ունեցող արժեքավոր ձի: Պատահել են շատ դեպքեր, երբ ձին նախազգալով ճանապարհին տիրոջն սպառնացող

վտանգը, ախոռից դուրս չի եկել և, հակառակ սիրոյ ստիպումներին, համառու է դամված մնալ իր տեղում: Հետո, երբ ոտուղել թն ձիու նախազգուշացման պատճառները, պարզվել է, որ դարանակալ սպասողներ են եղել նույն օրը տիրոջն սպանելու համար, բայց շեն հաջողած՝ ձիու իմաստությունը շնորհիվ:

— Կյանքս պարտական եմ իմ Ալփասլանին: Անցյալ օրվա վտանգից ազատվելուց հետո այլևս եկա այն եղրակացության, թե ցեղային մեր ձիերը իսկապես սերած են Հաղրեթի-խրդրի հրեղեն ձիուց և վայելում են նրա հովանավորությունը, — երկյուղածությամբ ոլատմում էր Պարտի գյուղացի Զեյնալ աղան:

Ըստ Զեյնալի հավաստիացումների, չորրորդ անգամն էր, որ ձին փրկում էր իր կյանքը: Առաջին երկուսը արյան փոխվածի կապակցությամբ իրեն սպանելու համար ճանապարհին դարան մտած թշնամիների դավադրությունը նախազգալով ախոռից դուրս չգալու համառության շնորհիվ, երրորդը՝ դեպի Բուլմորի ճամփորդության ընթացքին, Բուլմորի ջուրը դեռ չհասած, ճանապարհը փոխելով փոխանակ այդ գյուղը գնալու, հակառակ իր բոլոր ստիպումներին, ձին տարել էր իրեն դեպի Շենակ:

— Հաջորդ օրն իմացանք, — պատմում է Զեյնալը, — որ բարեկամական հրավերով կանչված երեք աշիրեթապետները ձերբակալվել են թուրք զինվորական հրամանատարության կողմից: Չորրորդը հրավիրվածների մեջ ես էի, որ շնորհիվ Ալփասլանի իմաստության՝ ոչ միայն ազատված էի վտանգից, այլև բախտավորությունը ունեցա կազմակերպված հարձակումով ազատելու երեք ձերբակալվածներին և Պաղրի ստորոտում սպանելու բինբաշի Օսման բեկին:

— Իսկ չորրորդն արդեն ծանոթ է ձեզ, — վերջացրեց իր պատմությունը Զեյնալ աղան և հրավիրեց ներկաներին մասնակցելու փորձանքից ազատվելու տոնակատարության առթիվ մորթված մատաղների սեղանին:

Զեյնալ աղայի ակնարկած չորրորդ վտանգը, որը վերագրում էին հրաշագործության, տեղի էր ունեցել մեր ժամանակուց երկու օր առաջ: Սպասել էին կրոնապետ Սեիդ-Ալին՝ մատաղները մորթելու համար, այնպես որ ինձ ընկերացող Խոսն և Ճանպեկ Ղեմին, որ ինձ նման անտեղյակ էին պատահարին, հետաքրքրվեցին դրանով:

— Աճապարում էինք հասնել Ճեմաթին: Որպեսզի ճամփան կարճենք և ավելի շուտ հասնենք Ղրղըթիլիսի, որոշեցինք անցնել ձորամի-

ջով: Դեռ չէին հասել Տիֆլիսի գլուխը, երբ Ալ-  
փասյանս կանգ առավ, կանգ առան նաև Թեմուր  
ալայի, Մուսաֆա բեկի, Ալի աղայի և Քերո ա-  
ղայի ձեռքը, որոնք հետևում էին ինձ:

Պատրաստեցինք մեր զենքերը և սպասում  
էինք մարդկանց կամ դազանների հայտնվելուն:  
Թեմուր ազան նույնիսկ առաջարկեց իջնել ձիե-  
րից և գիրքավորվել հանդիպակաց ժայռերում:  
Սա փորձեցի խթանել ձին և առաջ մղել, բայց նա  
չշարժվեց տեղից և ականջները ցցած, կարծես  
ուսնկնդրում էր մեղ համար անխելի ձայներին:  
Նույն վիճակում էին զտնվում նաև իր ընկերա-  
կիցները: Ու երբ պատրաստվում էինք վար իջնել,  
ձին հանկարծ ուղկվեց տեղից և փոխանակ դեպի  
կիրճը դնալու, անսպասելի արագությամբ թեք-  
վեց դեպի աջ և շտապ կերպով բարձրացավ դե-  
պի անտառը: Ձիերի մեղմ վրնջյունը, անսպասելի  
արագությամբ դեպի վեր բարձրանալն այնքան  
հանկարծակի տեղի ունեցան, որ մենք՝ հեծվոր-  
ներս, սթափվեցինք, երբ ձիերը հասան ձորից  
մոտավորապես հինգ հարյուր մետր բարձր ըն-  
կած բացատը և խրխնջալով հինգը միաժամանակ  
կանգ առան:

Ձիերը խրխնջում են, երբ գյուղ են վերադառ-  
նում և կամ վտանգից փրկում են իրենց հեծյալ-  
ներին: Այլևս ոչ մի երկյուղ չկար նրանց աչքե-  
րում: Ականջները չէին ցցել, բաշերն էլ չէին  
շարժում: Հայտնի էր, որ արդեն հանգիստ են:

Ապահովության համար իջանք ձիերից և որո-  
շեցինք թաքնվել խորը անտառում ու թաքցնել  
նաև ձիերին, մինչև որ պարզվեր կացութունը:  
Ձիերն առանց ընդդիմության հետևեցին մեզ:

Հազիվ վառած մեր ծխամորճերը խորհրդակ-  
ցում էինք պատահածի ու պատահելիքի և ձեռք  
առնվելիք միջոցների մասին, երբ լսվեց ահավոր  
դղրդոց՝ հեղեղն էր որոտում ձորամիջում և իրար  
խառնած ճամփին հանդիպած ծառ, քար ու ամեն  
ինչ, որոտալով առաջ էր ընթանում:

Պատկերը զարհուրելի էր: Ոչ մի կաթիլ անձ-  
րև չէր եկել, ոչ էլ կար հեղեղ առաջացնելու բնա-  
կան որևէ երևույթ: Երկինքը թեև քիչ ամպամած,  
բայց օդը շատ խաղաղ էր: Եթե մի պահ նույն-  
իսկ չհավատայինք էլ մեր ականջները խլացնող  
հեղեղի աղմուկին, իրականությունը մեր աչքերի  
առջևն էր, հեղեղը, տասնյակ մետր բարձրու-  
թյամբ, մոլեգնորեն զարնվում էր ժայռերին և դի-  
վահարի նման սրբում տանում ամեն ինչ:

Մեր առաջին շարժումը եղավ ծնրադրել և  
բազկատարած աղոթել ջրի ամենահզոր տիրոջ՝  
Հազրեթի-խըդրի ամենասուրբ զորությունը, և

ապա անձայն, բայց միշտ ծնրադիր մոտեցանք  
մեր ազատարարներին ու համբուրեցինք նրանց  
սմբականերից մինչև կուրծքն ու պարանոցը, Ի  
պատասխան մեր երախտագիտության, ձիերը  
մեղմորեն խրխնջում և գոհունակությամբ լիզում  
էին մեր ձեռքերն ու այտերը:

Երկու ժամ հետո ձորը խաղաղվեց, հեղեղը  
ինչքան անակնկալ և հանկարծակի հայտնվել էր,  
նույնքան արագ անհետացավ, Ժե եթե ճամփի  
ընթացքին չպատահեինք հեղեղի պատճառած ա-  
վերներին, չպիտի հավատայինք, թե կես ժամ ա-  
ռաջ այս ձորով հեղեղ է անցել:

Ձորից բավական բարձր ընկած ճամփի եզեր-  
քի Տիֆլը հիմնահատակ էր եղել, տեղը անգամ  
հայտնի չէր: Զրադացականը և իր օգնականը,  
չնորհիվ իրենց շան նախազգուշացման, անտառ  
էին բարձրացել և փրկվել ահավոր այգ աղետից:  
Կամուրջից հետք իսկ չէր մնացել:

Երեկոյան, երբ հասանք Ղզըլքիլիոն և պատ-  
մեցինք պատահածի մասին, Ալթուն Հյուսեինից  
և Ղուզուլջանից եկող աշիրեթապետները պատմե-  
ցին Պաղը-պապայի, Մնձրա լեռան և Տուփկի  
«ճենկ»-ի մասին, որ սարսել էր հանդիպակաց  
սարերը, և տեղատարափ անձրևին հաջորդող  
կարկուտի գործած ավերների մասին, որ պա-  
տահասել էր հայրենիքի դավաճան Շահ Հյու-  
սեին-բեկի թոռներին, կոտորելով Պաղբում արա-  
ծող նրանց հոտերը:

Բազմաթիվ իրապատումներից մի ուրիշը ևս:  
Հայտարարն մեծ աշիրեթի հեղինակավոր անդամ-  
ներից չեղիկցի Մուրթուզա աղան ամեն շաբաթ  
այցի էր գնում իր ձիու դամբարանին և ամեն  
տարի մատաղ մորթում այն պուրակում, ուր  
գտնվում էր ձիու կիսանդրին, պատրաստված  
խառ քարից:

Մուրթուզան ջերմեռանդությամբ պատմում  
էր այն հրաշագործության մասին, որ կատարել  
էր իր ձին:

— Մարտը թուրք զորքերի դեմ տեղի էր ունե-  
նում այնպիսի ապառաժներում, ուր հեծյալ կռի-  
վը հնարավոր չէր: Նահանջող թշնամու ճամփան  
կտրելու համար ձիս կապեցի Շվոտի քարին կից  
մեծ կաղնուն և մի տասնյակ կովոդներով գիրք  
գրավեցինք բոլ քարերի կետուկում, որի ստորո-  
տից նահանջելու էր թշնամին: Ուրիշ ելք չունեին:  
Կովոդներս բաժանվեցինք երկու մասի: Ես իմ  
մարտիկներով խփելու էի աջ կողմից, իսկ Վելի  
աղան՝ ձախից:

Նահանջող թշնամին ամեն ճիգ թափում էր  
հասնելու զորաբաժնին, բայց երկու կողմից տե-

լայցող գնդակների տարափի տակ, ստիպված էր պաշտպանական մարտ մղելու Կովի թեժ պահին վիրավորվեցի, բայց թույլ չտվի մարտիկներին լքել իրենց դիրքերը և օգնության գալ ինձ:

Վերջիցս հոսող արյունից ուշքս կորցրել էի: Երբ զարթնեցի, տեսա, որ պառկած եմ Անահիտի գոմեքի վրաններում, որոնք շատ հեռու չէին Կովի վայրից, բայց անմատչելի էին թշնամու չեղելու մասն համար: Երազ էր արդյոք, թե իրականություն:

Թշնամուն պարտության մատնելուց և կես հարյուրյակից ավելի զինվորներ ու սպասավորներ գերի վարելուց հետո, երբ վերադառնում են վիրավորված տեղս ինձ փնտրելու, տեսնում են, որ չկամ: Երկար որոնումներից հուսահատ, երբ վերադառնում են գոմերը հանգստանալու և գերիներին քարայրներում բանտարկելու, ինձ գրտնում են պառկած վրանում, ու չեն հավատում իրենց աչքերին:

Հետագայում պարզվում է, որ ձին ատամներով կտրել է պարանը և հետևել տիրոջը: Ինչպես է կարողացել բարձրանալ այն ժայռերն ի վեր և ինչպես է հասել տիրոջ մոտ այն պահին, երբ նա ուռազնաց ընկած է եղել իր դիրքում, ուղղակի անհասկանալի էր:

— Վրաններից դուրս նետվելով, խելագարի նման վազեցինք դեպի այն կիրճը, որը միակ մուտքն էր գոմերը բարձրանալու: Կիրճի մուտքին հսկող երեխաները լուր էին բերել, թե մեր Եղբւրըմը (ձիու անունն էր), ատամներով ինչ-որ մարմին բռնած, դժվարանում է բարձրանալ կիրճըն ի վեր:

Հասանք ու տեսանք, տեսանք ու զարհուրեցինք: Ձին զգուշությամբ իր ատամներով բռնած տիրոջ գոտու ծալքից և մեջքին ամրացված փամփրջտակալի կաշվե թուկերից հանդարտ քայլվածքով բարձրանում էր կիրճի արահետով: Վիրավորին փոխադրեցինք վրանները: Ուսոն՝ որպես մասնագետ հեթմ, քննեց եղբորս վերքերը և գոհունակությամբ հաստատեց, թե վիրավորի կյանքը փրկված է: Ձին լիզելով մաքրել էր լերդացած արյունը և դադարեցրել արյունահոսությունը, այլապես նա մահացած կլիներ տեղիտեղը,—լրացրեց վիրավոր Մուրթուզա աղայի փոքր եղբայր Տաւրսոն, որի պաշտպանությանն ինձ հանձնված եղել գոմերը:

Փերշենկը քարավանի առաջնորդն էր, քարավանապետի աչքի լույսը: Փերշենկի կուրծքը, ճակատը, թամբը և թամբակալը զարդարված էին լինում զույնպզույն ուլունքներով և նախշված ար-

ծաթապատ փորագրություններով, կրծապանակը՝ եզերված բոժոժներով, կենտրոնից կախված բավական մեծ զանգակով:

Փերշենկին չէին բռնում, որպեսզի ազատ լիներ իր շարժումների մեջ և միշտ զգուշ ու զգաստ ճամփի ընթացքին:

Եթե պատահեր, որ փոթորիկի, մշուշի հետևանքով քարավանը կորցներ ճանապարհը և գտնվեր անել դրության մեջ, փերշենկը կանգ էր առնում և կանգնեցնել տալիս ամբողջ քարավանը: Նման դեպքերում քարավանապետի հրամանով վերջենկը աղատ էր արձակվում, որ հետադուր տեղանքը և որոշեր ճամփի ուղղությունը:

Քրդգեղից չորեպան Մինասը և իր որդի Գեվորգը շրջանին ծանոթ հայտնի չորեպաններ էին: Մինասը, որ երկար տարիների փորձառությամբ օժտված անվանի մարդ էր, սովորական չորեպան չէր: Ամենավտանգավոր բեռների փոխադրությունը վստահում էին նրան: Նա ծանոթ էր լեռնային բոլոր ճանապարհներին, երթևեկում էր Քրդգեղից Տրապիզոն, Կիրասունից Դերսիմ: Նա արհեստին մասնագիտացած ձիաբույժ էր:

— Դերսիմի համար զենք էինք փոխադրում Կիրասունի նավահանգստից դուրս ամայի մի վայրից,—պատմում էր Մինասը: Տասը հոգի ընկերանում են քարավանին, բոլորն էլ զինված և ծալված չորեպանի հագուստներով: Կենտրոնական ճանապարհով զնալը վտանգավոր էր, անցնելու էինք անմարդաբնակ լեռնային կածաններով: Քարավանին ճամփա ցույց տվողը Շապին-Գարահիսարի շրջանի Զիպերի գյուղից հանրածանոթ հայ բռնա չորեպան Նշանն էր, որը որպես տեղաբնիկ ծանոթ հայտնի լեռնագնաց, ընկերանում էր մեզ Կիրասուն-Շապին-Գարահիսար-Զիման-գաղի՝ միայն լեռնային արահետներով քարավանը առաջնորդելու նպատակով:

Շապին-Գարահիսարի հանդիպակաց սարերում էինք, մութը թանձրանում էր, բայց դեռ չէինք հասել այն գյուղը, ուր առաջնորդելու էր մեղ Նշանը: Արահետն անցնում էր լեռնային այնպիսի կածաններով, ուր ամեն մի քայլափոխի կարելի էր զահավիժել անդնդախոր ձորը:

— Վստահ ե՞ս, որ չենք կորցրել ճանապարհը,—մտահոգ հարցրի Նշանին:

— Շուտով հասնելու ենք մեր հանգստյան կայանը, ուր ապահով կարող ենք գիշերել,—պատասխանեց նա վստահ:

Փերշենկը, որ առաջին անգամ էր լինում այս սարերում, ամեն քայլափոխի կանգ էր պահում,

Հոսոսոսումս զկտինը, հետախուզում տեղանքը և կարծես ղժկամությամբ շարժվում առաջ:

Հսկանած էին կենդանիները, բայց վտանգավոր էր կանգ առնել և կամ մեր ներկայությունը հայտնաբերող կրակ վառել: Ըստ նշանի ցուցմունքների, ստիպված էինք առաջ շարժվել մինչև փրկության կայան հասնելը:

Փերշենկը հանկարծ կանգ առավ և վտանգը ազդարարող խրխինջով կանգնեցրեց քարավանը: Նշանը նետվեց առաջ, իրեն հետևեցին հինգ մարտիկ, մնացյալներս դիրք մտանք ծառերի ու ժայռերի ետևում: Փերշենկին առաջ մղելու նշանի բոլոր փորձերը անցան ապարդյուն: Ձին համառում էր, գլխից դարձրած արահետի հակառակ կողմը:

Մոտեցա փերշենկին և շոյեցի ճակատը:

— Հա, քեզ տեսնեմ, Արսլան, փրկիր մեզ այս կացությունից, — շնչացի ձիու ականջին:

Փերշենկը բարձրացրեց գլուխը, ցցեց ականջները, մի պահ կանգ առնելուց հետո, շարժվեց տեղից և փոխեց ճամփի ուղղությունը՝ փոխանակ ուղիղ դեպի հարավ գնալու, շարժվեց դեպի արեւելք:

Նշանը փորձեց կանգնեցնել ձիուն: «Կորրստյան է մատնելու մեզ այս խելագարը, չի կարելի շեղվել արահետից»: Միջամտեցի, ազատ ձգեցինք փերշենկի ընթացքը և քարավանն ու մարդիկ հետևեցին նրան:

Մի ժամ տեղը անձկության պայմաններում լուռ էինք բոլորս էլ: Առաջինը նշանը նետվեց առաջ և փարեկով ձիու վզին, բացականչեց.

— Ձի չես դու, այլ հուրի մեկիք, որ փրկեցիր մեզ և ընկերներիդ անխուսափելի աղետից:

Նա կանգնեցրեց փերշենկին, կանգ առավ և քարավանը, բայց մենք ոչինչ չէինք հասկանում նշանի խոսքերից: Նա մի անգամ էլ համբուրեց ձիու ճակատը, սրբեց արցունքները և շարունակեց.

— Դու սուրբ Սարգսի հրեղեն ձին ես, ես մատաղ ըլլիմ քու օտքերին, դու իզնից տասը հեղ, հարուր հեղ էլվելի խելք ունիս, — և դառնալով մեզ.

— Հիշում ե՞ք, երբ արևմտին կանգ առինք ճամփաբաժան նշանկայի առջև, ես մի պահ տատամսեցի: Հիմա նոր եմ հասկանում տեղի ունեցածի իմաստը՝ անպայման նշանկայի տեղը փոխել են, և դա պատահական գործ չէ: Ուրեմն, մեզ կործանելու մտադրություն ունեցող շարագործներ են եղել, որոնք դիտումսովոր կերպով կատարել են այդ տեղափոխությունը, որպեսզի

մենք փոխանակ մեղ սպասող Քեքո աղայի գոմերը գնալու, ուղղվենք դեպի գահավեժը, ուր առանց դժվարության կարող էին ոչնչացնել մեզ, ոչ թե քաջությամբ կռվելով մեր դեմ, այլ մեզ դավադրաբար մղելով դեպի անդունդը:

— Ահա այն արահետը, որ տանում է մեզ մեր գնալիք կայանը և ահա այն բացատը, որ ցույց է տալիս Քեքո աղայի գոմերի ուղղությունը:

Ուշ գիշերին անվտանգ հասանք այն իջևանը, ուր սպասում էին մեզ: Քեքո աղան կարգադրեց, որ անմիջապես երեք խոյ մատաղ անեն, որոնցից մեկը՝ փերշենկի ոտքերի առջև և արյունը քսեն իմաստուն կենդանու ճակատին, կրծքին և ականջներին, ապա հրամայեց իր զինակիրներին՝ լույսը դեռ չբացված պաշարել ուշուրումների (կածան) շրջակայքը և ողջ կամ մեռած բռնել շարագործներին:

Հաջորդ օրը մնացինք հանգստանալու, սպառնալով մարտիկների վերադարձին: Հետախույզ շների առաջնորդությամբ ավազակներին որոնելու մեկնած կռվողների խումբը վերադարձավ նույն օրը կեսօրին, բերելով չուլիս (ձախիկ) Ալիի դին և վիրավոր լազ Մուհարեմին, որը պատմեց չուլիս Ալիի գործած ոճիգների մասին, թե նրա կարգադրությամբ ինքն ու լազ Օսմանը փոխել են նշանկայի տեղը, որպեսզի քարավան թե ճամփորդ կածաններից վար թափվեն և իրենք կողոպտեն, թե լազ Օսմանը կարողացավ պաշարումից ազատվել, որովհետև կես ժամ առաջ մեկնել էր խմբի անդամներին օգնության կանչելու և այլն:

Քարավանապետերի պատմությունները փերշենկների «հրաշագործությունների» մասին շատ հարուստ էին, իսկ այդ բոլորի եզրակացությունն այն էր, որ փերշենկը ս. Սարգսի ներշնչումով տեսնում և զգում է վտանգը: Մարգիկ են թաքնված ճանապարհին, փերշենկը տեսնում ու կանգ է առնում, գաղաններ կան մոտակայքում, նա զգում և նախազգուշացնում է:

Պատահում էր, որ խաղաղ ու պայծառ օրով քարավանը ճամփա էր ելնում: Ճամփի ընթացքին փերշենկը հանկարծ կանգ էր առնում և իրեն հատուկ ականջի, պոչի և գլխի շարժումներով հասկացնել տալիս, թե վտանգ է սպառնում: Քարավանապետը հասկանում էր ձիու լեզուն և նախազգուշական միջոցներ ձեռք առնում: Վտանգից քարավանը ապահովելու համար նա հարմարավետ տեղ էր որոնում և հանկարծ պատահում էր անխուսափելին: Մոլեգնում էր փոթորիկը, գեղ-

խեղդ թիփին, սանձագերծված սարերի բարձունքներից, ձյան սյուններ էր կազմում և կարճ ժամանակում հավասարեցնում դար ու փոս, ձյան հաստ շերտով ծածկում արահետը, լցնում ձորը:

Փոթորիկը դադարում էր, քարավանը պատշաճվում էր ճամփա ելնելու, բաց էին թողնում փերշենկին, նա գտնում էր երթուղին, շրջանցում լցված փոսերը և քարավանը անվտանգ առաջնորդում դեպի հանգստյան կայան:

Գարուն էր, ձնհալը սկսվել էր, քարավանը անցնում էր Քյոսե-դաղի ոլորապետույտ վերելքի կածաններով: Ոչ մի աղմուկ, ոչ մի խոչընդոտ համփի ընթացքին, բայց փերշենկը կանգ էր առնում և կանգնեցնում քարավանը: Նա դոփում էր գետինը և շարժում գլուխը: Ջորեպանները վար էին առնում բեռները, որ հանգստանան ձիերը, որովհետև փերշենկը կանգնած էր տեղում և մտադրություն չունեի փոխելու ուղին: Սպասում էին պատահելիքին:

Հանկարծ դղրդում են սարերը, չըղն (ձյան հյուս) էր փրթում հանդիպակաց ժայռագագաթից և կայծակի արագությամբ գլորվում վար, իր հետ տանելով արմատից պոկված ծառեր, հսկայական ժայռաբեկորներ: Ապահով էր քարավանը, դիտում էին ջորեպանները և ծնրադրում, փառք տալիս ամենակարող աստծուն և նրա ամենազոր փոխանորդին՝ Հաղրեթի-խըղրին, ապա կարգով համբուրում փերշենկի ճակատը և մաղած ու լվացած գարի լցնում տոպրակն ու անցնում նրա գլուխը: Ոմանք քրտինքն էին սրբում, ուրիշները՝ բաշը սանդուխտ: Վտանգն անցած էր, և քարավանը փրկված ստույգ կորստից: Ե՞րբ փրթավ չըղը, ինչպե՞ս իմացավ փերշենկը և ճիշտ ժամանակին կանգնեցրեց քարավանը, դա անբացատրելի եղելություն էր, հետևաբար աստծո գործը:

Հովվի շունը իր հոտի, գամփուր կամ հետախույզ շունը իր տիրոջ, իսկ փերշենկը քարավանի աչքի լույսն էր, պահապան հրեշտակը:

\* \* \*

Ահավասիկ Շենից Հագս ընկած մի քանի տապանագրերից նմուշներ, որոնք շատ թե քիչ անաղարտ էին մնացել և հնարավոր էր ընթեռնել: Կիսաշրջված մի տապանաքարի ճակատին հին հայ թվագրությամբ դրոշմված էր երկու տառ միայն՝ ԻԱ (21+551=572): Մյուս տապանաքարին գրված էր երկու տառ միայն՝ ԻԵ (25+551=576): Երրորդին՝ ՃԻԹ (129+551=680): Հաջոր-

դին՝ ՃԶԵ (185+551=736): Հինգերորդին՝ ՆԴ (403+551=954): Վեցերորդին՝ ՇԽԵ (545+551=1096): Յոթերորդին՝ ՇՂԶ (596+551=1147): Ութերորդին՝ ՁԿԷ (767+551=1318):

Եվ շարունակաբար. գուցե 572-ից առաջ էլ արձանագրություններ են եղել և կամ 1318-ից հետո էլ, բայց ավելի նվազ կամ առավել թվականներ գտնել մեզ չհաջողվեց: Բոլոր թվերը, որ հնարավոր եղավ կարդալ, գտնվում էին 572-ի ու 1318-ի միջև:

Անկախ տապանաքարերի արձանագրությունից և եկեղեցիների փլատակներից, Շենի արելվյան բարձրավանդակի ողորկված մի ապառաժի վրա երևում էր խորը փորագրված արևի մի մեծ սկավառակի ճաճանչավոր կերպարը մի քանի տարբեր նշանկաներով: Դրանք փորագրված էին գետնից ավելի քան ութսուն մետր բարձրության վրա, և երկու կողմերում նկատվում էր նույնպես կլոր երկու խոշոր ծակ, մեկն՝ աջ, մյուսը՝ ձախ կողմում, և սակայն որևէ ձևով հնարավոր չէր բարձրանալ այդ ծակերի մոտ ստուգելու համար այլերի ուղղությունը կամ խորությունը:

Ժայռը միակտուր էր, բուրբաձև ծակերից վեր տարածությունը շատ ավելի, քան վարից վեր, ոչ կողքերից և ոչ էլ վերևից հնարավոր չէր մոտենալ արեգակնային կերպարին և կամ համահավասար մեծությամբ կլոր ծակերին: Ժայռի ստորոտից դուրս ժայթքում էր պառնորակ մի աղբյուր, որին հայերը առեգ-աղբյուր, իսկ քրդերը՝ գաճիկ-շեմս էին անվանում:

Այդ աղբյուրը սրբատեղի էր, մատաղներ էին մոթթում թշնամու դեմ մարտերից հաղթական վերադառնալիս:

Արևածայրը գտնվում էր հին ավանի ավերակներից մոտավորապես մեկ ժամ հեռավորության վրա, իսկ նոր Շեն գյուղը հին ավանից դեպի հյուսիս-արևելք նույնպես մեկ ժամ հեռավորություն ունեի երկու ձորերի միջև: Նոր գյուղը հնից բաժանում էր Տամանլու-կետուկի անտառածածկ սարալանջը:

\* \* \*

Դերսիմի լեռնային շրջանում փոխանակության հիմքը ոսկին և արծաթը չէին, այլ ցորենը, որի չափի միավորը կոտն էր, որը հավասար էր 12 հոխայի կամ 16 կգ-ի: Կոտը դիմացկուն, բայց նուրբ տախտակներից պատրաստված արմտիքի մեծաքանակ չափսի փոքր միավոր էր:

Մեկ կոտ ցորենի ոսկու հետ ունեցած հպմե-

ոնտական արժեքը թրքական շնորհին էր, որը հավասար էր հինգ արծաթ ղուրուշի և կազմում էր լիրայի (ոսկեդրամ)  $\frac{1}{20}$  մասի արժեքը:

Գառով մայր ոչխարը (մաքի) փոխանակության կարգով արժեք չորս կոտ ցորեն: Կթան կովը հորթով արժեք 10 գառով ոչխար, նույնքան էլ արժեք մի լավ ձին: Յեղային մի շան արժեքը հավասար էր մի ձիու կամ մի հորթով կթան կովի կամ 10 դառով ոչխարի և կամ 40 կոտ ցորենի:

Եթե փորձենք ընամթերքի ձրժեքը վերածել դրամական արժեքի, կստացվի հետևյալ պատկերը: Թևե փոխանակության չափանիշը ցորենն էր, փոխադրամիջոցների դժվարության և առհասարակ ցորենի նվազության հետևանքով գնորդները չափադատվություն էին տալիս առավելապես կենդանական արժեքով փոխանակության ձևին և, ի պահանջել հարկին, 75 տոկոսը, ասենք, ոչխարով և 25 տոկոսը ցորենով:

Նկատի ունենալով, որ թրքական լիրայի միավորը թրքական արծաթ ղուրուշն էր և հարյուր ղուրուշը հավասար էր մեկ ոսկու, ղուրուշի միավորն էլ փարան էր: 40 փարան մեկ ղուրուշ էր:  $100 \times 40 = 4000$  փարան (հարյուր ղուրուշ) հավասար էր մեկ ոսկու:

Մեկ լիր (լիռ) բուրդը, որ կշռում էր 6 հոխա կամ 8 կգ, արժեք 4 կոտ ցորեն կամ գառով մի ոչխար: Մեկ լիր յուղը արժեք 4 կոտ ցորեն կամ մի լիր բուրդ: Մեկ լիր մեղրը արժեք գառով մի ոչխար կամ չորս կոտ ցորեն և կամ մի լիր յուղ: Հետևաբար, ցեղական մի շուն գնելու համար վճարում էին 10 լիր յուղ կամ 10 լիր բուրդ և կամ 10 լիր մեղր:

Մեկ լիր մեղրը (8 կգ) հավասար էր 4 կոտ ցորենի կամ թրքական մեկ մեծիդիեի, որը հավասար էր թրքական ղուրուշի միավորին: 40 փարա բազմապատկած 20 ղուրուշով, հավասար է 800 խարայի, որը եթե վերածենք ռուսական ոսկի կոպեկի արժեքին, կստանանք 800 փարան բաժանած 5 կոպեկի, որը հավասար է 160 կոպեկի և կամ 1 ռուբլի 60 կոպեկի:

Որովհետև լիրի միավորը հոխան էր, հետևաբար մեկ հոխա մեղրը կամ կիլոգրամը արժեք ռուսական դրամով 160 կոպեկը բաժանած ութ կգ, որը հավասար է 20 կոպեկի:

Ուրեմն, ցեղական մի շուն գնելու համար փոխանակության կարգով վճարում էին 80 կգ մեղր

կամ 80 կգ յուղ և կամ 80 կգ բուրդ, որոնց ամեն մեկի դրամական արժեքը համապատասխանում էր ցորենի, ոչխարի, կովի կամ ձիու փոխանակության արժեքին, այսինքն 80 կգ բազմապատկած 20 կոպեկով, հավասար էր 1600 կոպեկի կամ 16 ռուբլի ռուսական ոսկեդրամի:

Իսկ եթե փորձենք ավելի հիմնավորել շան առուժախի պայմանները ու եթե փոխանակումը հաշվենք ոչ թե անասուններով կամ մթերքներով, այլ վերածենք աշխատանքի օրվա գնողական կարողության, կստացվի հետևյալ պատկերը: Աշխատանքի օրվա տեղությունը՝ արևածագից արևմուտք: Սովորական մշակի իր մեկ օրվա աշխատանքի դիմաց ստանում էր օրական երեք ժում հաց (ճաշ) և կես կոտ ցորեն: Եթե մշակը փոխանակության որևէ այլ միջոց չունեն, բայց ցանկանում էր ունենալ ցեղական շուն, պարտավոր էր 80 օր աշխատել, օրական միայն երեք ժում հացով և ստանալ ցեղական մի շուն: Դերսիմի լեռնաշխարհում լավ շունը հաճախ ավելի թանկ արժեքի, քան մարդը:

\* \* \*

Պատմում էին, թե Զերանիկ գյուղացի Իպոյենց Մեմոյի երկու երեխան շատ տարի առաջ անտառում ծաղիկ հավաքելիս կորսվել էին: Մեկը հազիվ երկու տարեկան է եղել, մյուսը՝ չորս:

Մի անգամ ամռանը սարի խաշնարածներից երիտասարդ հովիվ Աբասը, երբ Անահիտի կաթնաղբյուրների բարձրագույն ապառաժներից մեկի կատարին նստած, հոտը ջրի կանչելու իրիկնադեմի սրինգն է ածելիս լինում, ուշադրությունը գրավում են հանդիպակաց թփուտում, ճյուղերի ու տերևների արանքից իր վրա բեռնված մի զույգ կայծակալուռ աչքերը:

Պատանի Աբասը, սարսափած իրեն անծանոթ կենդանու սևեռուն հայացքից, նախ մտածում է օգնություն կանչել և փախչել: Բայց նկատի ունենալով ապառաժի բարձրությունը և աղմուկ բարձրացնելու դեպքում գազանի կողմից իր վրա հարձակվելու վտանգը, առանց դադարեցնելու սրինգի հուզիչ նվագը աննկատելի իջնում է ժայռի կատարից և միշտ սրնգահարկով, մոտենում այն ծառերին, որոնց ստորոտից բխող աղբյուրում ուզում էր ջրել իր հոտը:

Աբասը հասնելով հոտին, կանչում է շներին և ցույց տալով անծանոթ արարածի թաքնված տեղը, թփուտները խուզարկելու ցուցում տալիս նրանց, միաժամանակ օգնության է կանչում ոչ հեռու գտնվող այլ հոտի հովիվներին:

<sup>1</sup> 1914 թ. դրամական արժեքով ռուսական մեկ կոպեկը հավասար էր թրքական հինգ փարայի և կամ  $\frac{1}{10}$  ղուրուշի:

Շները հաշելով մոտենում են թփերին և, ի դարմանս բոլորի, մոմռալով կանգ առնում։ Հովիվների ավագը՝ Վելին, որ փորձառու և միաժամանակ շրջանում հայտնի իգճի (հետախույզ) համբավ ունեւր, նկատելով շների վախը, կարգադրում է ետ կանչել նրանց և դադարեցնել հետապնդումը։

Կարճ հետաքննությունից պարզվում է, որ թփուտում թաքնվածը ոչ արջ է, ոչ գայլ և ոչ էլ վիշապ, ինչ որ մի պահ ենթադրել էին։ Տեղ-տեղ հողին դրոշմված են եղել բոբիկ մարդու ոտքերի, տեղ-տեղ էլ չորեքթաթ վազ տված մարդու ոտքերի ու ձեռքերի դրոշմներ։ Նույն հետքերը գնացել են նաև պատանի Աբասի ցույց տված թփուտի հանդիպակաց կողմը՝ դեպի Մնձրա սարի ապառաժները։

Վերադառնալով յայլաները, խիստ հսկողություն են սահմանում և հերթապահում վրանների ու հովիվների շրջակայքում, միաժամանակ լուր են ուղարկում Զերանիկ գյուղի որսորդներին, իզճիներին և ավագներին ու տեղեկացնելով պատահածի մասին, խնդրում են ցուցում տալ ձեռք առնվելիք միջոցառումների մասին՝ պարզելու համար առեղծվածը։

Սար հասնող երկու իզճի, հինգ որսորդ և երեք ավագ խորհրդակցում ու որոշում են չհետապնդել ու լվախեցնել հայտնաբերված տարօրինակ արարածին։ Հրահանգում են Աբասին, որ նույն օրը կրկին բարձրանա նույն ապառաժի կատարն ու սրնգահարի նույն եղանակները։

Որսորդներին, իզճիների և ավագների խումբը, անվանի իզճի Վելիի առաջնորդությամբ, թաքնվում է Աբասի նստած ժայռից և տեսիլքի թաքնված թփերից բավական հեռու, այնպիսի դիրքերում, որ առանց տեսնվելու կարողանան դիտել դեպի Աբասի ժայռը շարժվող որևէ շնչավորի։ Կարգադրում են նույնպես, որ հոտը և շները նույն օրը հեռացվեն այդ շրջակայքից, և աղբյուրի մոտերքում անպաշտպան թողնում են 20—25 գառ և ուլ՝ երկու ոչխարի ու երկու այծի հետ։

Աբասը բարձրանում է իր տեղը, հսկող խումբը, բաժանված երեք մասի, գրավում է երեք տարբեր դիրքեր։ Պատանին սկսում է սրնգահարել, թաքնվածները արձանացած իրենց դիրքերում, գաղտագողի հետազոտում են դեպի Աբասի ժայռը նայող ամեն արահետ, ժայռանցք և տեսանքի վայր, միաժամանակ ականջ տալով ամեն լիկոցի, խճաքարերի շարժի և շնչոցի։

Սրտատրոփ սպասումը տևում է երկար, ոչ մի հայտնություն, ոչ մի շարժում շրջակայքում։ Աբասը շարունակում է սրնգահարել, լու-լոներն ու ղլե-յամանները հաջորդում են իրար, վերջապես հասնում է կեսօրվա ոլխարը նախ ջրի, ապա բերի կանչելու եղանակը։ Այժմերն ու ոչխարներն ուղղվում են դեպի աղբյուրը, նրանց հետևում են ուլերն ու գառները։

Աբասի սրինգն ավելի սրտառու է հնչեցնում բերվորների կանչի եղանակը։ Իզճի Վելին, որ երեք ընկերով թաքնված է լինում այն ապառաժներում, որի ստորոտից մի օր առաջ անհետացել էին տեսիլքի հետքերը, լսում է խճաքարերի շարժման ձայն և ընկերների ուշադրությունը հրավիրում դրա վրա։ Վելին և իր ընկերները, մատները դրած հրացանների բլթակին, շունչները պահած, սրտատրոփ սպասում են տեսիլքի հայտնվելուն։ Նախապես որոշած լինելով զենքի չդիմել, աղմուկ չհարուցել, բանի գեռ տեսիլքը հարձակման չի դիմել, հանձնարարված է եղել նույնպես Աբասին՝ տեղից չշարժվել և շարունակել սրնգահարելը։

Ի դարմանս դիտողների, հայտնվում է տեսիլքը, մերթ չորեքթաթ, մերթ ետևի ոտքերին կանգնած, մարդու նման քայլերն ուղղում է դեպի թփուտները և թաքնվում խիտ ճյուղերի արանքում։ Դիտողները հստակ կերպով տեսնում և համոզվում են, որ առանց պոչի և առանց ցցուն սրածայր ականջների այս փառալ (մարմնի խիտ մազերը իրար խճճած) մադղագելի է նման։ Եվ վերհիշելով Իպոյնեց Մեմոյի երեխաների տարիներ առաջվա կորուստը, ընկնում են խորը մտա-տանջության մեջ։

Աբասը, մեծերի կարգադրությամբ, կատարում է նախորդ օրվա նահանջը, և սրինգի գեղգեղանքի տակ հեռանում ու դադարեցնում նվագը։ Մարդանման արարածը մի պահ տատամսում է, ապա կլանչի և կանչի անորոշ ձայնը հանելով, դուրս է նետվում թաքստոցից և ետ վերադառնում նույն ճանապարհով։

Հետախույզները, վերադառնալով վրանները, երկար խորհրդակցություն հետո, որոշում են ամեն գնով անվնաս և ողջ բռնել փոշոտին, որովհետև վստահորեն համոզված էին, որ սա Իպոյնեց Մեմոյի մեծ երեխան է։

Երկրորդ օրն էլ նույն փորձը, նույն ձևերով ու նույն պայմաններում կատարելուց հետո երրորդ օրվա համար մշակում են հատուկ ծրագիր։

Կորսված երեխաները սրնգահար Աբասի քրոջ՝ Զեյնաբի որդիներն են եղել, որոնց նա շատ սի-

րելիս է եղել, հաճախ մեծին նստեցրել է օնկն-  
րին ու սրինգ ածել նրա համար:

Որոշվում է, որ հաշորդ օրը նրեխայի մայր  
Ջեյնարը մի բանի հարսնեքի ու աղջիկների հետ  
թաքնվի թփուտների մոտերքում, ու երբ Աբասը  
սրինգ ածելիս հանկարծ դադարեցնի եղանակն ու  
ձայնի «Սլո, սլոյեմըն ուտիք, Սլո, լաո, Սլո,  
Սլո» և շարունակի կրկին նվագել, թաքնված մայ-  
րը և ընկերուհիները առանց երեւալու սկսեն եր-  
յակ օրորոցի մանկական երգեր, ու երբ խումբը  
դադարի երգելուց, մայրը մերթ ընդ մերթ կրկնի  
առանձին:

— Սլո, Դիլրեր (փոքր երեխայի անունը),  
Սլո, Դիլրեր, հեյ լաո, Սլո, Սլո,— և խումբը կըր-  
կին «կսի երգել ու անաղմուկ ողաշարի թփուտը,  
ույ թարնված դաղանիկը ունկնդրում է Աբասի  
սրինգի սրտառուչ եղանակներն ու լսում իր ան-  
վան կանչը:

Փորձը անցնում է շատ հաջող՝ Վերեից Արա-  
սը շարունակում է սրնդահարել և «Սլո, հեյ Սլո»  
կանչել, իսկ ներքեից մայրը մոտենում է որդուն  
ու փորձում դրկել նրան:

Կիսավայրենացածը նախ փորձում է խույս  
տալ, բայց սրինգի ձայնից, աղջիկների երգից ու  
արտասանված փաղաքշական խոսքերից շվարում  
է և շրջապատողներին հաջողվում է կալանավո-  
րել նրան:

Մոր սրտառուչ համբյուրների ազդեցության  
տակ փոշոտը հանդարտվում և խեղճանում է,  
ակնապիշ և սեեռահայաց մորը և քեռուն նայե-  
լով, փորձում է վերհիշել մոռացված բառեր,  
բայց չի հաջողվում, ձեռքիսված շրթներից ան-  
հասկանալի կանչեր ու կլանչներ են դուրս գալիս  
ու արտասվում է:

Պատմում են, որ փոշոտին երկար ժամանակ  
դուլպա, տրեխ և հագուստ չեն կարողացել հագ-  
ցրնել, մինչև որ վարժվել է նոր կենցաղին և կա-  
րողացել խոսել ու պատմել իր և եղբոր վարած  
կյանքի մասին:

Ըստ Սլոյի պատմածների, երբ իրենք կորել  
են անտառում և մուլը վրա է հասել ու երբ  
ձայն-ձայնի տված լալիս են եղել, հանկարծ  
հայտնվել է մի մեծ շուն երկու փոքր լակոտնե-  
րի հետ և երկար ժամանակ չի հեռացել նրանց  
մոտից: Այնուհետև մեծ շունը Դիլրերին բռնել է  
ատամներով և իր ու լակոտների հետ նույն գի-  
շերը հեռացել են շրջակա անտառներից: Ծանա-  
պարհին մեծ շունը պառկել է կողքի, լակոտները  
ծծել են մոր կրծքի առատ կաթը, նույնը հետզհե-  
տե սովորել է անել նաև անոթի Դիլրերը: Ավելի

ուշ, երբ այլևս անոթության և հոգնածության հե-  
տևանքով Սլոն պառկել է գետնին և չի կարողա-  
ցել ոտքի կանգնել, մեծ շունը զգուշությամբ մո-  
տեցել է նրան և լիզել դեմքը, ճակատը, ձեռքերը,  
սպա կրծքի պտուկները դրել բերանը և սա ևս  
ծծել է անհագաբար:

Այսպես, անցնելով սարից-սար, անտառից-  
անտառ, կանգ էին առել ապառաժների մեջ փոր-  
ված մի տան առջև (քարայր), ուր իրենց դիմա-  
վորել է ավելի մեծ մի շուն:

Շան լակոտների հետ մտերմացած Դիլրերը  
աշխուժացել, օրըստօր մեծացել է և սկսել է  
նրանց նման կլանչել, ցատկել, վազել, իսկ անո-  
թանալիս ծծել է մայր շան ստիքները: Ժամա-  
նակի ընթացքում, երկար լացել-տառապելուց  
հետո, անցյալը մոռացվել է ու վարժվել են նոր  
ողամաններին: Մայր շունը նորից ձագեր է ունե-  
ցել, նախորդ լակոտները մեծացել ու շներ են  
դարձել, մինչդեռ Դիլրերը շարունակել է ծծել  
մայր շան կաթը երկրորդ լակոտների հետ, իսկ  
ինքը նախորդ լակոտների հետ գնացել է որսի,  
վարժվել ժայռերից ցատկելուն, նապաստակի  
կամ աղվեսի ձագեր դողանալուն, ծառեր մագըլ-  
ցնելուն, թռչունների ձվեր ու պտուղներ հավաքե-  
լուն:

Մի օր էլ, իրեն անհայտ պատճառներով, ան-  
տառում մեծ կռիվ է տեղի ունեցել: Օտար շների  
խմբերը հարձակվել են իրենց արդեն բազման-  
դամ ընտանիքի վրա, իրար հոշոտել, բզկտել:  
Փոշոտը վախից բարձրացել է ծառը և կլանչել,  
ոռնացել: Հարձակվողները այս երևույթից վախե-  
ցած փախուստի են դիմել:

Հաջորդ օրը վիրավորված մայր շունը, իր  
հետ վերցրած Դիլրերին, Սլոյին և երկու նոր լա-  
կոտներին, հեռացել է իրենց բնակավայրից և  
սար ու ձոր երկար թափառելուց հետո հանգըր-  
վանել է այն ժայռերում, ուր գտել էին իրենց:  
Մայր շունը վիրավորված է եղել, երկու ձագերը՝  
դեռ փոքր: Դիլրերը մնացել էր մոր և ձագերի  
մոտ, իսկ Սլոն դուրս է եկել ընտանիքի անդամ-  
ներին կերակուր ճարելու: Հեռվից հետապնդել է  
ոչխարների հոտին և պատրաստվել հափշտակե-  
լու դառներից մեկին, որ հեռացել էր հոտից, երբ  
ականջին հասել է ինչ-որ հաճելի ձայն: Մոռա-  
ցած որսն ու վտանգը, թաքնվել է թփուտներում  
ու երբ ձայնը հեռացել է և լսել է շների հաշոց,  
մտաբերել է հարձակումը ու փախուստ ավել: Գի-  
շերը քնել է դողով: Առտուն շատ կանուխ դուրս է  
եկել, վաղել դեռ ու դեռ, վերջապես հաջողվել է  
որսալ մի մայր նապաստակ իր ձագերով, որոնց

տարեւ է քարայր։ Ապա շտապել է հասնել այն տեղը, ուր նախորդ օրը լսել է այն ձայնը, որը աղոտ հուշեր է արթնացրել մեջը։

Այս դեպքին ականատեսներից շատերը, որոնք արդեն ծեղացել էին, պատմում էին, թե երբ Սլոյի հիշողութիւնը վերականգնվեց, առաջին գործը եղավ փնտրել եղբորը, բայց օրեր, ամիսներ, նույնիսկ տարիներ տեղ այդ որոնումները մնացին ապարդյուն՝ Դիլբերը անհետ կորավ։

Հստ որսորդների և հետախույզների հավաստիացումների, մայր գայլը նկատելով, որ փուշուր չի վերադառնում և նախազգալով վտանգը, վերցրել է Դիլբերին ու ձագերին և հեռացել այդ շրջանից։

Բուրդի համոզումը այն էր, թե հետագայում մարդկանց և կենդանիներին այնքան մեծ վնասներ պատճառող մարդագեղը կորսված Դիլբերի ու գայլերի զուգավորումից ծնունդ առած ահռելի այն մարդ-զազանն էր, որ ահ ու սադսափի տակ էր պահում այն շրջանը, ուր հայտնվում էր։

\* \* \*

Դերսիմցին ժամանակի ընթացքում, իր կյանքի գործնական պայմաններից ելնելով, ընտրութիւն կատարելու միջոցով, բուծել ու պահում էր շան որոշ տեսակներ՝ հովվի շուն (գելսեղդ), տան պահապան շուն (գամփու), արջաշուն (արջուրս շուն), որսորդական շուն՝ բարակ (թազի), ազատարար շուն (խելասթյար) կամ փոթորկաշուն (հետախույզ)։

Շների այս տեսակները տեղական ստացվածք էին, կային հատուկ շնաբուծարաններ, որոնք վայրի գազանների և շան զուգավորումից ստանում էին վերը նշված ցեղերը և վաճառում։ Դրանք շատ սուղ էին գնահատվում։ Շնաբուծները միևնույն ժամանակ հայտնի գազանորսներ էին։ Նրանց ապրուստի գլխավոր աղբյուրը շների, վարժեցրած արջերի, նոխազների, խոյերի փոխանակութան ձևով կատարված վաճառքն էր կազմում։

Հովվի շան մանրամասն բնութագրութիւնը տրվել է իր տեղում, ուստի այստեղ զանց եմ առնում նրա մասին խոսելը։

Գամփուը հովվի շների ավելի մեծ և բուրդովին այլ հատկութիւններ ունեցող տան պահապան շունն էր։

Գամփուը մնում էր տանը, հսկում տան կամ բակի գլխավոր մուտքին։ Նա սովորական շան

նման չէր հաշում, այլ հետևում էր բակում խաղացող երեխաներին և միջամտում նրանց կռիվներին, իր հաստ ու բրդոտ ուղղով խփելով մեկին կամ մյուսին։ Նա երեխաների ամենավստահելի պահապանն էր, երբեմն էլ խաղընկերը, բայց միշտ պաշտպանի դերում։ Թույլ չէր տալիս օտար կատուների մուտքը տան սահմանները։ Գամփուը լանաշում էր տան բարեկամներին, չէր հաշում նրանց վրա, բայց գազազում էր օտարների, մանավանդ, ըստ իր բնազդական նախազգացման, տան թշնամիների դեմ։ Նա չէր խափում, այլ բզկտում էր։ Ծնթարկվում էր տան բուրդ առնողների կարգադրութիւնը, ճանաչում էր տան բուրդ անասուններին և ուղարկվում նրանց օտար հարձակումներից, թույլ չէր տալիս օտար երեխաների և անասունների, որ մոտենան տան բակի ցանկապախին կամ տնամերձ հողամասի լահմաններին։ Քնում էր մի աչքը բաց և զգաստ, ականջները լարում էր ամենափոքր շարժումի դեպքում։ Գիշեր թե ցերեկ, երբ գամփուը հաշում էր, տան անդամները նրա հաշիւու ձևից ու ելեւջից հասկանում էին պատճառը։

Բազմամարդ տնտեսութիւններում գամփուն ուներ իր մեկ կամ ավելի օգնականը։ Տունը վրստահելով օգնականին, գամփուը ծածկաբար հետևում էր գաղտնաբար տնից փախուստ տվող պատանիներին և հեռվից հսկում նրանց, ի պահանջէ հարկին, օգնութիւն հասնում, եթե որեւէ վտանգ էր սպառնում իր պաշտպանյալին։

Շան հավատարմութիւնը և նույնիսկ անձնազոհութիւնը հաստատող բազմաթիւ դեպքեր են եղել։ Շունը երբեք չէր փորձում ծառանալ իրեն ծեծող տիրոջ դեմ, որը հազվադեպ էր լինում, ընդհակառակը, գլուխը դրած առաջին թաթերին, աղերսանքով, բայց միշտ հպատակութիւն բնթարկվում էր տիրոջ հասցրած հարվածներին, առանց տեղից շարժվելու կամ փախուստի դիմելու։ Պատահել է, որ որեւէ լուրջ պատճառով շանը ծեծող տերը սրտի կսկիծից արտասվել է և գրկելով շան պարանոցը, համբուրներով ողողել գլուխն ու աչքերը, շոյել ու գուրգուրել նրան։

Տան շունը, բացի իր տան անդամներից, ոչ ոքի ձեռքից պատառ կամ կերակուր չէր ուտի, օրերով անոթի կմնար, բայց ձեռք չէր տա օտարի կողմից իրեն հրամցված հացի կամ մսի կտորի և ոչ էլ կատվի նման կզողանար իր ուղարկված անասնութիւնը հանձնված մթերքից։

Ջրափնյա գլուղների երեխաները մտնկուց վարժվում էին լողալու զանազան ձևերին։ Հատ-

կապուս Եփրատի և Արածանիի աշ ու ձախափնյա  
դյուղերի երեխաները ջրշան նման լողորդներ  
էին: Հսկառակ ամեն տարի այդ դետերում  
խեղդվելու դեպքերին և գետերում լողանալու առ-  
թիվ տնեցիների կողմից պատանիների նկատ-  
մամբ կիրառվող ամենախիստ արգելքներին, 8—  
12 ասորեկաճներին դետում լողանալու անսահ-  
ման հաճույքից զրկելը հնարավոր չէր լինում:  
Նրանք դիմում էին ամեն հնարամտության՝ տնից  
դուրս գալու և դետերում լողանալու համար:

Բայց տան մեծերին ու ծնողներին որեւէ ձե-  
լով իարող պատանիները չէին կարողանում  
խուրել տան հավատարիմ շանը: Գամփոռ անը-  
կատ հետևում էր ծածուկ լողալու գնացող պա-  
տանուն (որպեսզի վերջինս չարգելեր նրան այդ  
տնելու) և թաքնվելով գետափնյա ժայռերի ա-  
րանքում, հայտնվում էր միայն այն պարագա-  
յում, երբ վտանգ էր սպառնում երեխաներից ո-  
րեւէ մեկին:

Ահավասիկ 1912-ին պատահած մի դեպք:  
Եփրատի աջափնյա Չայգոմի գյուղից մի խումբ  
պատանիներ նախապես որոշում են վարդավառի  
ստանակատարության օրը տնեցիներից ծածուկ  
լողանալ գետի վտանգավոր տեղում, որպեսզի  
պարծենան դրանով: Գետափ հասնող պատանի-  
ները երբ տեսնում են գետի աղմկահույզ գոտից,  
չրի սրընթաց հոսքը, տատանվում են մտնել ջու-  
լը և գործադրել գետն անցնելու իրենց որոշումը:  
Բայց պատանիներից մեկը, ամենահանդուգնը,  
երբ խմբի ղեկավարին էր նկատվում, առանց կա-  
րևորություն տալու ընկերների նախազգուշաց-  
մանը ու գետը մտնելն արգելելու փորձերին,  
մերկանում և ձնտվում է ջուրը:

Առաջին պահ պատանին մեծ ճիգերով մաքա-  
ռում է գետի հոսանքի դեմ և խորանում նրա մեջ,  
որպեսզի կարողանա ճեղքել այն և հանդիպակաց  
ափ դուրս գալ, բայց հոսանքը կաշկամեղում է  
պատանու բոլոր շարժումները և նրան քշում  
վար: Ընկերների օգնության կանչերը մնում են  
անհետևանք, պատանին գետի ձախ շրջադարձի  
հետ կորչում է տեսողությունից: Այդ իրարանց-  
ման մեջ մեկ էլ լսվում է շան ընդհատ-ընդհատ  
հաչոցը: Օգնության հասնող հովիվները, հետևե-  
լով շան հաչոցին, բարձրանում են ափամերձ  
քարին ու տեսնում, որ ձախափնյա հարթության  
վրա Ջուլումը (շան անունը) լիզում է Մուրոյի  
(խեղդվող պատանու անունը) ճակատը, կուրծքը  
և ուրախությունից կլանչում: Պատանին փրկվ-  
վում է:

Այդ օրը մեծ տոնախմբություն էր Չայգոմի,

Մեծ-գեղի, Չեղիկի հայ և բուրդ բնակչությունը  
համախմբված ս. Սարգսի Լուսաղբյուրի անտա-  
ռի բացատում, զույգ դճուղ-դուռնաների նվագակ-  
ցությամբ երգում, պարում և փառաբանում էին  
մեծ տոնը՝ վարդավառը, նրա պաշտպան և հո-  
վանավոր ս. Նիկողոսին, շան միջոցով աղետյա-  
լին օգնության հասած Հազրեթի-խըզրին (ս.  
Սարգիս) և նրա պաշտպանությունը վայելող օր-  
վա հերոսներին՝ ազատարար Ջուլումին և աղետից  
փրկված Մուրոյին: Մատաղներ մորթվում էին  
շատերի կողմից, որովհետև դեպքը վերագրում  
էին հրաշագործության:

Գամփոռ խիստ հավատարմության հետ կապ-  
ված բազմաթիվ դեպքերից բերենք ևս մի քանի-  
սը:

Պատմում էին, թե 1907 թ. թուրքերի դեմ  
մղված մարտերում Ղըզըլքիլիսի Փախ գյուղացի  
Միրագից Ակոն անհետ կորչում է: Բոլոր պրպը-  
տումները՝ մեռած կամ վիրավոր գտնելու Ակո-  
յին, մնում են անհետևանք, սակայն Անթառ մա-  
մը չի հավատում իր թուռն կորստին և պնդում  
է, թե Ակոն կենդանի է, իր այս համոզումը հիմ-  
նավորելով նրանով, թե մարտի թեժ պահին ի-  
րենց շուն Չալոն, անտեր ձգելով իր կաթնակեր  
բոթոթներին, սլացել է դեպի խուժաց-ձորը  
(մարտի վայրը) և դեռևս չի վերադարձել:

Անթառ մամը գուրգուրանքով խնամում և կե-  
րակրում էր Չալոյի որբացած քոթոթներին և  
սպասում նրա վերադարձին: Շունը վերադառ-  
նում է երեք օրվա բացակայությունից հետո, երբ  
արդեն թուրք զինվորները պարտվել և խուժաց-  
ձորը խաղաղվել էր:

Շունը հասնում է տուն նիհարած ու անսվաղ  
վիճակում, բայց փոխանակ քոթոթների մոտ  
գնալու, վազում է Անթառ մամի մոտ և թաթերը  
դրած մամի ուժերին լիզում նրա ձեռքերը: Դա  
հաղթանակի նշան էր: Մամը գուրգուրում և համ-  
բուրում է շանը ու հարցնում.

— Վերտեղ էիր ըսքան օր, ընչի անտեր ու  
րբ թողիր ձագուկներդ և կորար անհետ: Ըսե,  
Չալո, վերտեղ է տերդ՝ Ակոն:

Չալոն կարծես հասկանում է տիրոջ խոսքերը  
և պոչը շարժելով հաչում երեք անգամ: Նա ու-  
ղեղվում է դեպի դուռը, կրկին հաչում և հրավի-  
րում տանտիրոջը՝ հետևելու իրեն:

Մամը անմիջապես հավար է կանչում և գյու-  
ղում դառնում մի քանի հոգի հետևում են շանը,  
որը նրանց առաջնորդում է գյուղից բավական  
հեռու, անմատչելի ապառաժների խորքում  
գտնված մի քարայր, ուր ծանր վիրավոր, բայց

ուշքի եկած անշարժ պառկած է լինում Միրազից Ակուն:

Տեղում պատրաստած սալանոցով (պատգա-րակ) վիրավորին փոխադրում են գյուղ: Հարկ ե-ղած դարմանումները կատարելուց հետո, երբ վիրավորը կարողանում է խոսել, պատմում է հե-տեւյալը:

— Կտրելու համար նահանջող դորքի փա-խուստի ճիւղը, դուրս եկա թաքստոցից և ինքզինքս վար նետեցի Չաթալ բարի աղանքից, որ բռնեմ Բող-կեփտուկի դիրքը: Քարը շատ բարձր էր, վար նետվելիս ձախ ոտքս, ծունկից վար, կոտորվեց, վերը բանի տաք էր, դիմացա ցավին և սողալով հասա Բող-կեփտուկին ու դիրք բռնեցի դեպի Շեյ-թան-դայա տանող արահետի բարձունքում, որ-տեղից անցնելու էին զորքից կտրված և դեռ մե-լուց շահանջված ութը զինվոր և մի հազարապետ (բին-բաշի): Հիշում եմ, որ առաջին կրակոցից զետիւն տապալվեց լին-բաշին, երկրորդ գնդա-կով խփեցի ռաշ-շավուշին, մնացյալ յոթ զին-վորները կրակվելով ետ նահանջեցին: Այդ միջո-ցին էր, որ թշնամու գնդակներից մեկը դիպավ աջ ուսիս և հրացանը վար ընկավ ձեռքիցս: Գի-տեի, որ փախստականները չէին կարողանա բարձրանալ Բող-կեփտուկի ժայռերը, որ վնասեն ինձ, բայց զգացի, որ աջ թևս չի շարժվում և ար-յունը հոսում է շրի պես: Թե ինչ պատահեց հե-տագայում, չգիտեմ: Որքան էի մնացել ուշագը-նաց, ով և ինչպես էր փոխադրել ինձ անծանոթ այն բարայրը, ուր գտաք ինձ, չգիտեմ, միայն դգում էի, որ ինչ-որ բան եմ ծծում ու տաք հե-լուկը հոսում է կոկորդիցս վար և ինչ-որ կենդա-նի լիղում է ճակատս... Կոպերս այնքան էին ծանրացել, որ աչքերս բանալ ու ձեռքերս շարժել չէի կարողանում: Վերքերի ցավից, թե կորցրած արյունից, բոլոր անդամներս անշարժացել էին: Զգում էի, որ շնչում եմ, ուրեմն դեռ չեմ մահա-ցել, բայց պատահածի մասին ոչինչ հիշել չէի կարողանում, ավելի ճիշտ՝ ուղեղս չէր գործում: Ժամանակի տևողության մասին գաղափար չու-նեի, քանի ժամ կամ քանի օր էի մնացել այդ վիճակում, չգիտեի: Միայն երբ աչքերս բացի, տեսա, որ Չալուն լիղում է վերքերս, որոնցից արյուն չէր ծորում և ոչ էլ լերդացած արյուն կար մարմնիս որևէ մասում: Շանը որ տեսա գլխա-վերևումս, կարծես նորից կյանք ստացա: Թեև չկարողացա գրկել և համբուրել նրան, բայց կա-րողացա շնչալ:

— Չալո, ես ողջ եմ, հասիր տուն և օգնու-թյան կանչիր: Մնացածը ծանոթ է ձեզ:

Պարզվում է, որ Չալուն ծանր վիրավորին փո-խադրել է վտանգի վայրից հեռու, կաթով սնու-ցել, լիղել վերքերը և հսկել տիրոջը այնքան, մինչև նա ինքնագիտակցության է եկել ու հրա-մայել իրեն գնալ տուն օգնություն կանչելու:

Պարտի գյուղացի Զեյնալը արյան փոխվրե-ժից խուսափելու համար անհետանում է գյուղից: Հավատարիմ շունը երկար թափառումներից հե-տո գտնում է տիրոջ թաքստոցը և ամեն օր գյու-ղացիներից ծածուկ տնից ուռնիք, հագնելիք և ծխախոտ տանում երկու ամսից ավելի քարայր-ներում թաքնվող իր տիրոջը և ընկերանում է նրան սարից-սար թափառումների ժամանակ: Մի օր Զեյնալը ցանկանում է երթալ Գոմերում զրտ-նրվող իր քեռու մոտ, շունը դնում է Զեյնալից առաջ և հետախուզում ճանապարհը:

Սև քարի կետուկը դեռ չբարձրացած, շունը հաշելով նախազգուշացնում է, թե մարդ է դա-լիս: Տեղը թաքնվում է ժայռերի արանքում, բայց շունը, շմատնելու համար տիրոջ թաքստոցը, վա-ղում է առաջ, որ նաև ստուգի եկողի ինքնությունը: Կեփտուկից հայտնվում է Զեյնալին փնտրող խնամին, շունը ճանաչում է նրան, նա էլ շանը, փորձում է սիրաշահել շանը, որպեսզի նրա մի-ջոցով հայտնաբերի թշնամուն: Շունը հարձակ-վում է թշնամու վրա: Վերջինս ստիպված պաշտ-պանվում է թրի հարվածով ձեղքում է շան գլու-խը: Մինչ այդ շանն օգնության հասնող Զեյնալը հայտնվում է և կրակում թշնամու վրա: Զոհվում է հավատարիմ շունը, բայց փրկվում է տերը:

Արշաշունը, որը գամփոփ մեկուկես արժեքն ուներ, հազվագյուտ էր: Օգտագործվում էր միայն վարպետ գաղանդորսների կողմից: Արշից ավելի ուժեղ էր, երբ մանավանդ զինված էր լինում պող-պատե ցցերով:

Ուսաշունը (բարակ) օգտագործվում էր աղ-վես, վայրի կատու, լուսան կամ սանսառ որսա-լու համար: Նա թեթևոտն և արագավազ էր: Քա-րած, եղջերու հալածելու և քարայրներից՝ դուրս բերելու համար օգտագործում էին բարակի և գալաշան զուգավորումից սերած և միայն այս շրջանին հատուկ մի տեսակ որսի շուն, որը քա-րածի ամենաթեթև հետքերից կարողանում էր հայտնաբերել նրա թաքստոցը և առաջնորդել այն ուղղությամբ, ուր թաքնված էր որսը:

Այս կարգի շները թե հոտառությամբ, թե հա-լելու ձևով տարբերվում էին մյուս շներից: Սրանք մարդկանց վրա չէին հաշում, շատ ուշիմ էին և նվիրված իրենց տիրոջը: Վիրավոր որսին հետա-պնդելու, նրա թաքնված տեղը գտնելու և հաշե-

լով որսորդին իրենց մոտ կանչելու առանձին հատկություն ունենին:

Փոքորկաշունը գամփոփ մի տեսակն էր, որը, ըստ ժողովրդական հավատալիքի, վայելում էր ս. Մինասի պաշտպանությունը և գործում նրա ներշնչմամբ ու օժտված էր փոթորկի ժամանակ կողմնորոշվելու բացառիկ հատկությամբ:

Լեռնային շրջաններում քիփին (ձյունամորրիկ) շատ ուժեղ էր լինում, հայտնվում էր անսպասելի արագությամբ և հաճախ տեղում մինչև հինգ օր: Երբեմն կույրները գյուղից-գյուղ և առհասարակ հաղորդակցության բոլոր միջոցները խզվում էին:

Հաճախ պատահում էր, որ օդի պարզությունից խարվող ճամփորդը, կես ճանապարհին ընկնում էր ձյունամորրիկի անդիմադրելի հողմապսուտի մեջ ու կորցնում ճանապարհը: Թեև վտանգավոր տեղերում ճամփա ցույց տվող նշանկաներ կային, բայց թիփին այնքան ուժեղ և ռեզնայնային խիտ էր լինում, որ մարդիկ նույնիսկ իրար չէին տեսնում, շունչները կտրվում, տեսողությունը մթափնվում և գիտակցությունը կորցնում էին ու շեղում ճամփան: Նման պարագայում, ահա, աղետայիններին օգնության էին հասնում ազատարար շները: Դրանց թիվը, սակայն, սահմանափակ էր: Միայն հայտնի աղաները, մեծ կրոնապետները և խանհտան տոհմային տնտեսությունները պահում և օգտագործում էին դժվարությամբ ձեռք բերված նման շներ, ու երբ թիփին մոլեգնում էր, ազատարար շներն արձակում էին շղթաներից ու բաց թողնում գյուղը մտնող վտանգավոր ճամփաների ուղղությամբ: Ծները, ընտրելով իրենց գնալիք ուղղությունը, գործում էին երեքը, չորսը, նույնիսկ հինգը միասին, նայած վայրի վտանգավորությանը:

Երբ շները սկսում էին հետախուզությունը, դրանց տները սովորաբար հերթով ճալարի գնն (հատուկ հրացան, որ շատ աղմուկ էր հանում) էին կրակում օդում, մինչև շների վերադարձը՝ նախ նրանց քաջալերելու, ապա իմաց տալու մոլորյալներին գյուղի տեղը և ուղղությունը:

Ծների կողմից ազատված աղետայինները նկատվում էին ս. Մինասի պաշտպանյալները և ըստ այնմ հարգում ու պատվում էին նրանց, իսկ ազատարար շների տների օջախները համարվում էին կրակի փիրի և ս. Մինասի դաշնակիցներ, ուստի երգվում էին այդ օջախների անունով: Աղետից ազատվածները, ամեն տարի կալի ավարտից հետո, ուխտի էին գնում իրենց փրկի՝ ս. Մինասի շներին, զոհեր մատուցում թև սրբի

անվանը և թև ազատարար շան տան օջախի փիրին, շանը նկատելով սրբի միջնորդ կամ կամակատար: Երբեք ձեռք չէին բարձրացնում ազատարար շների վրա:

Ազատարար շունը երբ ծերանում էր, սուսը չէր մահանում: Նախազգալով մոտալուտ մահը, աննկատ հեռանում էր գյուղից և մահանում որևէ անմատչելի թաքստոցում:

Այս շներին վերաբերող բազմաթիվ առասպելախառն պատմություններից ներկայացնենք մեկը, որը վերաբերում է մի աղետյալ ընտանիքի փրկությանը:

— Հորեղբայրս՝ Սեիդ-Տեմենը, անդրանիկության կարգով ժառանգել էր Աղուջանների օջախի կրոնապետի իրավունքը և բնակվում էր Մեծրաւարի Անահիտի կաթնաղբյուրների հարակից Զերանիկ գյուղում, — պատմում էր Սեիդ-Տեմենի եղբորորդի Սեիդ-Ալին:

Հայրս՝ Սեիդ-Ճաֆերը, իր կրտսեր եղբայր Սեիդ-Սուլեյմանի հետ, իրենց ընտանիքներով, զավակներով ու թոռներով բնակվում էին Պաղրպապայի ստորոտում, Զերանիկից դեպի արևելք, Էրեք ժամ հեռու գտնվող Անահիտի գոմերում: Մեղ մոտ էր ապրում Անայե-փիլը (մեծ մամը):

Սեիդ-Տեմենը արու զավակ չունեց և գա խիստ մտահոգում էր բոլորիս: Հունվարի առաջին օրերին էր, խունկ ու մոմով և կարմիր խնձորով միջօրե (լրաբեր) եկավ մեզ ավետելու, թե Աղուջանների մեծ օջախի տները հինգ աղջկանից հետո ունեցել է արու զավակ և Անայե-փիլին հրավիրում է գալու և օրհնելու օջախի ժառանգորդի ծնունդը: Հայրս հայտնեց, թե մի քանի օրից հետո մեծ մամը իր զավակներով ու թոռներով կգա Զերանիկ՝ օջախի ժառանգորդին աչքալուսանքի: Լրաբերների մեկնելուց հետո հայրս փոխեց մտադրությունը և կարգադրեց ճամփա ելնել հաջորդ օրը:

Օրը պարզկա էր, արեգակը փայլում էր երկնակամարում: Պաղբից մինչև Մեծուր սար կարելի էր հասնել կես օրում: Չյունը թեև հասնում էր մարդու գոտկատեղը, բայց արահետը բացված էր: Հայրս աճապարում էր օգտվել խաղաղ երկընթից ու օդի պայծառությունից և ժամ առաջ շնորհավորել մեծ եղբոր երջանկությունը:

Ճամփա ելանք արեւածագից քիչ հետո: Առջևից գնում էր թեև ութսունամյա, բայց նորահարսի նման առույգ և արագաշարժ մեծ մամը, հայրս հետևում էր մորը, հորեղբայրս իր երկու զավակներով և կնոջ՝ Անայե-զճի (փոքր տիրամայր) հետ գտնվում էին առաջ ընթացողների և հինգ շա-

լակահիւսների միջև՝ բոլորն էլ նույն օջախի անդամներ:

Արահետը ընթանում էր ելեէջներով: Ծամփի մեծ մասն անցել էինք, մնում էր ելնել Ծերմակ լարերի վերելքը և թեքվել դեպի Զերանիկ: Դիմացից երևում էր Կիլիկան քարերի մեծ նշանկան: Հանկարծ անսպասելիորեն երկինքը մթնեց, որին աշտրդից ուժեղ քամի: Անան կանգ առավ և ցույց տվեց Պաղը ու Մեծրա սարերի միացման կետից ունեցող երկաթե փոթորիկն ու բղավեց.

— Գելխեղդն (դալ խեղդող ուժեղ փոթորիկ) և դալիս,— և սկսեց աղոթել:

Այդ միջոցին մենք գտնվում էինք այնպիսի տեղ, որից մի քանի քայլ վար անդնդախոր ձորն էր: Քամին կարող էր մեղ գահավիժել ժայռերից յաճ: Երկինքը մոլեգնել, թիփին կատաղել, ձյունը տեղում էր անընդհատ, իսկ քամին թույլ չէր տալիս շնչել:

Հայրս կարգադրել կանգ առնել և խմբվել, բոլոր հետև արահետը ծածկված էր ձյան հաստ շիւթով, ճամփան՝ մոլորելու վտանգը, ժայռերից վար գլորվելու սարսափը հարկադրեց մեղ քոմ (խումբ) կազմել, որպեսզի միմյանց չկորցնենք: Հայրս և հորեղբայրս ձայն-ձայնի տված թեև քաջալիրով էին մեզ, բայց իրենք էլ զգում էին, որ դառնում ենք հուսահատ կացության մեջ:

Մեծերը և ավելի ուժեղները կտր շրջանակ կալմեցին, կանանց ու պատանիներին էլ նստեցրին բոլորակի կենտրոնում, որպեսզի պաշտպանվեն մոլեգնող թիփից և շունչ-շնչի տալով տաքացնեն իրար:

Փոթորիկը երթալով սաստկանում էր: Մեծերն էլ չկարողացան ոտքի մնալ և իրենք էլ ձեռք-ձեռքի տված շղթա կազմեցին նստողների շուրջը, իրենց աբաներով ծածկեցին խմբի գլուխը և առոր բռնած աբաների փեշերից, գլուխները պահեցին ծածկոցի տակ:

Որբան տեղեց փոթորիկը, ինչպես ծածկվեցինք ձյան հաստ շիւթով, չիմացանք: Օրվա ժամի կամ սուհասարակ ժամանակի տեղոթյան մասին դադափար չունեինք, քանի որ փոթորիկը լեռնա-հագաթներից ու լանջերից հավաքած և դեպի էածրերը քշած ձյան տեղափոխումներն այնքան արագ էր կատարել և մեր խումբը ձյան խորը գերեզմանի մեջ թաղել, որ շրջապատներս տեսնելու կամ ձյան հաստ ծածկույթից դուրս գալու հնարավորություն չունեինք: Հայրս և հորեղբայրս, որպես քաջածանոթ թիփի խաղերին, փորձում էին թիկունքները դեմ դնել և հնարավորության սահմաններում մասամբ թեթևացնել մեղ ճնշող

և շունչներս կտրել սպառնացող ձյան ծանրությունը: Թե ինչ պատահեց հետագայում, չեմ հիշում: Ահավոր աղետի մանրամասնություններին տեղեկացանք այնժամ միայն, երբ կիսասառածներին դուրս բերին գոմաղբից և գոլ ջրով լողացնելուց հետո, կրակից հեռու, թոնրատան հեռավոր անկյունում, հավլջանից, դենջեֆիլից, դալանֆիլից և դարչինից խառն արմատներով և սուցրած թեյ խմեցրին:

Աղետյալներս երբ բոժակ-բոժակի ետեից մեղրախառն թեյ էինք խմում, թոնրատան օջախի աջ կողմը, սեթին փոված գորգերի վրա ծնրադիր հորեղբայրս աղոթում և փառաբանում էր Աղուհանների օջախի սրբազան փրկի հորությունը, որ ուղղություն տալով ազատարար շներին, նրանց ներշնչել էր կանգ առնելու աղետի տեղում և փրկելու մեզ:

— Փիրե օճախ Աղուհանան, վայրեմն Տեմբեշ-կուլապի. իսկասքյարե մորտեման, մըլեթան Հազրեթի ամահա յարտմե օճախ մա ի խելասունահա տես ու ժու մորտեմ (Աղուհանների օջախի փրկը, իմ տերս Տեմբեշ-կուլապին, մարդկանց և ժողովուրդների ազատարար սուրբ Սարգիսը, մեր շախին օգնության եկան և աղատեցին տասնմեկ մարդ),— աղոթում, արտասվում և սլատմում էր հորեղբայրս աչքալույսի եկող գյուղացիներին:

— Յա հեքշ, յա Հազրեթի-խըդր, յա վայրե օճախ Աղուհանան (Ով աստված, ով Սարգիս, ով Աղուհանների օջախի տեր),— կրկնում էին ներկաները, նույնպես ծնրադիր:

Աչքալույսի և նորածինին ֆիլվայության (բավորության) առաջարկով Զերանիկ ժամանած Մամգունների (Մամիկոնյան) հայտնի աշիրեթապետ Տիապ աղան, որ մի ժամ առաջ էր տեղ հասել և գտնվում էր ծնրադրողների շարքում, անտեղյակ սղետի մանրամասնություններին, դիմելով հորեղբորս, խնդրեց պատմել տեղի ունեցած հրաշագործության՝ ահավոր փոթորկից տասնմեկ աղետյալների փրկության մասին:

— Աղա, դու ծանոթ ես մեր խալասքյար շներին, որոնք գտնվում են մեր օջախի փրկի և Հազրեթի-խըդրի պաշտպանության տակ և նրանց ներշնչումով ու ցուցումներով ամեն տարի փոթորիկների ժամանակ ազատում են մոլորյալ լամփորդներին, փրկելով նրանց կյանքը: Բայց այն, ինչ պատահեց իմ օջախի շառավիղների հետ, կարելի է ասել, թե իսկապես մեծ հրաշալիործություն էր: Մեր սրբազան օջախի պաշտպան Զուլումին (պատուհաս), Նլդրըմին (կայծակ) և Աղրայիլին (հոգևառ) ինչպես միշտ փոթորիկներին

ժամանակ, այս անգամ էլ արձակեցինք շղթաներից և առանց ուղղութիւն ցոյց տալու թույլ տվինք, որ զնան ինչ ուղղութիւնով որ մղում է իրենց բնորոշ, որովհետև մերոնց գալուն չէինք պատահում: Խելասքարները ներշնչված Հազրեթի-խորդի սուրբ դորութիւնից և արհամարհելով գել-խեղդ թիփիի ուժեղ հոսանքը, գնում են Անախիտի դոմերի ուղղութիւնը, դեպի մեծ նշանկան: Շնորի մեկնելուց երկու թև երեք ժամ հետո, երբ թիփին մոկեցնում էր և թույլ չէր տալիս տնից դուրս գալ, լսեցինք Նիգրերմի օգնութեան կանչը (երեք անգամ հաշել, ապա կաղկանձել և դարձ-յալ երեք անգամ հաշել): Շունը մենակ էր: Ձնա-յած իրեն ներս տանելու և մի քիչ հանգստացնե-լու մեր կանչերին, շունը շարունակեց օգնութեան կանչը և շղարհարեցրեց ստիպողաբար իրեն հետե-վելու գլխի և պոչի շարժումները:

Ըստ ընդունված կարգի, հավարի աղդանշան սրվեց (լայնափող շեշխանի հրացանով, որը որո-տում էր փոքր թնդանոթի նման): Արագ հայտնվե-ցին մասնագետ իղճիներ, 20 ամրակազմ և երի-տասարդ լեռնագնացներ, բոլորն էլ զինված և պաշտպանված փոթորիկին, դիմադրելու ամեն հարմարութիւններով: Հետերնին վերցրին վեց լալաճա և ճամփա ելան Նիգրերմի առաջնորդու-թյամբ:

Հետագայում պարզվեց, որ ազատարար շնե-րը, երբ հայտնաբերում են աղետայինների տեղը, երկուսը մնում են մոտենալու ազատարար աշխա-տանքը շարունակելու, իսկ երրորդը՝ Նիգրերմը, վազում է դեպի գյուղ օգնութիւն կանչելու:

Ազատարարների խումբը երբ հասնում է ա-ղետայինների վայրը, զարմանքից շշմած կանգ է առնում տեղի ունեցած հրաշքի առջև: Երկու խե-լասքարները ոչ միայն հայտնաբերել էին աղետ-այիններին, այլև անհավատալիորեն ցույց էին տվել առաջին շտապ օգնութիւնը: Զուլումն ու Ազ-րայիլը երկու տարբեր ուղղութիւնը, գերբնական չիղերով, ճամփա էին բացել ձյան տակից և միա-ժամանակ հասել մարդկանց խմբին, որից միայն երեքն էին դիմացել փոթորիկի հեղձուցիչ հար-վածների ծանրութեանը և պահել իրենց գիտակ-ցութիւնը: Երբ շները հասնում են աղետայիններին և սկսում են կլանչել, որ չվախենան, առաջինը մայրս է սթափվում թմրութիւնից և շնջում:

— Հեյ տոմանան, Հաղրեթի-խորդ ամա յար-տրմեմտ [Հեյ երեխաներ, սուրբ Սաիգիսը հասավ մեզ օգնութեան],— ու փարվում է Ազրայիլի վզին, համբուրում իրեն լիզող շան աչքերը:

Ինչպես ասացի, մայրս և երկու եղբայրներս,

որպես վարժ փոթորկախույզներ, դիմացել էին ահավոր տաղնապին և շներն տեղ հասնելուց հե-տո աշխատել էին ուշրի բերել մնացածներին: Շներն իրենց շնչով և լեզուներով, մայրս ու եղ-բայրներս իրենց սառած մատներով աշխատել էին կիսասառածներին շունչ և կենդանութիւն տալ, մինչև որ հասել էին ազատարարները:

Աղետայիններից ութին թաղեցինք գոմաղբում՝ ընդարմանալու, շներին տվինք բոված ալյուրով և յուղով պատրաստված տաք մալեզ և ճմուռ: Սնացյալն արդեն հայտնի է բոլորիդ:

Օրվա հրաշագործութեան պատվին մորթվեց տասնմեկ մատաղ՝ ամեն մի ազատվածի դիմաց մի զոհ: Երեք լավագույն խոյ էլ զոհաբերվեց ի պատիվ ազատարար շների պաշտպան փրկի:

Ներկայացնեմ ևս մի անցք, որին ներկա եմ եղել ինքս:

1907 թ. աշնանը հայ և քուրդ ազատագրական կոմիտեն գաղտնի խորհրդակցութեան էր հրավի-րել Ղալիմ (պատժիչ խումբ), որպեսզի պատժա-կան միջոցներ ձեռք առնվեն մի շարք աղաների նկատմամբ, որոնք ծառայում էին թուրք կառա-վարութեանը և կեղեքում հայ և քուրդ ազգաբնակ-չութեանը:

Խորհրդակցութիւնը տեղի ունեցավ Պալապա-նի լեռների Մհրերդի ստորոտում, Սուրենավա-նին շատ մոտիկ պատմական ս. Թորոս վանքում: Ժողովը նոր էր վերջացել, ժողովականները դեռ չէին ցրվել, երբ հսկողութեան համար սահման-ված պահակները լուր տվին, թե դիմացի Կապուտ քարի կետուկից տասից ավելի ձիավորներ դա-լիս են դեպի վանքը:

Կարճ խորհրդակցութիւնից հետո որոշվեց վանքի բնակչութիւնը աղետից զերծ պահելու հա-մար դուրս գալ վանքից և դիրքավորվել վերևի ապառաժներում, հնարավորութիւն տալով վան-րի բնակիչներին դիմավորել ձիավորներին և նը-րանց խորհուրդ տալ մնալու վանքում, մինչև որ պատժախումբը հեռանար վանքի սահմաններից:

Վանապետ Ավետիսը, Թորոս վարպետը, Օհան Լմին, գլխավորութեամբ Փամբուխ մամի, ընդա-ռաջ գնացին ձիավորներին և հաղորդելով, որ պատժախումբը գտնվում է Օղլան-վերենի քարե-լում, խնդրեցին իջնել ձիերից և հանգստանալ վանքում, մինչև որ թշնամիները հեռանան վանքի սահմաններից:

Ս. Թորոսի վանքն իր աշխարհագրական դիր-քով, թե որպես սրբատեղի և թե որպես օթևան ու պատուպարան, համարվում էր շեզոք գոտի, ուստի վանքի պարիսպներից ներս ապաստանողը հա-

մարվում էր անձեռնմխելի՝ Վանականների պատվիրակությունը, անխորթությունից խուսափելու համար, ձիավորներին հրավիրեց ապաստանելու շեղոթության սահմաններում, մինչև թշնամիները հեռանային վանքի շրջակայքից, որովհետև ժողովը քիչ առաջ որոշել էր պատժել եկողներից մեկին ու մեկին, բայց ոչ վանքի պարիսպներից ներս։

Եկվորները պատժի ենթակա երկու բեկպաղե լին, մեկը Պալապանի Քիշտմ գյուղի Քեթո-զաղե խամայիլ տղայի անդրանիկ զավակը, 25 տարեկան Հազմ բեկն էր, իսկ մյուսը՝ Խնձորեկ գյուղացի Կուլապի-զաղե Խալիլ աղայի տղան, 30 տարեկան Մահմեդ աղան, որոնց ընկերանում էր տասը զինված թիկնապահ։ Սրանք դնում էին Դերջանի իրենց կալվածներին այցելության։

Հազմ բեկը և Մահմեդ աղան, որպես Պալապանի լեռնաշխարհի աշիրթապետներ և որպես բեկզաղեներ, բացարձակապես մերժեցին պատգամավորության հրավերը, պատճառաբանելով, թե իրենք տղամարդ են և չեն կարող աշիրթի պատիվը ոտքի տակ առնել, վախենալով մի քանի անոթիների սպառնալիքներից։

Մարտը կարճ տևեց։ Պատժիչ խումբը իր գործը տեսավ և աներևութացավ ապառաժների ետևը, տանելով ավարը՝ ձի և զենք։

Խմբի հեռանալուց հետո պարսպի դռները լացվեցին և դուրս եկողները ողջ մնացած թիկնապահների օգնությամբ վանք փոխադրեցին Հազմ բեկի դին (որ մահացել էր ծոծրակին ստացած առաջին գնդակից), ծանր վիրավոր և մահամերձ Մահմեդ աղային և աչ բազուկից վիրավոր Սլոյին։

Երեկոյան դեմ ավելի քան երեք հազար հրացանակիր, առաջնորդությամբ Քեթո-զաղե խամայիլ աղայի և Կուլապի-զաղե Խալիլ աղայի կնոջ՝ Խաթունի (Խալիլ աղան մահացել էր երկու տարի առաջ և աշիրթը վարում էր նրա կին Խաթունը) պաշարեցին վանքը և երբ պատրաստվում էին խախտել վանքի շեղոթությունը՝ կրակի տալ այն ու սրի անցկացնել 16 ընտանիքից բաղկացած վանական համայնքը, ծանր վիրավոր Մահմեդ աղան, որ ուշքի էր եկել, իր մոտ կանչել տվեց Հազմի դիակի առջև ծնրագիր ողբացող մորը՝ Խաթունին ու հորեղբոր որդուն՝ Խամայիլ աղային և հայտարարեց.

— Ձեռք չտալ անմեղ մարդկանց և լեռնաշխարհի ժողովրդի արդար զայրույթը չհրավիրել մեր աշիրթի վրա։ Թեև ծանր վիրավոր եմ, բայց կերգնում պապուս՝ Կուլապի աղայի գերեզմանի և էվլուայի Քըշտմի աստծու գավազանի վրա, որ

այս մարդիկ անմեղ են, մեղավորը ես ու Հազմն լինք, որ չանսացինք մեզ դիմավորող պատվիրակների խորհրդին և արհամարհելով վտանգը, կրեցինք մեր պատիժը։ Ով որ համարձակվի ձեռք բարձրացնել վանքի և վանապետների վրա, ով որ ձեռքերը թաթախի այս սուրբ մարդոց անմեղ արյան մեջ, ես պապուս՝ Կուլապի աղայի պատիվը փրկելու համար կտրել կտամ այդ ձեռքը։ Հետևաբար ներողություն խնդրեցեք վանականներից և նրանց շնորհակալություն հայտնեցեք մեզ մատուցած ծառայության համար։

Նույն կերպ արտահայտվեց և թիկնապահների շոկապետ Թաճմ աղան, որպես ականատես վկա տեղի ունեցած ողբերգության։ Նա խնդրեց հարգանքով վերաբերվել անմեղ մարդկանց և հրամայել աշիրթի զինակիրներին անմիջապես հեռանալու վանքի սահմաններից և հետապնդելու թշնամուն, սպանված Հազմի արյան փոխվրեժը լուծելու և անպատվությունից փրկելու երկու գերդաստաններին։

Խամայիլ աղան մնաց վանքում՝ Թաճմի և հիսունի մոտ զինակիրների աջակցությամբ Հազմի դին գյուղ փոխադրելու համար, իսկ Խաթունը հեծավ ձին և առաջնորդեց աշիրթի անդամներին՝ հետապնդելու թշնամուն։

Ուշ գիշերին, երբ պատրաստվում էին փոխադրելու սպանվածի և վիրավորների սալաճները, Խամայիլ աղան Թաճմի միջոցով հրավիրեց վանքում գտնվող զինակիրներին ու վանքի բնակչությանը և ցույց տալով իր որդու դին, առանց արտասվելու, ասաց հետևյալը.

— Ծիշտ է ասում Մահմեդը, մեղավորը ինքն ու Հազմն են եղել, մասնավորապես իմ տղան, որ չանսաց իր հավատարիմ շան՝ տնից դուրս բալու արգելքներին ու ճամփա ելավ։ Առտուն կանուխ, երբ ախոռից դուրս բերին որդուս աշխետ ձին ու երբ Հազմս աչս համբուրեց հրաժեշտ տալու համար, իր հավատարիմ շունը, որ մինչ այդ կաղկանձելով և աղմկահույզ հաշոցներով փորձում էր շղթան կտրել, Հազմի կարգադրությամբ ազատ արձակվեց։ Իմաստուն Դիլբերը փոխանակ տիրոջ հանդեպ ուրախության ցույցեր անելու, ինչպես անում էր ուրիշ ժամանակ, կրտրեց աշխետի ճանապարհը և իր հարձակումներով թույլ չտվեց, որ ձին դուրս գա տան գավթի դռնից։ Մինչ այդ, տիրոջ կամքին չենթարկվող և տեղում մեխված աշխետը, կարծես հասկանալով շան հարուցած աղմուկի պատճառը, փորձեց վերադառնալ, բայց Հազմը ուժեղ սանձահարեց նրան և ասպանդակեց կողերը, որից խրտնայ՝ ձին

ժողովանական գուրս խոշանալու, ծառս եղավ Լուսի ոտքերի վրա ու փորձեց վար նեակել հեծյալին։ Ձիու և շան անսպասելի ըմբոստությունը կատաղեցրեց հեծյալին, որը սանձի պրկումով, ասպանդակի ու մտրակի հարվածներով, հարկադրեց ձիուն ենթարկվել տիրոջ կամքին։ Ձին ակամա, առտնց վարդի, շարժվեց դեպի դուռը, բայց հանդիպեց շան պազազած հարձակումներին։

Գիրերը կատաղել էր, նրան ղսպելու մեր բռնոր ջանքերը անցան ապարդյուն։ Գերգրգռված հեծյալը վերջին անգամ սաստեց շանը, բայց անօգուտ, շունը շարունակում էր հարձակումները աշխետի վրա։ Համբերությունից դուրս եկած երիտասարդ հեծյալը, ներկաներից աննկատ, հանել էր ատրճանակը և կրակել շան վրա։ Շունն անկենդան փովեց ձիու ոտքերի տակ, և հեծյալը շանսալով ետ դառնալու և ճամփորդությունը հետաձգելու մեր խնդրանքները, սրարշավ հեռացավ տնից։

Նույնը պատահել է Խնձորեկում, Մեհմեդի շան և ձիու հետ, սակայն Մեհմեդը առանց շանն սպանելու, երեք անգամ կրակել է օդի մեջ և դուրս սլացել տնից։ Նա թամբրա խաշմերուկում միացել է Հազմին։

Երրորդ նախազգուշացումը կատարվել է ձեր կողմից, բայց տիրոջ կամքին չհնազանդող խելագարները ենթարկվեցին նրա պատուհասին, մեկն ընկավ որպես համառության զոհ, իսկ մյուսը՝ ծանր վիրավոր։

Հազմի թաղումը կատարվեց մեծ շուքով, բայց գերեզմանին քար չդրվեց, որովհետև չէր լուծված արյան փոխվրեժը, մինչդեռ հավատարիմ շան քարե արձանը կանգնեցրին մուտքի դռան աջ կողմում՝ «Թր տիրոջ կյանքը փրկելու համար իր կյանքը զոհած հավատարիմ շունը» արձանագրությամբ։ Շանը սպանող տերը սպանված և շան վրեժը լուծված էր, մինչդեռ Հազմի գերեզմանը երկար տարիներ մնաց անքար։ Հետագայում արտասահմանում տեղեկացա, որ սպանությունից 31 տարի հետո, 1938 թ. դավադրաբար սպանել են Փյունկիլիին, որը 1907 թ. պատժախմբի ղեկավարն էր եղել և նոր միայն կարողացել են սրբել անպատվությունը աշիրեթի ճակատից ու գերեզմանաքար դնել Հազմի հողաթմբին։

\* \* \*

Պալազանի լեռնաշխարհի Խնձորեկ հայ ու բուրդ խառը բնակչությամբ մեր գյուղում, մեր

դրացի Լիսթից Մեմոյի բույր Շարեն փոքր տարիքում մարդու էր տրվել, բայց մի քանի տարի անց այրիացել էր և տղայի՝ Մատոյի հետ ապրում էր եղբոր մոտ։ Ես ու Մատոն ընկերներ էինք։

Գյուղի հայ ու բուրդ աղջիկներն ու հարսները, նրանց հետ էլ Շարեն, մի օր սար էին գնացել պարնան բանջարահավաքի։ Ետինքին էր (կեսօրից հետո), հավար տվին սարից, թե արջը փախչըրել է Ղոթից Շարենին, որն այն ժամանակ 24 տարեկան էր։ Գյուղում եղած տղամարդիկ փութացին սարվորներին օգնության։ Ես ու Մատոն էլ հետևեցինք նրանց։

Օխտն-աղբոր-գոռան բարձունքի մոտերքում հանդիպեցինք բանջարահավաքների խմբին, որոնց առաջնորդն էր հայտնի սարագնաց Սահակի Մայրոն, որը որպես ավելի տարեց և ավելի վերձառու, միշտ ընկերակցում էր շահենքին։

— Աղջկերքը երգելով ու ցատկոտելով, վազվրդում էին մոսկորի քուրերի և սնկերի ետևից։ Շարեն առաջնթացներից էր,—պատմում էր Մայրոն, կուրծքն ու գլուխը ծեծելով և մազերը փետելով,—ու հանկարծ աղջիկներից երկուսը սարսափահար ետ վերադարձան, հայտնելով, թե արջի մրթմրթոց են լսել։ Անմիջապես հավաքի ձայն տվի, ամեն կողմից եկան այս ու այնտեղ ցրված հարս ու աղջիկները, պակասում էր Շարեն։ Հարա-հրոցով, քարեր շարտելով, գնացինք դեպի աղջիկների ցույց տված կողմը։ Հասնելով Մոսկորուտի լանջին, լեղապատառ կանգ առանք։ Անտերը՝ առչեի թաթերով Շարենի գրկած ետևի թաթերի վրա շորոր տալով, իջնում էր դեպի ձորը։ Աղջիկներից երեքին ուղարկեցի օգնության կանչելու, մնացածներով հետապնդեցինք անտերին, բայց կորցրինք տեսողությունից ու ստիպված վերադարձանք։

Քսան հոգուց ավելի հետապնդողներ, իզճիներ Օվոյի և Շավոյի առաջնորդությամբ, գնացին արջի հետքերով։ Նույն գիշերը գյուղից օգնական նոր խմբեր գնացին առաջիններին ուտելիք տանելու և գիշերային որոնումների համար մարխի խրճեր հասցնելու։

Շարենի առևանգման երրորդ օրը, իրիկնադեմին, վերադարձան հետապնդողները։ Նրանք

<sup>1</sup> Կանայք արջին անտեր, թերմաշ, պեմրատ էին կոչում։ Հավատում էին, թե արջ կամ հես (քրդերեն) ասելիս արջը լուռ էր իր անվանումը և հետապնդում կանչողին, ուստի բացօթյա խոսակցությունների ժամանակ, անունը տալու փոխարեն, ակնարկում էին վերը նշված պլաբանական բառերով։

մանրակրկիտ խուզարկել էին հնարավոր տեղերը, սակայն ոչ մի հետք չէին գտել:

Անցավ Շարեի կորստյան առաջին տարին: Շրջակա բոլոր գյուղերին լուր էր տրված դեպքի մասին: Որսորդների, հետախույզների, հովիվների փնտրումները մնացին անհետևանք, հագուստի, ոսկրի ոչ մի հետք չգտնվեց, որով ապացուցվեց կամ հաստատվեց գաղանից հոշոտված լինելու ենթադրությունը:

Երկրորդ տարվա աշնան, մեր գյուղից մեկ ու կես օրվա ճանապարհ հեռու գտնվող ամենավայրի մի անտառում, քոնիկցի որսորդները ճերմակ լարերի բարձունքներից ականատես էին եղել ահավոր մի մարտի, որը տեղի էր ունեցել հսկայական մի արջի և մի քանի վարաղի միջև:

Երկու օրից հետո մեր գյուղը հյուր եկած քրուիկցի անվանի արջորս, ավագ Օխտնաղբեր (հավթ պրայան) հուրշիդ աղան, որը քրդերի և հայերի կողմից, կոչվում էր ռջրե ջերան հուրշիդ (քաջերի քաջ հուրշիդ), պատմում էր հետևյալը:

— Քոնիկից դուրս եկանք քարայծեր որսալու և Տուզդից Տեվրեշի աղու սյուննեթ-դուկինին (թլպատման հանգես) նվեր տանելու, որովհետև փոքր եղբայրս՝ Սմկոն, Տեվրեշի տղուն քիվրան պիտի ըլլար: Որպես որսորդներ, անհարմար էինք գոյում ընտանի կենդանիներ տանել, դրանցից շատ ունի Տեվրեշը: Առաջին օրը որսացինք մեկ նոխազ և երկու այծ, որոնք ուղարկեցինք լեռան ստորոտի սպոցարան-քարայրը: Այդ գիշեր մնացինք Քշտմա սարի հովիկներում: Որոշել էինք յոթ եղբոր կողմից գոնե յոթ այծ խփել: Երկրորդ օրն առտուն հասանք Մլբերդի ապառաժները, ուր քարայծերի հոտեր կան: Առաջին կրակոցներով խփեցինք ևս երեքը: Զորորդը, որ հոտի ների պիտակամորուս թեքեն (նոխազ) էր, վիրավորվեց, բայց չընկավ: Եղբարներիցս չորսին թողեցինք, որ զբաղվեն որսերի փոխադրությամբ, երեքըս հետապնդեցինք վիրավոր նոխազին: Վերջապես սպանեցինք ու հանգստանում և մոտակա գյուղերից փոխադրական միջոցի էինք սպասում: Մեկ էլ հանդիպակաց անդունդներից լսվեց վարազների կատաղի խոխոց և արջի գոգոցոց: Կովի վայրը գնալը անմտություն էր: Հսկայական արջը մի խոճկոր բերանին, անտառից դուրս եկավ դեպի բացատը՝ հասնելու դիմացի ժայռերին, բայց վրա հասած վարազները պաշարեցին նրան և թույլ չտվին տեղից շարժվելու: Արջը ճարահատ բաց թողեց խոճկորին և ետևի թաթերին կանգնած, ընդունեց մարտը: Ընկավ առաջին վարա-

զը, բայց արջն էլ տատանվեց ու վարազների հաջորդ հարձակումներից տապալվեց գետին:

Մենք, որ լարված հետևում էինք գաղանա-մարտի վախճանին, արջի տապալվելուց անմիջապես հետո, որպեսզի վարազները չքթբերին արջի մորթին, նրանց փախցնելու համար հրացանային համազարկ տվինք ու հասանք արջին, որը դեռ կենդանի էր: Հանգստացրինք և սկսեցինք քերթել:

Դեռ նոր էինք ձեռնարկել գործի, երբ անտառի խորքից հայտնվեց մի արարած՝ մաղակալած մարմնով, զգզված և խճճված մազերով, ծովում ված դիմագծերով: Արյունը սառեց մեր երակներում, դանակները վար ընկան ձեռքերիցս: Սատանա կամ ալք կարծեցինք, բայց նա, թարնվելով ծառի ետևը, խոսեց մարդկային լեզվով: Հագիվ լսելի քրդերեն բառեր էր հասնում մեր ականջին:

— Պրայանե մըն խելասքյարի, պրայան ջերե ջերան հուրշուդ, էզըմ, էզ, վայե շըմա, Շարե, մե թերսեթե, Շարե դուրպան պըտի լնկանե շըմա, մեթերսեթե էզըմ, հեսե պեր Շարե (Ազատարար իմ եղբայրներ, իմ եղբայր քաջերի քաջ հուրշուդ, ես եմ, ես քո քույր Շարեն, մի վախեցեք, Շարեն մատաղ լինի ձեր ոտքերին, ես եմ արջի տարած Շարեն):

Սկզբում չհավատացինք մեր ականջներին, բայց կրկնվող նույն խոսքերից կարծես սթափվեցինք և արյունը, որ սառած էր մեր երակներում, սկսեց շարժվել: Վերջապես մեծ դժվարությամբ կարողացանք ձայն տալ:

— Շարե, չըրա նէնա (Շարե ինչու չես գալիս):

— Կուլըմ, պե թումպան պե շապըզ, (մերկ եմ, անվարտիկ և անշապիկ),—պատասխանեց նա:

Այլևս ոչ մի տարակույս, կիսավայրենացած յրդուհին դեռ պահել էր ամոթի զգացումը և մերկ վիճակում չէր ուզում ներկայանալ տղամարդկանց: Հանեցի շապիկս և վարտիքս ու դնելով մոտակա թփուտներին, ձայն տվի, որ գա և հագնի:

Շարեն հագնվեց ու տարանք գյուղ:

Երկար ժամանակ Շարեն մարդամեջ դուրս չէր գալիս: Հակառակ բոլորի հոգածությանը, մնում էր լուռ ու փնտրում մութ անկյուններ թաքնվելու և արտասվելու համար: Շարեի դիմագծերը որոշակի փոփոխման էին ենթարկվել, ատամներն արտակարգորեն զարգացել էին ու չէին ծածկվում շրթների տակ, կզակը երկարել և դուրս էր ցցվել, ճիշտ է, խոսելը չէր մոռացել, բայց ձայնը բոլորովին փոխվել էր:

Ամիսները անցնելուց հետո, նախօրոք պայմանավորվելով, իր տարակից հարսները մեծ դժվարությամբ խոսեցնել տվին հեգ կնոջը:

— Տարված մոսկոր ու սունկ հավաքելով, չնկատեցի, թե ինչպես հանկարծ կոնակիցս գրկեցին ինձ և փակեցին բերանս: Նտինքին էր, երբ աչքերս բացի և տեսնելով վրաս հակած, դեմքս, շրթներս, ճակատս, նույնիսկ մերկացված կուրծքս լիզող պեմրատի դեմքը, կրկին կորցրի ուշքս: Ուշքի եկա երկրորդ անգամ, երբ զգացի թե մարմինս սառչում է, անտեղծ պառկեցրել էր ինձ ջրի մեջ և թաթերով, լեզվով ջուր էր թափում գլխիս և մրթմրթում, կրկին լիզում և տաքացնում: Երբ աչքերս բացի, դուրս հանեց ինձ ջրից և պառկեցրեց կանաչի վրա: Արևմտից քիչ անց, քնքշությամբ բռնեց ձեռքիցս և ոտքի կանգնեցրեց: Ոտքերս դողում էին, բայց ստիպված էի քայլել: Թույլ չէր տալիս ետ մնալ կամ առաջ ընկնել, քայլում էի քնքշող-կողքի: Երբեմն կանգ էր առնում, գրկում ինձ և իր շնչով ու մարմնի ջերմությամբ տաքացնում սառչող մարմինս: Լուսադեմին կանգ առավ հսկայական ապառաժներով շրջապատված անդնդախոր մի ձորում, վար դրեց ինձ քարին, մոտեցավ մի մեծ ժայռաբեկորի, մի կողմ հրեց այն և կրկին գրկելով ինձ, մտավ բացվածքից ներս, որը բավական ընդարձակ քարայր էր: Փակելով ինձ քարայրում, դուրս ելավ: Տնտղեցի ժայռը և հաստատ համոզվեցի, թե տասը մարդու ուժը անբավարար էր քարայրի մուտքը փակող վեմը շարժելու տեղից: Մայրաստիճան հուսահատ, ծնրադրեցի և աղոթեցի, օգնության կանչելով Հազրեթի-խորհրդի սկսած բոլոր սրբերին, աղոթում էի բարձրաձայն, հեկեկում, աղիողորմ ճիչեր արձակում: Մտածում էի փախուստի մասին, երգում բարձրաձայն, այն հույսով, թե գուցե որևէ անցորդ, որսորդ կամ հովիվ կլսի ձայնս և կփրկի ինձ ահավոր այս գազանից:

Մենակությունը էլ ավելի էր տանջում ինձ և հակառակ անտերից կրած սարսափին, ցանկանում էի, որ վերադառնար, գոնե իր մրթմրթոցով խզեր լուսթյունը և իր շնչով ու ջերմ մորթիով տաքացներ ցրտից սրսփացող մարմինս և կամ վերջ տար կյանքիս ու ազատեի ինձ այս վիճակից: Լսեցի, որ մուտքը փակող ժայռը շարժում են դուրսից, ականջիս հասնում էր ծանոթ մրթմրթոցի և մեղմ մոմոտցի ձայն, մուտքը բացվեց, ներս մտավ, վար դրեց գրկի բեռը և գրկեց զիս մարդու նման, լիզում էր դեմքս, ձեռքերս, մեղմուկներս: Սեղմում էր կրծքին ու տաքացնում ինձ: Բերել էր սունկ, մի մեծ կտոր հողոտված ու աղ-

տոտված միս: Սուր ժանիքներով անջատում էր մսի կտորները և դնում առջևս, իսկ թաթով մեղմ հարվածում էր թիկունքիս և վիզն ու գլուխն օրորելով, հրավիրում էր ուտելու պատրաստած ճաշը: Սոված էի, վերցրի մի կտոր սունկ ու կերա, վարժված չէի հում սունկ կամ միս ուտելու, բայց քաղցը ստիպում էր փորձել: Դուրսը պայծառ արեգակ էր, անտառում ճուղողում էին թռչունները, լսվում էր ջրի աղմկահույզ ձայնը, ծարավ զգացի, բայց ինչպե՞ս հասկացնեի մտադրությունս: Մոտեցա պեմրատին, հիշելով որդուս, տվի նրա անունը՝ Մստո, Մստո, շոյեցի ճակատը, դեմքը և գրկելով պարանոցը, ցույց տվի մուտքի անցքը, որ չէր փակված: Կարծես հասկացավ, ոտքի կանգնեց, ուղղվեց դեպի անցքը և բռնելով թեփուցս, հանեց դուրս, մի պահ աչքերս խողտացին անսովոր դարձած լույսից: Մի կերպ հասցրի ջրափ: Կուշտովու խմեցի պաղ ու զուլալ ջրից, ապա հավաքեցի ձնծաղիկ, կաթնահամ սինձ և քուլապ: Մստոն ուշադրությամբ հետևում էր շարժումներիս: Մի պահ մտածեցի կրակ վառել: Գրքապնդումս ունեի քստիկ (սեկից պատրաստված փոքրիկ քսակ), ուր բոլորդ էլ ինձ նման պահում եք կայծհան (չխամախ), կայծքար և արեթ (ղավ): Սկսեցի հավաքել շորացած շյուղեր և դարսել իրար վրա, մտադիր էի սունկ և միս խորովել: Մստոն ուշադիր հետևում էր շարժումներիս, ու երբ հանեցի գրպանիցս քստիկը և կայծհանը զարկեցի կայծքարին դրված արեթի ուղղությամբ ու երբ կայծերից բռնկած արեթը հրազրում էի, որ շյուղերը բռնկեցնեմ, հանկարծ անտեղծ վրա տվեց, թաթով ձեռքիցս խլեց քստիկը, կայծհանն ու կայծքարը և ջուրը նետեց, ապա դես ու դեն ցրեց հավաքածս փայտի կտորները և գրկելով ինձ, քարայր տարավ: Քարայրումն էլ որոշ ժամանակ անհանգիստ շարժումներ էր անում ու բարկացած նայում ինձ: Նախնական շփոթությունս անցնելուց հետո, նոր միայն անդրադարձա սխալիս, մոռացել էի, որ թերմաշները սարսափում են կրակից: Ապրելու, գուցե և ազատվելու միակ զենքս անխոհմաբար կորցրի:

Անցան օրեր ու շաբաթներ, թերմաշն այլևս չէր բաժանվում ինձնից, հետը տանում էր անտառ, միշտ հսկում շարժումներին և թույլ չէր տալիս, որ հեռանամ մոտից: Անտառում, ժայռե-

<sup>1</sup> Լեռնաշխարհում հայերի ու քրդերի մեջ սովորություն էր ութից-տասը տարեկանից սկսած գրպաններում քստիկներ կրելը, որ ի պահանջել հարկին կրակ վառել և պաշտպանվել գազաններից կամ շար ոգիներից:

րի մեջ, անսպառ անարատ մեղր կար, որը կերավ թե ինքը ու թե ես, որ վաղուց համեղ որևէ բան չէի կերել: Ապա կերանք անտառի պտուղներ՝ մասուր, հոն, դարանպուխ, մեռճեկ և այլն: Երկու օր մնացինք այդտեղ:

Աշուն էր արդեն, մոտ էր ձմեռը: Եթե Մատոն շարունակում էր թաթը լիզելով ապրել, ես ստիպված էի մտածել ձմռան պաշար հավաքելու մասին, սակայն ինչպես: Գիտեի քթոց հյուսել, բայց որտեղից ճարեի կոիկ, որ մոլեր կտրեի: Հաջորդ օրը, երբ դուրս եկանք ձորափ, մոտեցա պիքերի և փիճուռիների թփերին և փորձեցի ատամներովս մոլեր կտրել: Մատոն նախ զարմացավ, հետո հետևեց իմ օրինակին և կարճ ժամանակում այնքան մոլեր կտրեցինք, որ կբավարարեի մի տասնյակ քթոց և սակառ հյուսելու: Տեղնուտեղը գործի անցա, ցույց տվեցի Մատոյին, թե ինչպես պետք է մաքրել մոլերի տերևները: Մինչև կեսօր երկու քթոց պատրաստեցի, ոգորներից փոքր կապեր հյուսեցի և քթոցներից մեկը շալակած, ուղղվեցի անտառ: Մատոն հետևեց ինձ, բերելով երկրորդ քթոցը: Երկու քթոցների կանթերը ոգորներով միացրի իրար, պարապ քթոցները դրեցի Մատոյի մեջքին և Մատոյին տարա պտուղների մոտ: Մըստոն հասկացել էր մտադրությունս, ոչ մի ընդդիմություն ցույց չտվեց: Քթոցները լիքը տանձով ու խնձորով վերադարձանք տուն: Հյուսեցի ավելի մեծ չաթաճեն՝ մթերքը պաշարելու համար: Օրնիբուն կրում ու լցնում էինք մեր չաթանները, ճղերը և քթոցները: Գտա նաև մեղր մթերելու միջոցը: Մեր հայ հարևանուհուց սովորել էի կավեղեն ամաններ պատրաստել: Գործի դրեցինք իմ ու Մատոյի սուր ճանկերը, փորեցինք կավահողը, քթոցներով փոխադրեցինք ձորափ, ուր շաղեցի կավը և անցա գործի՝ տեղում պատրաստեցի սեռնիճներ, ծափեր, բղողներ, փարչեր և քարղաններ, որոնք չորացրի նախ ստվերում, ապա արևի տակ, որ չճաքճքեին: Մեծերը պարապ վիճակում տեղավորեցի քարայրի խորքում, միջակ ամանները զետեղելով քթոցների մեջ, ճամփա ելանք Մատոյի հետ: Ձմռան պաշարն ապահով էր, առատ ընկույզ, տանձ, խնձոր և զանազան հատապտուղներ էի լցրել ծղերն ու քթոցները, իսկ ծափերն ու հողե ամանները լիքն էին մեղրով:

Մինչև այդ օրերը հեզ ու բարի Մատոն, մի օր հանկարծ կատաղեց՝ արուն զարթնել էր մեջը և որպես էգի չարչարում էր ինձ, դիմադրել չէի կարող: Անցան տանջանքի այդ օրերն էլ, պեմբատը խաղաղվեց, դարձավ ավելի ուշադիր: Ձմեռն անցկացրինք առանց միջադեպի: Գարնան արե-

վոտ մի օր սոսկալի ցավեր ունեցա, Մատոն դառնում էր չորս դիս, լիզում էր փորս, այտերս ու արցունքներս: Մահու և կենաց պայքարը երկար շտեկեց, լույս աշխարհ եկան երկու քթոթ, մեկը՝ որձ, մյուսը քած (էգ): Կաթս անբավարար էր, դազանիկներին շօգնեց և մեղրը, ութ օրից սատկեցին: Մատոյի աչքերից արցունքներ էին հոսում, հողը փորեց և թաղեց ձագերին: Ծս էլ հիվանդացա ծանր կերպով, Մատոն տխուր էր, չէր հեռանում մոտիցս: Մեղրն ինձ փրկեց մահից:

Անցավ ամառը, եկավ աշունը, ձմռանը պատրաստվում էինք ավելի եռանդուն, սարսափով էի մտածում Մատոյի մոտակա կատաղության մասին, բայց այս տարի ավելի կազդուրված էի, տոկացի և այդ տառապանքներին, բայց զարնանը երեխա չունեցա: Երրորդ տարվա աշնանը որսի էինք դուրս եկել, երբ տեղի ունեցավ ընդհարումը Մատոյի և վարազների միջև: Ահա այդ ժամանակ էլ վրա հասան որսորդները:

Շարեն այլևս չամուսնացավ, ապրեց շատ երկար, բայց մնաց միշտ լուակյաց, անտարբեր ու թափթփված, խուսափում էր մարդկանցից:

Ու չգիտես ինչու, ստեղծվեց այսպիսի մի անեծք, թե կշտամբանք, որ դեռ հիշում են վերապրողները. «Յա հեթը, ճիեթ մնտե պտո, ճիե մնքի վերե ղլոթե Շարե պտո» («Ով աստված, դու քա... իմ վրա, ես էլ քա... Ղլոթից Շարեի վրա»):

\* \* \*

Պալապանի վանքերից ամենահինը և ամենագորավորը Սուրեն (Զուրուն) ավանին շատ մոտիկ սուրբ Թորոսի վանքն էր:

Այդ վանքի վանահայր Տեր-Պողոսենց Տեր-Օհանը, թեև քահանա և վանահայր, ժամանակին անվանի զազանազուսպի համբավ էր վայելում:

Մի անգամ վանքի հովիվները վանահորը նվեր են բերում երկու քթոթ՝ որձ ու քած: Վանահայրն անձամբ է զբաղվում դրանց վարժեցմամբ և այն էլ ոչ թե ատամները քաշելով, ծեծելով կամ ազաաաղկելով, այլ ազատ պայմաններում, փաղաքշանքի, մեղմ վարվեցողությամբ ու սննդի մատակարարման միջոցով:

Առաջին օրվանից կաբել է տալիս էշի չուլի նմանությամբ երկու չուլիկ և կաշեփոկերով ամրացնում քթոթների մեջքին, ապա մի քանի օր ամեն առավոտ հետը տանում է վանքի մոտակա ջրաղացը, որ տաք բաղարջով հյուրասիրեն: Նույն բանը մի քանի անգամ կրկնելուց հետո հանում է չուլերը և աղատ արձակում:

Քոթոթները առաջնայան ճաշը ստանալու համար վաղում են ջրաղացպանի մոտ, բայց վերջինս, ըստ պատվերի, չի հյուրասիրում նրանց։ Քոթոթները բավականին մրթմրթալուց և դողող-ուալուց հետո վանք են վերադառնում և վաղում վանահոր մոտ։ Վերջինս ցույց է տալիս չուլերը և դրանք կապում մեջքներին ու բաց թողնում դե-  
պի ջրաղաց։

Անոթի քոթոթները, որ նախապես վարժվել էին բաղարջի համին, կրկին վաղում են ջրաղաց-պանի մոտ։ Վերջինս կուշտ ու կուռ կերակրում է հյուրերին և ճամփու դնում։ Այսպես, քոթոթնե-րը հասկանալով, որ առանց կռնակներին չուլ ունենալու բաղարջ չեն ստանա, առտուն շատ կանուխ վաղում են շլերի մոտ և ամեն մեկը իր չուլը խածած, բերում են վանահոր մոտ, որ կապի մեջքներին, իսկ ամեն մեկն իր չուլը ճանաչում է նրանով, որ որձի չուլի երկու կողմից փոքրիկ վանդակներ են կախված լինում, իսկ էդի չուլը զարդարված է լինում կապույտ մեծ ուլունքներով։

Վանահայրը քաջալերված առաջին փորձի հա-ջողությունից, պատրաստել է տալիս փոքրիկ խուրջիներ, լցնում ցորենով, բարձում իր «սա-նիկներին» և հետը տանում ջրաղաց։ Այս անգամ բաղարջի հետ տալիս են նաև լակ։ Ամեն առա-վոտ բաղարջ և լակ ուտելու համար վաղում են վանահոր մոտ և սպասում, որ ցորենով լիքը խուրջիները բեռնեն և կապեն։ Այսպիսով, քանի մեծանում են քոթոթները, այնքան մեծանում են նրանց խուրջիները և ավելանում է ցորենի ծան-րությունը։ Վեց ամիս հետո, եթե քածը կրում էր ցորենի խուրջինը, ապա արուինը վերածվել էր փալանի, ասպանդակներով և արծաթապատ նախշուն սանձով, և ցորենի բեռան փոխարեն մեջքին կրում էր Տեր-Օհանի թոռանը՝ ապագա վանահայր Տեր-Պետրոսին, որին սովորեցրել էին ջրաղաց հասնելուց և քոթոթներին բաղարջ ու լակ ուտեցնելուց հետո, իր կողմից նրանց մի քանի հատ ջարդած ընկույզ տալ։

Քոթոթներին, բեռ կրելու և հեծնելու վարժու-թյուններին զուգընթաց, վանահայրը սովորեցնում է նաև պահակություն անել մեղվանոցում, ուր բացի ճաշից, տալիս է մի-մի բաժին մեղր։ Քո-թոթներին չեն զրկում նաև կաթից ու մսից, թարմ կամ չոր մրգից, միայն թե միսը տալիս են եղել կիսախաշ վիճակում, իսկ մսի ջրից պատրաստել են լանթակ։ Որսացված նապաստակների, խոճ-կորների, նուլնիսկ հովազների միսը (որ իրենք չէին ուտում) տվել են արջուկներին, որոնք բնա-

կանից ավելի ուժեղ և պնդակազմ փռչոտներ են դարձել։

Վերջապես, արջուկները մեծանում են ընա-կան պայմաններում՝ անտառ, սար, մաքուր օդ, առատ ջուր, մանավանդ լավագույն սնունդ և բարյացակամ, ավելի ճիշտ՝ գուրգուրոտ վերա-բերմունք։

Որձի անունը դրած են լինում Զեյրան, բայց կրճատ կոչում են Զերո, որ քրդերեն նշանակում է Բաջ, իսկ քածինը՝ Սեյրան։ Անցնում է առաջին տարին, արջուկները դառնում են արջ։ Զմռան փոթորիկների ժամանակ երբ ջրաղացի ճամփան փակվում է, և երբ եզն ու ջորին չեն կարողանում ախուրից դուրս գալ, Զեյրանն ու Սեյրանը կանո-նավորապես բեռներ են փոխադրում վանքից ջրաղաց և ջրաղացից վանք։

Հասնում է գազանների գուգավորման շրջանը։ Վանահայրը առանց չուլի ու փալանի արջերին տանում է անտառ և ձգելով առանձին, ինքը թաք-նելով է ժայռերի արանքում և հետևում գազան-ների վարմունքին։ Նրանք վազվզում են, գզվրոտ-վում, բայց երբ հասնում է ճաշի պահը, վաղում են դեպի վանքը, ուր պարսպի դռները փակ են գտնում։ Փոխանակ հտ վերադառնալու դեպի ան-տառ, դեպի ազատություն, թաթերը դրած վանքի պարսպի մեծ դռանը, ճանկոտտում և գողգողում են, մինչև որ վանահայրը վրա է հասնում և կարգադրում, որ ներս թողնեն։ Մեծանում են նրանց բեռ կրելու չուլերը և հեծնելու փալանե-րը, ավելանում է բեռնատարությունը և փոխվում հեծյալը։ Այժմ վանահայրն է նստում Զերոյին և գնում ջրաղաց, հանդ, անտառ, միշտ հետն ունե-նալով բեռնատար Սեյրանին, որը մեջքին կրում է երեքին հասանելիք ուտելիքները։

Գարնանը Սեյրանը ծնում է երկու քոթոթ, ար-ջային ընտանիքը բազմանում է։ Իսկ վանահայ-րը, որ մինչ այդ արտաքին աշխարհից գաղտնի էր պահել գազաններին վարժեցնելու իր փորձե-րը և ձեռք բերած հաջողությունները, այլևս վըս-տահ իր հաղթանակին, որոշում է հանրահայտ դարձնել այն։

Նույն տարի վարդավառին Մաղկասարի ս. Դավիթ վանքում մեծ տոնակատարություն էր սպասվում։ Հրավիրված են լինում Դերսիմի հայ ու քուրդ կրոնապետները, որոնց կարգին նաև Տեր-Օհանը։ Վանահայրը կարգադրում է, որ Սեյրա-նին բեռնեն ճամփի ուտելիք (ընկույզ, մեղր, թեր-խաշ միս, բաղարջ, չոր մրգեր) և նվերներ վանքի համար, իսկ ինքը հեծած Զեյրանին, լեռնային արահետներով, առանց որևէ գյուղ մտնելու, հաս-

նում է ս. Դավթի վանքը, որը գտնվում էր Հարթ կամ Հայք գյուղի շրջանում:

Եվ այսպես, ս. Թորոսի վանահայր Տեր-Օհանը, հեծած իր Զեյրանին, ընկերակցությամբ բեռնատար Սեյրանի ու նրա երկու քոթոթի, մոտենում է ս. Դավթի պարսպադռանը, ու երբ վանքում հավաքված կրոնական ու քաղաքական ավագները տեղեկանում են այդ մասին, նախ սարսափում են և պատահածը վերագրելով տեսիլի, չեն ուզում հավատալ իրենց աչքերին, բայց լսում են վանքի դարբասի առջև կանգ առած Տեր-Օհանի ահեղա-աստ կշտամբանքը, թե՝

— Ինչո՞ւ եք դողում ահից, երևի ձեր մեջ պակաս է հավատը դեպի ամենակարողը և նրա զորավոր սրբերը, որ դուք փոխանակ հավատալու իրականությանը, մատնվել եք խուճապի և մոռանում եք մեզ բոլորիս ստեղծող աստծուն: Վա՛յ ձեզ, վա՛յ ձեզ, սրբապիղծ մարդիկ, որ չեք տեսնում գազանների անգամ վանքի ծառայությանը և մարդու հնազանդությանը ենթարկող ամենակարող տիրոջ սուրբ զորությունը և տեսիլ կարծելով այն, չեք հավատում ձեր տեսածին:

Ներկա եղող ավագները, սթափվելով խորը զարմանքից, բոլորը միասին ծնկաչոք առաջանում են դեպի վանահայրը և նախ վերնազգեստի քղանցքը, ապա ձեռքը համբուրելով, խոնարհվում են նրա առաջ ու թողություն խնդրում:

Աղոթքներով ներս առաջնորդված վանահայրը իջնում է իր «երիվարից», ապա վար առնում Սեյրանի խորշինները և խնդրում առանձին տեղ հատկացնել աստվածատուր արջային ընտանիքին, ուր ինքն անձամբ կերակրում է գազաններին սովորականից ավելի համեղ ճաշերով:

Պատմում էին, որ վարդավառի այգ հավաքը վերածվում է երկրպագության և փառաբանության տոնակատարության, և այդ օրն իսկ ս. Թորոսի վանքը հռչակվում է չեզոքության գոտի, այնտեղ ապաստանողները՝ զերծ ամեն հետապնդումից, իսկ նրա վանահայրը՝ ս. Թորոսի ներկայացուցիչ հրաշագործ տեսն (տերտեր):

Ներկաներից Սեիդ-Տեմենը խնդրում է Տեր-Օհանից, որ արջի երկու քոթոթը նվիրի իրենց օջախին, որպեսզի իր օջախն էլ զերծ չմնա աստծո շնորհից:

Ըստ սովորության, օջախի փրիի խնդրածը մերժել չէր կարելի: Տեր-Օհանը համաձայնում է քոթոթները տալ Սեիդ-Տեմենին, նախազգուշացնում միաժամանակ նրանց կերակրելու և հետևելու վարվելու ծայր աստիճան դժվարությունները ու հաղորդում է նրան իր ձեռք առած միջոցների

մասին, որով կարողացել է սիրաշահել գազանների պաշտպան սրբի վստահությունը:

Սեիդ-Տեմենը, խոստանալով կես առ կես կատարել վանահոր պատվիրանները, քոթոթներին տանում է տուն և մի քանի օրից հետո, ս. Թորոսի վանքին նվեր է ուղարկում մի ձի և 50 ոչխար՝ դառները հետը:

Պատմում են նույնպես, թե մի տարի հետո Սեիդ-Տեմենի արջուկները բզկտում են իրենց խնամող ծառային և փախչում անտառ: Տեր-Օհանի քննություններից պարզվում է, որ արջերին կերակրող Սլոն գողանալիս է եղել կենդանիների հատկացված սննդամթերքը և միշտ հայհոյանքով ու ծեծով վարվել նրանց հետ: Քոթոթներն առաջին օրից թշնամացել են Սլոյի հետ և վերջին անգամ գյուղից դուրս ծեծ ուտելու ժամանակ հարձակվել են նրա վրա, բզկտել ու անհետացել անտառում:

Այս դեպքն էլ ավելի է բարձրացրել ս. Թորոսի հռչակը:

Արջի և մարդու փոխհարաբերությունների մասին իրապատումներից ահավասիկ մեկ ուրիշը ևս՝ 1915 թ. հայկական կոտորածների ժամանակից:

Ավգերտ և Պաղր լեռների ստորոտում էր գրտնրվում հայ և քուրդ բնակչությանը Աթուն-Հյուսիս փոքրիկ գյուղը, ուր բնակվում էր նաև 16 անդամից բաղկացած Միրագից Չավուշի ընտանիքը:

Չավուշը, որը ներկայումս իր բազմանդամ ընտանիքով բնակվում է Երևանի Թամանցիների փողոցում, պատմեց հետևյալը:

Մեր գյուղը գտնվում էր գրաված շրջանում, բայց մենք զինված էինք: 1915-ի կոտորածները գեռ չսկսած, որոշեցինք հեռանալ մեր գյուղից և մի քանի ընտանիքով հաստատվել Պալապանի լեռնաշխարհի ամենաանառիկ վանքերից մեկում՝ ս. Թորոսում:

Հայ և քուրդ խառն փախստականների մեր խմբում գտնվում էր նաև կնոջս եղբայրն իր երկու երեխայի և կնոջ հետ միասին ու զինված էր: Ճանապարհին աներձագս երեխաների պատճառով ետ մնաց խմբից, և մենք կորցրինք միմյանց:

Աներձագս և կինը երեխաներին շալակած անտառից անցնելու ժամանակ նկատում են, որ մի արջ հետևում է իրենց: Ավգերտի թրքական զորանոցներում գտնվող թուրք զինվորների ուշադրությունը չգրավելու համար հնարավոր չէր կրակ վառել կամ զենքի դիմել:

Կաղանի հետապնդումից ազատվելու միակ միջոցը կնոջն ու երեխաներին քարայրում թաքցնելով հեռանալն էր, որպեսզի արջը զինված տղամարդ տեսնելով, չվնասի կնոջը և երեխաներին, կնոջն ու երկու փոքրիկներին քարայրում տեղավորելուց հետո, ինքը թաքնվում է մոտակա ժայռերում և հետևում արջի շարժումներին: Արջը հասնելով քարայրի առջև, կանգ է առնում և նկատելով, որ մայրը գրկած իր փոքրիկներին, երեքով միասին լաց են լինում ու սարսափից կծկվել են քարայրի անկյունում, մրթմրթալով դուրս է դաշտի ալիքից ու թափերի վրա պառկում քարայրի մուտքի առջև:

Մայրը նկատելով, որ արջն իրենց վնասելու մոտադրություն չունի, լացն ու ողբը դադարեցնում է և կերակրում երեխաներին: Դիշերը վրա է հասնում: Արջը առանց տեղից շարժվելու, մնում է նույն դիրքում: Երեխաները լաց են լինում, արջն էլ կարծես ձայնակցում է նրանց և աղիողորմ ձայներ հանում: Առավոտը երեխաների մայրը նկատում է, որ արջի աչքերից արցունք է հոսում և վայրի գազանը ազդված երեխաների ճիչերից, արտասվում է նրանց հետ:

Արևածագից հետո, ամուսինը հրացանը թաքցրնելով, անզեն գալիս է դեպի քարայր: Արջը տեսնելով տղամարդու գալը, հեռանում է քարայրից և իր պաշտպանյալներին հանձնում հոր պաշտպանությունը:

Արջի պաշտպանած այդ երկու փոքրիկներն այժմ արդեն տուն-տեղ եղած, ապրում են Հայաստանում և իրենք էլ իրենց կարգին պատմում են իրենց զավակներին արջի բարության մասին:

\* \* \*

Դերսիմում ապրող հայերի և քրդերի մարդաբանության մասին խոսելիս նրանց չի կարելի մեկը մյուսից անջատել: Նույն առողջարար լեռնաշխարհում, կլիմայական նույն բարենպաստ պայմաններում աճել ու հասակ են նետել մարդաբանական նույն կառույցով ու նկարագրով, նույն բնավորությամբ ու կազմով մարդիկ: Հին ավանդույթների և սովորույթների պահպանման հետ, պահվել էր նաև մարդաբանական կազմը-վածքը, այնպես որ հնարավոր չէր արտաքինով զանազանել հայը քրդից, լուսավորչականը՝ ալե-վիից: Դերսիմում ապրող լեռնաբնակների հասակը 1,60—2,20 մետր էր, լայն թիկունքով բարձր կրծքավանդակ, ջղուտ երկայն բազուկներ, կուռ և ուղղահայաց կեցվածք, առավելապես մեծ

և սև աչքեր, թավամազ, խիտ և երկայն հոնքեր, լայն և բարձր ճակատ: Առհասարակ երկարակյաց էին, 80-ից մինչև 140 տարի ապրողներ շատ կային, ապրելու միջին տարիքը վաթսուներից վեր էր: Մերովսյան ժամանակ անվթար մնում էր չիշողությունը, ձեռքերը և ոտքերը չէին դողում: Հարյուր տարին անցնելուց հետո փոքր ատամներ էին բսնում: Խութաց-ձորի՝ Տեր-Օվանի, Անահիտի կաթնաղբյուրների և Բոլոմորիի շրջաններում մեծամասնությունը 90 տարուց ավելի էր ապրում:

Դերսիմցիների սովոր մեծամասնությունը թխագույն էր (ցորնագույն), արտահայտիչ գեղեցկությամբ, այրերի բեղերը և մորուսը միախառնված, խիտ և երկար էին, ունեին ազդու նայվածք (հայացք), մարմնական համաշափու-թյունը, տարիքին համապատասխան, պահում էր վարձագման և աճման բնական չափը: Միջահասակներ քիչ կային, կարճահասակները հազվադեպ էին:

Դերսիմցիներ քայլը չունեն, նա վազում էր, կարծես լարված մի մեքենա մղում էր տալիս քայլվածքին, որն այնքան արագաշարժ էր, որ կարծես թռչում էր: Ձայնը բարձր և թնդուն էր, խոսում էր գոռում-գոչումով, խոսելիս կարծես կռվում էր:

Դեմքը ձվաձև էր, կզակը՝ կլոր, այտերը՝ կարմիր, շրթները՝ մսոտ, ատամները՝ խիտ, սպիտակ և մարգարտաշար, կեցվածքը՝ ուղիղ և առնական, քիթը՝ առհասարակ արծվային (առծվառն), ոտքերի և ձեռքերի թաթերը՝ խոշոր, մատները՝ հաստ ու երկար, ուժեղ և առնական:

Դերսիմցի կանայք բարձրահասակ էին, միջին գիրություն, գեղեցկադեմ և աշխույժ, քայլվածքն՝ արագաշարժ, խոսվածքը՝ բարձր, մարմնական կազմությունը՝ համաշափ, հասակը՝ սլացիկ: Սկայա էին, սև և խիտ մազերով, կարմրե-այտ, մսոտ շրթունքներով, զարգացած կուրծք և գրավիչ հայացք ունեին: Դերսիմցի կինը ուժեղ էր, անվախ, հանդուգն, բայց շատ գթոտ ու բարեսիրտ:

Առհասարակ Դերսիմում ուռած և դուրս ցցված և տամոքսով, աչքի ընկնող գիրությամբ մարդիկ չկային: Աշխարհագրական և կլիմայական պայմանները, զբաղմունքների բնույթը հնարավորու-թյուն չէին տալիս գիրանալու:

Դերսիմի հայ և քուրդ բնակչությունը հավասարապես դուրագրգիռ և շուտ բարկացկոտ էր, բայց ներողամիտ ու խոնարհ, մեծամտության հակում չունեին, անվեհեր քաջեր էին թշնամու դեմ մղված մարտերում, հեզ և բարյացակամ՝

տկարների նկատմամբ: Ատում էին գողութունը, պաշտում քաջագործությունը, աններող և վրեժխնդիր էին հայրենադավների և մատնիչների նկատմամբ, զգվում էին ինքնագովներից և ինքնահավաններից, մանավանդ բանասարկուններից: Սիրում և մեծարում էին քաշերին, քաշությունը լեռնաշխարհի բնակչության բնածին հատկությունն էր, ծայր աստիճան հյուրասեր էին, հյուրասիրում և պաշտպանում էին նույնիսկ ամենաոխսրիմ թշնամուն, երբ նա ապավինում էր իրենց օջախին: Պատվախնդիր էին և աններող պատվի հետ կապ ունեցող որևէ հարցի նկատմամբ: Առանց մտահոգության կամ կասկածի, օտար և անծանոթ մի կին կարող էր ապաստան գտնել որևէ հասարակ մարդու տանը, ոչ ոքի մտքով չէր անցնի նեղել կամ բռնաբարել նրան, ընդհակառակը, ունեցած ամենալավ կերակուրներով հյուրասիրում, պաշտպանում և ճամփու էին դնում այն հյուրին, որը որևէ առիթով պատվում էր օջախը և բարեհաճում կտրել հացի պատառը: Դերսիմի բնակչությունը, թեև մեծահոգի և վեհանձն, բայց շատ միամիտ և դյուրահավատ էր: Դերսիմցուն խաբելը շատ հեշտ էր, բայց վայ այն դեպքում, երբ պարզվում էր, որ իր վստահությունը չարաչար գործածված է: Որբերի, ալրիների և տկարների հանդեպ շատ բարյացակամ էին: Թըշնամու դեմ կռվելու ժամանակ զենքի ուժով թալան, կողոպուտ կատարող դերսիմցին, որ չէր խնայում ոչ ոքի, հեզ ու փափկասիրտ, գորովազուրկ և բարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերում որբերի և աղքատների նկատմամբ: Պատահել են դեպքեր, որ դերսիմցիք քշել են այսինչ գյուղի ոչխարների հոտը կամ նախիրը, բայց երբ տեղեկացել են, որ թալանված անասունների մի մասը չքավորներինն է, անմիջապես վերադարձրել են տերերին: Որոշ պարագաներում մեծահարուստներից թալանված անասուններից կամ իրերից բաժին են հանել որբերին, ալրիներին, անտեր մնացած աղքատներին: Դժբախտության պարագային անմիջապես օգնության հասնող, իր կյանքի գնով տկարը և անճարը պաշտպանող, ունեցած պատառ հացը աղքատի հետ բաժանող դերսիմցի հայերից ու քրդերից ավանդաբար պահպանված այս սովորությունը օրենքի կարգ անցած էր և խիստ կերպով պահպանվում էր բոլորի կողմից:

Առանց սեռի, ազգության (բացի թուրքերից) և կրոնի խտրության, եթե մեկը որևէ պատճառով փախստական կամ հալածված՝ իր ընտանիքով ապաստաններ լեռնաշխարհի որևէ գյուղում (այնտեղ, ուր թուրքին ծախված աղաներ ու բեկեր

չկային), գյուղի բնակչությունը, առանց որևէ թեմադրանքի, առնում էր նրան իր պաշտպանության տակ, ամեն մեկն իր հնարավորությունների չափով օգնում էր եկվորին և լավագույն կերպով ապահովում նրա ապրելու բոլոր միջոցները: Մեկը գերան էր տալիս, մյուսը՝ գառ կամ ոչխար, մեկը հողամաս էր տրամադրում, մյուսը՝ կապերտ կամ անկողին, մեկը կարագ էր բերում, մյուսը հավ կամ ձու, վերջապես օգնությանը և համագործակցությանը նորեկ ընտանիքին տուն էին կառուցում, անասուններ տալիս, մինչև որ նորեկը դառնում էր նույն գյուղի ինքնաբավ և հավասար անդամ:

Դերսիմցիները առհասարակ ձեռք չէին տալիս կնոջը, հարգում և մեծարում էին նրան, ուշադիր և բարեգութ էին մանավանդ նշանվածների և նոր ամուսնացողների նկատմամբ: Ամենամեծ թշնամին եթե կռվի կամ այլ պարագաներում ընկներ հակառակորդի ձեռքը ու եթե ասեր, թե նշանված է ու նոր ամուսնացած, առանց որևէ պայմանի վերադարձնում էին ինչ-որ գրաված էին և իրենց պաշտպանության տակ ուղարկում տուն: Այս պարագան ավելի ուժեղ կերպով շեշտված էր Մի-րագյունների մեջ, որոնք նույնիսկ չէին խնայում իրենց ամենամոտիկին, եթե իմանային, որ նա կողոպտել կամ ձեռք է բարձրացրել նշանվածի վրա:

Դերսիմում պահպանվում էր հյուրասիրության ավանդական կարգը՝ տան դուռը բացող որևէ այցելու, լինել պատահական անցորդ, թե հատուկ հյուր, հյուրասիրվում էր տանտիկնոջ կողմից: Ընդունված կարգ էր, որ տուն մտնողին սեղան դրվեր, ճաշ տրվեր, իսկ եթե աճապարում էր՝ հաց ու պանիր էին դնում ճամփին ուտելու համար: Ոչ մի տարբերություն չկար հայերի ու քրդերի հյուրասիրության միջև: Հայը ասում էր՝ հյուրը աստծունն է, քուրդը ասում էր՝ մեյման մեյման է հեքդի (որ նույնն է): Հայը լավաշ էր հրամցրել, քուրդը՝ սաճի հաց, հայը պիրան էր կախում թոնիրը, եթե աչքի ընկնող հյուր էր եկել, քուրդը՝ սաճ-դավուրմասի, հայը սուուն էր հրամցրել (պաշտոնական), քուրդը՝ պապըթ, վերջապես թթու թանից, մածունից, մեղրից, կարագից, սերից, ձվածեղից սկսած մինչև խորովածները, պըճըգից սկսած մինչև բաղարջը, ոտք լվանալուց մինչև ոտք շփելը՝ կատարվում էր միատեսակ:

Քրդերը թեև հյուրին մեյման էին կոչում, բայց հյուրը առավելապես բախտ էին նկատում և բախտավորություն համարում, եթե հյուր էին ունե-

նում: Տան բախտը չկորցնելու համար, աշխատում  
լին ամեն գնով գոհացնել նրան: Հաճախ է պա-  
տահել, որ թուրք կառավարութեան կողմից քա-  
ղաքական պատճառներով հալածված հայերն ա-  
յաստանել են Դերսիմում և հյուրասիրվել քըր-  
դերի կողմից: Թուրք կառավարութեան բոլոր դի-  
մումները փախստականներին հանձնելու, մնում  
լին տնհետեանք: Նոյն ժամանակ հայեր, որք կա-  
ռավարութեան կողմից հազար դեղին ոսկու դիմաց  
պահանջված փախստականի հանձնումը մերժվել  
է, նույնիսկ ամենաաղքատ քրդի կողմից և հա-  
մարձը պաշտպանել է հյուրասիրող իր անդամի  
վարմունքը:

Այս սովորությունը պահպանված էր նաև Մի-  
լոսթանների կողմից: Պատահել է, որ նույնիսկ  
յենքի են դիմել իրենց օջախին հյուր եղողի  
կյանքը պաշտպանելու և նրան պահանջողին չը-  
հանձնելու համար:

\* \* \*

Մի օր,—պատմում էր տատս,—երկու մեծ  
սեռերն թանխաշ, մեկ սեռերն հալած կարագ, մի  
սիկ թան և մի տավարձը լիքը լավաշ հաց ու պա-  
նիր շալակած մորդ հետ (որ այն ատեն դեռ աղ-  
ջիկ էր) կտանեինք Հինգեղի մեր քաղվորներին:  
Ճամփուն, դեռ չխտակ աղբյուրները չհասած, մեր  
դեմը ելան երկու քաղքցի: Նրա մեզ տեսան, կանգ  
առան ու հարցրին:

— Քույրիկ, ուր կերթաք, այդ ինչքան կերա-  
կուր կտանեք, հարսանիք ունեք, արդյոք:

Մայրդ, որ քիչ թե շատ գրոց-բրոց էր՝ սաղ-  
մոս, ավետարան, նարեկ կկարդար և ժամը զատ-  
կի պատարագին սուրբ-սուրբը կերգեր, պատաս-  
խանեց:

— Մեր քաղվորներին ճաշ կտանենք:

— Ինչո՞վ պատրաստված է ձեր ճաշը:

— Թանով և կորկոտով,—և ավելցուց,—այս  
երկու սեռերն թանխաշին վրա կլեցնենք այս մեկ  
սեռերն կարագը, ապա կտանք պանիր և լավաշ  
հաց, իսկ վրայից՝ պաղ աղբյուրին մեզ սառեց-  
ված թան:

Օտարականները մի պահ կանգ առնելուց և  
մեղ անհասկանալի լեզվով իրարու հետ խոսելուց  
հետո, հարցրին:

— Արտերը հեռու ե՞ն շատ, կարելի է, որ  
մենք էլ ընկերանանք ձեզ:

Մայրդ իմ կարծիքը առնելուց հետո նրանց  
հրավիրեց ընկերանալու մեղ:

Օտարականներից մեկը, որ լավ հայերեն կը-  
խոսեր, հարցրեց մորդ:

— Դուք քրիստոնյա եք, թե մահմեդական,  
Քրիստոսի քարոզած ավետարանին, թե Մուհամ-  
մեդի դուրանին կհավատաք:

Պարզվեցավ, որ իրենք բռնաբեռ են (բողոքա-  
կան), Իկել են մեղ մոտ քրիստոնեություն քարո-  
զելու: Պահ մը արյունս գլխիս խփեց և մտածեցի  
ձեռքիս սեռերններից մեկն անցընել մեկն ու մեկի  
գլուխը: Մայրդ հասկըցավ դիտավորությունս և  
քրդերեն նախազգուշացուց զիս և ավելցուց՝ նախ,  
որ քաղվորները քաղցած կմնան և հետո՝ թող դան  
մեզ հետ, պապը երկուսին էլ պատին կսեղմի:

Վերջապես հասանք քաղվորներին, մայրդ  
բողբեն լեզվով հասկըցուց պապուն, թե ովքեր  
են մեր ընկերակիցները:

Պապը ընդառաջ գնաց հյուրերին, հրավիրեց  
նստել առվակի եզերքի մեծ ընկուզենու շուքին  
տակ:

Քաղվորները երկու մասի բաժանվեցան, տղա-  
մարդիկ՝ հյուրերի կողմը, իսկ հարս ու աղջիկ ծա-  
ռին մյուս կողմը նստան ճաշի:

Պապը հրավիրեց հյուրերին՝ ճաշել իրենց հետ,  
սակայն երկուքն էլ մերժեցին:

Ճաշից հետո հյուրերը խոսք բացին ս. Գրքի  
բարոգութեան մասին: Պապը կարծես այդ հարցի  
արժարժմանը կսպասեր:

— Բարով, հազար բարի եք եկեր մեր գեղը,  
միք ալ լսեր էինք քի էդ Քոլոնպոսի գտած երկ-  
րից գիտնական մեծ մարդիկ էկած էն մեր կող-  
մերը քրիստոնեություն քարոզելու, ամմա տիրո  
հիմա զսմեթ չէր եղել, էդ սուրբ մարդոց էրեսը  
տեսնելու, բարով, հազար բարով, մեր աչքերուն,  
մեր գլխին վրա տեղ ունիք:

Քաղվորներն ափի բերան մնացած պապիդ  
այդ մեղրածորան խոսքերից անհամբերությամբ  
սպասում էին վերջաբանին:

Բռնությունը (որոնցից մեկը բժիշկ էր, մյուսը՝  
պատվելի), երևի քաջալերված պապի սիրալիր  
խոսքերից, առաջ շարժվեցին և բժիշկը ս. Գիրքը  
երկարելով պապուն, ասաց:

— Կտեսնեմ, որ դուք իրական հայեր եք, առեք  
այս ս. Գիրքը, որը կնվիրեմ ձեզի, և երբ իրիկու-  
նը կվերադառնաք գյուղ, կհավաքեք գյուղացիներ-  
ին, և մեր պատվելին, որ աստծո խոսքի քարո-  
զիչն է, կբացատրե ձեզ ս. Գրքի էությունը և կու-  
տա անոր մեկնաբանությունը:

Լսելով այդ խոսքերը, պապը կատաղեց և դառ-  
նալով քաղվորներին, խռովահոգ ձայնով ասաց:

— Հալա սըվոնց խելքին աշեցեք,—և դառնա-

լով պատվելիքների կողմը, նույն բարկութեամբ շարունակեց.

— Ըսել է դուք եկեր եք մեզի քրիստոնեություն քարոզելու, ես ալ մտքովս կըսեի քի պէլքի եկեր են մեր գեղի քրդերը քրիստոնյա դարձնելու,— և տեղից ցատկելով, վար առավ ընկուզի ճյուղից կախված տավարճը և դառնալով մորդ, ձայնեց.

— Աղջի, Սիմա, տավարճդ են հանե նարեկը և ցույց տուր էս անզգամներին, թե երբ իրենք դեռ ազգ ու հայրենիք չունենին, մենք Գրիգոր Նարեկացի ենք ունեցել, որ այս նարեկն է գրել, սվոնց գլխին փարատյա մը կարդա և ըսէ՝ աստված խելք տա:

Մայրդ կարդաց նարեկեն մի քանի հատվածներ ու լռեց, այն ատեն պապը կրկին խոսքը ուղղելով հյուրերին, ավելացրեց.

— Եթե եկեր եք մեր գեղի քրդերը քրիստոնյա դարձնելու, բարի, հազար բարի, ձեր գալը բարի, իսկ եթե եկեր եք ձեր սուտ ու փուտ քարոզչերով մեզ խաբելու, վայ ձեզ և ձեր խելքին: Մենք դիր ու գրականություն ունինք, մենք ժամ ու վանքեր ունինք, մենք զալմաների մեջ մեր ազգությունը, մեր քրիստոնեությունը պահեր, ջարգեր-ջարդեր, բայց հայ ենք մնացեր, նայեցեք ձեր աջ կողմը, սա մեր հին գեղի կիսակործան ս. Սարգսի տաճարն է, զալմանը քանդեր են, մենք նոր գեղ, նոր ժամ ենք շիներ:

Հուզված պապը խոսքը մի պահ ընդհատելուց հետո, շարունակեց.

— Վայ ձեր խելքը չորանա, վայ ձեր տունը քանդվի, վայ դուք քաֆթառ շներ, որ փոխանակ Զինումաչինը հավատքի բերելու, փոխանակ Ինդուքիթային քրիստոնեություն քարոզելու, փոխանակ մահմեդական արաբին ու իսլամ թուրքին հավատքի բերելու, անամոթաբար եկել եք այն ալ ուր՝ Եկեղյաց զավառը, և վեր գեղը՝ Խնձորեկ, և ինչ անելու՝ աստծու խոսքը քարոզելու: Թու ձեր սուրաթին, թու ձեր նամուսին, մենք երբ հայ քրիստոնյա էինք, գուք անազգ, անհայրենիք անհավատներ էիք: Քանի մութը չի կոխել, հեռացեք այս տեղեն և առանց գեղ մտնելու գնացեք մեր սուրբ հողերեն:

Քարոզիչները անակնկալի եկան, հարս ու աղջիկ հռհռացին, նույնիսկ կատակախոս Եղիկաց Խաչոն դիտել տվավ.

— Այ բալամ, դուք որ ըսդար խելացի էիք և մեծ-մեծ գիտնական, հըբը ինչի մեկ հատ թուրք չկոցիք քրիստոնյա դարձնել և Մեհմետի խենչելից, զոփայից շան պես վախցած, Քրիստոսի փե-

շերի տակ պահվտուք կխաղաք, գացեք մեր գեղի Մատոյից Խամայիլը քրիստոնյա մկրտեցեք, Կալապետից պապը կլվելիք պտուղ չէ:

Բռտոները այլալված և խորտակված ճամփա ելան, բայց չես գիտեր ինչ մտածեցին, մեզնից մի քիչ հեռանալուց հետո դիմացի խնձորի ծառի տակ նստան և սպասեցին, որ քաղվորը գործի անցնի, որովհետև մեզնից հեռանալու ժամանակ մեզի անծանոթ լեզվով մի քանի բաներ խոսեցան, քեռիդ՝ Ատոմը, որ միշտ օտարականների շուրջը կդառնար, լսեր ու հասկացեր էր նրանց խոսածները ու երբ մեր դիմացը նստան, Ատոմը մոտեցավ պապուն և ըսավ.

— Պապ, այս մարդիկը կկարծեն, որ այդքան թանխաշ և կարագ ուտելուց և վրայից էլ պաղ թանը խմելուց հետո, եթե մեկ ժամ արևի ջերմություն տակ աշխատինք, բոլորս էլ կհիվանդանանք և իրենք սպասում են, որ բժշկական օգնություն ցույց տան մեզ և այդպիսով ապացուցեն իրենց քրիստոնեական ներողամտությունը հանդեպ անհավատ քրդերու:

Պապը ծիծաղեց և կարգադրեց, որ բոլորն էլ գործի ձեռնարկեն, իսկ Ատոմին խորհուրդ տվեց, որ ոտքերը լվանալու պատրվակով նստի նրանց առջևից հոսող առվի եզերքին և հետևի օտարականների խոսակցությանը: Ատոմը, որ լավ անգլերեն գիտեր, երբ մոտեցել էր առվակին և ոտքերը կախել ջրի մեջ, բժիշկը ասելիս էր եղել քարոզչին.

— Սպասենք վերջավորությունը և պատրաստ դառնանք օգնություն ցույց տալու այս աղետյալներին, որ թունավորվելու են արևի տակ աշխատանք սկսելուց մեկ ժամ հետո:

— Ինչպե՞ս,— հարցրել էր պատվելին:

— Տարօրինակ հարցում, շնկատեցիր ինչ կերան՝ ցորենով եփված թան, վրայից ջրի նման կարագ, և ամենավտանգավորը, տաք կերակուրի վրայից պաղ թան խմեցին և տաք արևի տակ ստամոքսին սեղմած պիտի աշխատին:

Բռտոները երբ այդպես խորհրդածելով կսպասեին աշխատավորների թունավորմանը, քաղվորները ժիր ու աշխույժ կերգեին.

Հասկը մաճգաղին, առաբ քաղվորին կկանչէ,  
լե-լե-յաճաճ...

Այսպես, պատվելին ու բժիշկը լսելով քաղվորի երգն ու քրքիշը և տեսնելով մանգաղի հունձը և ժիր ու աշխույժ բազուկների կապած խորձերի դեզերը, կմնան ապշած: Այն ատեն պատվելին հարցնում է գիտության մարդուն:

— Տարօրինակ նկատված հարցումս կմնա իր

ուծի մեջ, իսկական տարօրինակությունը այն է, որ մարդիկ ավելի աշխույժ և ավելի լարված կաշխատեն, քան «թունավորիչ» կերակուրը ուտելուց առաջ:

— Եւս լեռնաբնականները, ինչպես կտեսնեմ, ենթակա չեն գիտական կանոնների ազդեցության, այլապես դիտեր, թե ինչ կնշանակե ցորենով կարագ և թան ուտել և արևի տակ աշխատել ու շթունավորվիլ: Ոչ, միտոր Դիքսոն, այս մարդիկ վայրենի արարածներ և կամ իրենց մարմինը թունավորման վարժեցուցած վճռակներ են, լավ է հեռանալ և այս շրջանից, քանի դեռ փորձանքի չենք ենթարկված:

— Բոլորները հեռացան և այլևս ոտք չդրին մեր դուռը,— վերջացուց մամս իր պատմությունը:

\* \* \*

Հորս քույրս՝ Զարգարը, ծնած լեռնաշխարհի բարձունքներում, հասակ նետած լեռների ազատության և սարերի կենսուրախ մթնոլորտում, իր հասակակից հայ և քուրդ աղջիկների նման անվահեր, ճկուն և իր խիզախություններով բոլորից սիրված հայտնի ռազմիկներից մեկն էր: 16 տարեկանին նրան ամուսնացրել էին գյուղի լավագույն երիտասարդներից մեկի՝ Միլենթ-բաշի հաշիկ աղայի փոքր եղբոր հետ:

1895-ի հայկական կոտորածների ժամանակ ամուսինը սպանվել էր Կուլապի-ղաղե հալիլ աղայի տղու կողմից:

Հակառակ քաղաքական աննպաստ պայմաններին և իր վրա կատարած հսկողությանը, Զարգարը դիմում է փոխվրեժի: Կացուցությունը փրկելու և նոր արնահեղության առիթ չտալու համար որոշում են Զարգարին հեռացնել գյուղից և հոր ու ամուսնու տան անդամների համաձայնությամբ, ամուսնացնում են Երզնկայից մի ժամ հեռու ընկած դաշտային Բզվան գյուղի ամենահայտնի ընտանիքի միակ շահավիղի՝ Նշան Մելիքսեթյանի հետ: Նշանը իր գեղեցկությամբ, հասակով, մարմնի վայելչությամբ համապատասխանում էր Զարգարին, բայց զուրկ էր Զարգարի լեռնական անվահերության մի շարք գծերից, որովհետև խմիչքը, մշտական հարբեցողությունը նրան դարձրել էին կամազուրկ:

Մի օր Զարգարը քաղի ժամանակ կեսօրվան կերակուր է տանում ամուսնուն ու քաղվորներին և տեսնում է, որ հինգ գազազած թուրք հարձակվել են նրանց վրա ու անխնա հարվածում և ծե-

ծում են: տասից ավելի տղամարդկանց, որոնք փոխտնակ ընդդիմանալու և փոխադարձելու անիրավաբար իրենց խոշտանգող թուրքերին, աղաչում և պաղատում են, որ չսպանեն իրենց, իսկ երբ զոհը ստրկաբար աղաչում է, թուրքը ավելի անողոք է դառնում: Քաղվորներից մի քանիսի թեքն արդեն ջարդված են լինում, ճեղքված գլխից հոսող արյունը ծածկում է Նշանի դեմքը, և նա ուժասպառ գետին է տապալվում, երբ նրանց մոտ հայտնվում է Զարգարը և առանց որևէ տատամսուի ու բացատրության, վերցնում է սայլի երկար ցիցը և վրա ընկնում: Հինգ թուրքերից երեքը ընկնում են Զարգարի անխնա հարվածներից, չորրորդի ետևից հասնում և գլուխն է ձեռքում դեռ արտից դուրս չփախած, իսկ հինգերորդը ձողապրում և վազում է գյուղ օգնություն կանչելու:

Զարգարը առանց մտածելու հետևանքների մասին, թքում է քաղվորների երեսին, անվանարկում նրանց որպես գինովցած գեղցիներ, որպես տղամարդ ապրելու անարժան ստրուկներ և չորս վիրավոր թուրքերի դիակները թողած արտի մեջ, հեռանում է կովի վայրից ու նկատի ունենալով, որ աղաների թշնամության պատճառով հնարավոր չէ հայրենի գյուղը վերադառնալ, իսկ Բզվանում մնալ և ապրել այդ մարդկանց մեջ՝ անպատվաբեր ու անհանդուրժելի, անցնում է Եփրատը և ապաստանում առաջին պատահած քրդական գյուղում, ապավինելով նրանց օջախի պաշտպանությանը:

Քրդերը հաջորդ օրն իսկ Զարգարի խնդրանքով նրան ուղարկում են Դերսիմ և հանձնում Պաքո աղայի պաշտպանությանը՝ Հալճից տան բարեկամ և գործակից Սեգո պապուն:

\* \* \*

Դերջանը, որ գտնվում է Երզնկայի և Կարնո միջև, ընդարձակածավալ մի հովիտ է, որի բնակչության մեծամասնությունը հայեր էին՝ ժրաշան, աշխատասեր, ազնիվ հողագործներ, սակայն զուրկ Միրագների խիզախությունից:

Երզնկայի մոտերքում, Քեշիշդաղի ստորոտում էր գտնվում Ճիմին թրքական մեծ գյուղը, մոտերքում՝ Քերթաղ (Քարթաղ), Փշկըթաղ (Փերկշաթաղ) և Գալաոփճ (Գալաոփս) թրքական գյուղերը, բոլորն էլ նախկին հայեր, թրքացած 1604—1606 թթ. Զալալիների արշավանքների ժամանակ:

Եւս գյուղերի բնակչության գլխավոր դրաղ-

մունքը պաղտմշակութիւնը և այգեգործութիւնն էր:

Պտուղների ժամանակ մի քանի բեռ խաղող կամ զանազան պտուղներ էին տանում: Երգնկա-կարին խճուղին և ծախում ձամփորդներին: Այդ թրքացած հայերը, պտուղ ծախելու պատրվակով, հաճախ կողոպտում էին Դերջանից եկող անզնն հայերին, չէին սպանում, այլ վախեցնում և սայ-լերը դատարկելով ցորենից և այլ հացահատիկ-ներից, ետ էին վերադարձնում: Ծիմինցիների սարսափից դերջանցիները վախենում էին առան-ձին սայլերով երդնկա գնալ, մանավանդ գիշեր ժամանակ անցնել այդ տեղերից:

Դերջանի և Երդնկայի միջև, Պալապանի լեռ-ներում, Մհրաբերդի ստորոտում կար մի այլ գյուղ՝ Խնձորեկը, որը քրդախառն էր, պաշարված հար-յուրավոր քրդաբնակ գյուղերով:

Մի անգամ անհրաժեշտ գործով, գիշեր ժա-մանակ քաղար գնալու հարկադրանքով ճամփա-ին ելնում երեք խնձորեկցի՝ Անտոնը, Արամը և Նշանը, հասնում են Ծիմինի դիմաց: Ծիմինցիք խորհելով, թե եկողները դերջանցիներ են, դուրս են գալիս իրենց թաքստոցներից և բռնում բեռ-նատար ավանակներին ու ձայն տալիս:

— Հանձնվիր, թե չէ կսպանենք, աստված վկա:

Ծամփորդները առանց պատասխանելու թուր-քերի սպառնալիքներին, վրա են տալիս և իրենց հաստ ձեռնափայտերով (կոպալներ, որոնց ծայ-րերին երկաթից օղակներ և կամ գոգավոր մեխեր էին գամված) հարվածում թշնամուն ու բղավում:

— Այդպես հա՛... դուք ձեռք եք բարձրացնում խնձորեկցից վրա՛:

— Անխնա կոտորեցեք այս շներին,—գոռում է Անտոնը:

Հարված հարվածի ետևից է հասնում, մինչև որ հանձնվում են բոլորն էլ և ներողութիւն խնդ-րում ճամփորդներից, ապա պտուղներով բեռնա-վորված ավանակները խառնած իրենց գրաստնե-րին, քշում են քաղաք:

Ոչ մի բողոք չի լինում, վիրավորներին վերցը-նում են և գյուղի անվանի տանուտերերը սպա-սում են խնձորեկցիների վերադարձին ու դիմա-վորում շատ սիրալիր:

Ասլա Անտոնի կարգադրությամբ ետ են վերա-դարձնում ծիմինցիներից ավարի առած ավանակ-ները և դաշն կնքում, որ ամեն անգամ այդ ճամ-փով անցնելիս գիշերը ձայն տան՝ «Այդ մենք ենք գալիս» և պտուղներով հյուրասիրվելուց հետո, շարունակեն ճանապարհը:

Երկար տարիներ պահպանվում էր այդ կար-գը և փոխադարձ բարեկամութիւնը, հիմնված «Զերկ, օր չգերեն»-ի վրա:

\* \* \*

Օսմանյան սահմանադրութիւնն առաջին տա-րիներին Երգնկայի առաջնորդն էր հայտնի լեզ-վագետ և մահից չվախեցող քաջամարտիկ մի վե-դարավոր՝ էմանուել վարդապետ Պալյանը, որը կարճ ժամանակում հանրածանոթ դարձավ իր հանդուգն գործերով (հայերի պատուհաս լազ Զուլաի Մեհմեդի սպանութիւնը, հայոց թաղում հայկական բաղնիքի կառուցումը և այլն):

Երիտասարդ այդ վարդապետը ժողովրդական մարդ էր, անողոք թշնամի աղայականութիւն և պայքարում էր նրանց դեմ, պաշտպանելով քա-ղաքի և գյուղի աշխատավորների շահերը:

Գր. Լուսավորչի վանքի ուխտագնացութիւնից հետո նա փափագում է այցելել Պալապանի լեռ-նաշխարհը: Այս շրջանի ինքնակալ տերերն էին հայերին թշնամի Պալապան աշիրեթի պետ Կու-լագի-զադե Խալիլ աղայի տղաները՝ Գյուլ աղան, Ալի բեկը և Մեհմեդ աղան: Առաջնորդի նպա-տակն էր ուխտագնացութիւնն պատրվակի տակ հանդիպել Գյուլ աղային, որն իր տրամադրութիւն տակ ուներ ավելի քան 20,000 հրացանակիր, և այդ ծանոթութիւնն շնորհիվ կապ հաստատել Դերսիմի աշիրեթների հետ:

Որպես լեռնաբնակ գյուղացի և քրդերի հետ կապ ունեցող, առաջնորդին ս. Թորոս վանքը տանելու պարտականութիւնը վստահվեց տողե-րիս գրողին:

Երգնկայից ս. Թորոս ճամփի տեղում լսելով երկու օր էր, ուխտավորները առաջին օրը գիշե-րում էին խնձորեկում, ուր և գտնվում էր վերը հիշված աշիրեթապետի ապարանքը: Ուխտագնա-ցութիւնից երկու օր առաջ հասանք խնձորեկ և իջևանեցինք Հալճից տանը: Հաջորդ օրը առաջ-նորդին այցելութիւն եկան, Գյուլ աղայի առաջ-նորդությամբ, Թլակում բնակվող դերսիմցի Զու-լիատար զադեներից Մստաֆա և Հասան աղա-ները, Քեքոյի տղաները և ուրիշներ:

Առաջնորդի և աղաների միջև թարգմանի դերը ես էի կատարում: Առանց մանրամասնութիւննե-րի մեջ մտնելու, կարելի է ասել, թե կողմերի մի-ջև փոխադարձ հասկացողութիւն ստեղծվեց և երկուստեք շատ զոհ մնացին այս հանդիպումից: Ավանդական պիրանը ուտելուց հետո, աղաների

կողմից առաջարկվեց ջիւրիդ խաղալ (մականախաղ)։

Առաջնորդն առանց առարկելու ընդունեց հրավերը, Կրոնական տարազը, վեղարն ու փիլոնը կախեցին սրահից։ Նա ձի նստեց խտալական հեծելազորի ոչ պաշտոնական համազգեստով։ Խաղի առաջին իսկ շարժումից պարզվեց, որ վարդապետը կրոնական սքեմի տակ թաքնված անգերազանցելի հեծյալ մարտիկ է և ծանոթ ջիւրիդի սլայմաններին։ Նրորորդ հարձակումին խաղը դադարեցվեց։ Գլու աղան մոտենալով վարդապետին, ուսը համրուրեց։ Պալյան վարդապետը վարժ կելուով փոխադարձրեց, իսկ մյուսները, հակառակորդ կողմի խաղացողները, իրենց ջիւրիդները դրին վարդապետի ոտքերի առջև որպես սլայմաններ նշան։

Ջիւրիդը բրդերի աղգային խաղն էր համարվում։ Հարսանիքի, թղթատման և զանազան խրախուսանքների ծամանակ ջիւրիդն էր, որ հետաքրքրություն և խանդավառություն էր ստեղծում։ Սակայն տալիս իր սեփական նախադրյալն խաղ էր և վարդապետի տոնին էր խաղացվում։

Ջիւրիդը ձիարշավի ընդհանուր անունն էր։ Սակայն մեկը մյուսին խփելու ծառայող մի մեարերկարություն, ամուր և տոկուն փայտից պատրաստված նետեր էին, որոնք խրձի ձևով գտնվում էին հատուկ մարդոց մոտ, որոնք արձակված նետերը դետնից հավաքելու և արագ կերպով ձիավորներին վերադարձնելու պարտականությունն ունեին։

Քաջավարժ ձիավորները բաժանվում էին երկու թշնամի բանակի և 500—1000 մ տարածության վրա, իրար դիմաց շարք էին կազմում։ Դավուլ-զուռնան հնչեցնում էին խրոխտ ռազմի եղանակ, ձիերը սկսում էին վրնջալ ու խաղալ։ Այդ միջոցին թշնամի բանակից առաջին ձիավորը սրարշավ սլանում էր դեպի հակառակորդ բանակը, հասնում կենտրոնի բաժանման գծին և առանց կանգնեցնելու ձիու արշավի թափը, ձեռքի ջիւրիդը արձակում էր հակառակորդի բանակի կողմը և ձիու վազքի ուղղությունը փոխելով, մեծ ճարպկությամբ դիմում փախուստի։

Մինչ այդ, հակառակորդ բանակի առաջին ձիավորը, որ պատրաստ սպասում էր թշնամու նետարձակմանը, երբ նա նետը ձգած, ետ գառնալու էր պատրաստվում, խոյանում էր հակառակորդի վրա և նետահարում նրան դեռ բանակատեղ չհասած։

Ու այսպես շարունակաբար, մեկը մյուսին

օգնության փութալով, արշավը առնում էր իրական ճակատամարտի բնույթ։

Խիզախության, ճարպկության, քաջության և ձիավարության մրցումը տևում էր այնքան, մինչև կողմերից մեկին հաջողվեր գրավել հակառակորդի բանակատեղին և խորտակել ճակատը։

Կարգը եկավ հրաձգության։ Վարդապետը հրաժարվեց կրակել հրացանով։

— Դա պատվաբեր չէ ձեզ նման անվանի աղաների համար։ Նշան խփելու նպատակը հրացանը կրծքն տեղավորելով, ծունր դնելով, որևէ տեղ հենակ օգտագործելով կրակելը չէ, այլ առանց որևէ հենարանի, անսասան բազուկով պատյանից ատրճանակը հանելը, նշանին ուղղելը և դիպուկ կրակելը։

Աղաները շփոթվեցին, սկսեցին բրդերեն խոսել իրար հետ և խնդրեցին, որ հայտնեմ Մուրախաս էֆենդիին, որ պարզաբանե միտքը։

— Ծախարակ մը ունի՞ք ձեզ մոտ,— դառնալով տան տիրոջը, հարցրեց առաջնորդը։

— Կբերեմ,— պատասխանեցի, թաքցնելու համար տանտիրոջ այլայլումը։

— Համրի քսանհինգ քայլ և ճախարակը զետեղիր ս. Կարապետի խաչքարի վրա, պառկեցրու հորիզոնական, ծակը այս կողմը,— կարգադրեց, ապա դառնալով Գլու աղային։

— Խնդրեմ, աղա, կարգը ձերն է,— ասաց։

Ստեղծված շփոթը չէր անցել դեռ, տեղի ունեցած խոսակցությունից շշմել էին բոլորն էլ, կացությունը փրկելու համար աղաների կողմից խնդրեցի առաջնորդին, որ ինքը կրակե նախապես, որպեսզի աղաները տեսնեն։

Հրավերը կրկնել չտվեց, վերցրեց ատրճանակը, նշան առավ ու կրակեց, գնդակը ճախարակի փոքր ծակից անցնելիս, երկուքի բաժանեց այն, առանց որևէ հետք թողնելու խաչքարի վրա, ապա դառնալով աղաներին, ասաց։

— Գուցե պատահականության վերագրվի, փորձենք երկրորդը։

Այս անգամ պարտեզի դռան ամրացնել տվեց թրքական երկու ղուրուշնոզ մի արծաթե դրամ և ավելցուց։

— Դիտեցեք թուրայի կողմը։

Գնդակը ծակել էր թուրան։

Դեպքն այնքան անսպասելի, հարվածն այնքան շշմեցուցիչ էր, որ ներկաներից ոչ ոք չհամարձակվեց խոսել, այն ատեն առաջնորդը խոսքն ուղղելով աղաներին, ասաց։

— Կտրգը ձերն է, խնդրեմ փորձեցեք։

իչ ոք ներկաներից չշարժվեց տեղից, բոլորն էլ գլխահակ և սրբազան երկյուղածությամբ մոտեցան առաջնորդին և այս անգամ փորձեցին ձեռքը համբուրել: Նա թույլ չտվեց և մոտենալով Գյուլ աղային, համբուրեց նրա ճակատը:

Ոյս դեպքի լուրը հավարի ձևով հասցվեց մինչև Դերսիմ և առաջնորդի անունը փառաբանվեց սարից-ստր:

Հաջորդ օրը հիսուն ձիավոր ուղեկցեց մեղ մինչև Թամբրասրթը և երկարատև հրաձգությամբ ողջերթ մաղթեցին օրվա մեծ հյուրին ու խնդրեցին վերադարձին պատվել իրենց օջախը:

Վանքում շտեմնված բազմություն էր, այն իր բոլոր շենքերով չէր կարող պատսպարել ուխտավորներին, թոնրատները, կրակատները, տանիքները լցված էին ուխտավորներով, որոնց մեջ մեծ թվով գերջանցիներ կային:

Ամեն շրջան բերել էր իր նվազը, խնձորեկցիներն ունեին երկու զուռնաչի՝ հանրածանոթ Մանասելենց Օհաննեսը և իր տղան՝ զուռնաչի Նշանը, երկու աղմկարար դհուլներով:

Տիզի հեռավորության պատճառով դերջանցի ուխտավորները նվազողներ չէին բերել:

Էմանուել վարդապետ Պալյանի կարգադրությամբ խնձորեկցիների զուռնաչիներից մեկը դերջանցիներին տրամադրվեց:

Հնդհանուր խրախճանքի ընթացքին վանքի կալերում տուր ու դմփոցի ձայներ լսվեցին, պարողները խառնվեցին իրար, լուր տրվեց վարդապետին՝ դեպի Լուսաղբյուր հալածողներ և հալածվողներ կային: Վարդապետը ձի նստեց իր փոքրավոր Սամսունի հետ և կարգադրեց, որ մի քանի հոգի հետևեն իրեն:

Հասանք Լուսաղբյուր, արգելեցինք հալածողների առաջխաղացումը, ձայն տվինք փախչողներին, որ կանգ առնեն:

Կարձ քննությունից պարզվեց, որ դերջանցիները չեն բավարարվել մեկ զուռնաչիով և փորձել են բռնությամբ գրավել խնձորեկցիների երկրորդ զուռնաչին, պատճառաբանելով, թե նրանք քչվոր են և, հակառակ միջամտության բոլոր փորձերին, դերջանցիք համառել ու վեճը խորացրել էին:

15 խնձորեկցիներ 150-ից ավելի դերջանցիների առաջներն առած, քշել էին դեպի ձորը, ապա Լուսաղբյուր:

— Այ մարդիկ, ինչո՞ւ էիք փախչում, ինչո՞ւ այր մարդու նման տեղն ու տեղը բռնցքահար չարիք այս բուռ մը տղոց, ամոթ, հազար ամոթ ձեզ,— նախատեց առաջնորդը դերջանցիներին:

Վեճը հարթվեց, դժվարավ հանդարտեցրին վարդապետի վրդովմունքը, նա կանգ առավ Լուսաղբյուրի հաստաբուն ավանդական բարդու առջև և իր մոտ կանչեց հալածողներին:

— Մի քաշվիք, առաջ եկեք, որ համբուրեմ ձեր ճակատները, դուք պատմական մեր ժողովրդի հարազատ զավակներն եք, Սասնա ծռերի սերնդից:

Մեղապարտի կեցվածքով 15 երիտասարդներ առաջ անցան, մոտեցան սրբազանի աջը համբուրելու: Նա գրկեց ու համբուրեց բոլորին, ապա դառնալով դերջանցիներին, ասաց.

— Եկեք և համբուրվեցեք, սրանց կորով և քաջություն ներշնչող աստվածը թող օգնե ձեզ, որ կռակ չդարձնեք, այլ կովեք ճակատ առ ճակատ, բայց ոչ թե հայը հայուն հետ, այլ հայը իր թշնամուն դեմ: